ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**74**-րդ տարի) **Թիվ-11** (1645) *Նոյեմբեր 2020*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Ա. Շ.
Պայքար, որի վախճանն է փրկություն (էջ 1-2)

2- Հարցազրույց
ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Խաչերեանի հարցազրոյցը «Վանայ ձայն» ձայնասփիւռի կայանին
Հայրենիքն ու հայութիւնը դէմ յանդիման Արցախի պարտուողական համաձայնութեան (էջ 3-6)

3- Քաղաքական
***Հրանտ Մարգարյանի խոսքը՝ Արցախ մեկնող ՀՅԴ կամավորներին** (էջ 7)*
***ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը** (էջ 8)*

4- Դաշնակցական բեմ
Արտաշես Շահբազյան
Դաշնակցականի ճանապարհը (էջ 9)

5- Իրավաքաղաքական
Գևորգ Ղուկասյան
Արցախի Հանրապետության անկախության հռչակման իրավաքաղաքական հենքը (էջ 10-11)

6- Տարածաշրջանային
Վարդան Հակոբյան
Արցախյան հակամարտության կարգավորումը փորձություն Ռուսաստանի համար (էջ 12-14)
Վահե Սարգսյան
Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը և Վրաստանը (էջ 15-19)

7- Աշխարհաքաղաքական
Հրաչ Վարժապետեան
Արցախի պաշտօնական ճանաչումը, Ֆրանսան եւ մասամբ նորին (էջ 20-21)

8- Գաղափարական
Վաչէ Բրուտեան
Հայ քաղաքական միտքի նորագոյն մարտահրաւէրը՝ այս պատերազմը (էջ 22-24)

9- Դաշնակցական բեմ
Շողիկ Աշըգեան
Ապագայի կուսակցութիւն (ՀՅԴ հայրենացման երեսունամեակին առիթով) (էջ 25-29)

10- Պատմության լուսարձակ
Անի Մելքոնյան
Իրադրությունը Հայաստանի Հանրապետությունում 1920 թ. նոյեմբերին: Հանրապետության անկումը (էջ 30-32)
Խաչատուր Ստեփանյան
Արցախցիները Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում (էջ 33-35)
Դերենիկ Մելիքյան
ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնը Ատրպատականում (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) (էջ 36-43)

11- Ընկերական Զրույցներ
Վրէժ-Արմէն
Համաներո՞ւմ (էջ 44)

Պայքար, որի վախճանն է փրկություն

Ա. Շ.

Հայ ժողովուրդը արյունով ու արցունքով գրում է իր պատմության սև էջերից մեկը: Պարտադրված պարտությունը ոչ միայն կորուստ է հայրենի հողի, տան, ինչքի, հարազատի գերեզմանի, խաչքարի ու եկեղեցու, նորահաս սերնդի, նվաճված ազատության, ապրած տարիների, ապագայի երազանքի, այլև բզկտված հայրենիքի վաղվա օրվա ապահովության: Պարտվե՞ց հայ ժողովուրդը, որտե՞ղ և ինչպե՞ս պարտվեց, պարտվեց հայրենիքի փրկության կրակների մեջ նետվելու իր պատրաստակամությա՞մբ, պարտվեց անհավասար կռվի մե՞ջ, անօրինակ սխրանքների ու ինքնազոհաբերման բովո՞ւմ, հանուն մեկ թիզ հողի զավակին մատաղելու հայ մոր աստվածային զոհաբերությա՞մբ, թե՞ հայրենիքի փրկության համար մեկ բռունցք դառնալու իր համազգային գիտակցությամբ: Հայ ժողովուրդը չպարտվեց, բայց նրան հաղթեցին:

Հայ ժողովրդի դեմ դուրս եկան 90 միլիոնը գերազանցող բնակչությամբ երկու պետություն, համաշխարհային ահաբեկչական շարժումը՝ միջազգային մարդասիրական օրենք չճանաչող իրենց վայրենի էությամբ ու ձեռագրով, արդարի հանդեպ ողջ աշխարհի կամազուրկ կարեկցանքի և զավթիչի նկատմամբ քաջալերող լռության պայմաններում:

Հայ ժողովրդին հայրենական պատերազմ պարտադրվեց այն պահին, երբ իր վայ-առաջնորդները պառակտել էին ազգը, կոտրել էին նրա ոգին, աղավաղել էին ազգային գիտակցությունը, հալածել ու մեկուսացրել էին նրանց, ովքեր կառավարելու և պատերազմելու փորձառություն ունեին, երբ ամբարտավան խոստումների ներքո խաթարված էր երկրի զարգացման ընթացքը, պետությունը կորցրել էր իր վարկը, բարեկամին ու դաշնակցին, և ապազգային օտարասուն տարրը զբաղված էր սեփական բարեկեցության ապահովման և երկրի սեփականության վերաբաշխման ընչաքաղց մրցավազքով:

Այս լինել-չլինելու հերոսամարտում հայ ժողովրդին առաջնորդեց ինքնագոհ, տգետ, ազգային իդեալներից և պատկերացումներից զուրկ, կառավարելու ու պատերազմելու փորձառություն չունեցող բախտախնդիր մեկը, որի համար հողի, հայրենակցի ճակատագիրը ստորադաս էր սեփական իշխանության անսասանությունը ամեն գնով պահպանելու գերնպատակին: Ոճրագործության հասնող անպատասխանատվությամբ նա ամեն ինչ ենթարկեց իր բացարձակ կամքին և այս մոլախաղի մեջ խայտառակ կերպով ձախողեց ազգի լինելիության գոյամարտը: Հետո սեփական իշխանությունը պահպանելու գերխնդիրը օտարների կողմից երաշխավորված տեսնելու համար նա գաղտնաբար, յուրացնելով իրեն չպատկանող սահմանադրական իրա-վասությունները, պարտվողագիր ստորագրեց՝ ընդունելով պարտադրված բոլոր պայմանները, չառաջադրելով և փոխարենը չստանալով ոչինչ:

Բայց նույնիսկ այսքանով հայ ժողովրդի ողբերգությունը չի ավարտվում: Վայ-առաջնորդի առաջ հեռանալու պայման է դրվում՝ նոր մարդկանցով, այս անգամ քաղաքական-դիվանագիտական նոր պայքար սկսելու համար՝ հնարավոր առավելագույնը փրկելու փափագով: Ապազգային բախտախնդիրը, սակայն, ոչ մի դաս չի քաղել, նրան չի հուզում ո՛չ հայրենի հողի, ո՛չ նրա ապագայի սերնդի կորուստը, նա ամեն գնով կառչած է աթոռից և հանուն դրա պահպանության որոճում է նոր դավեր ու բռնություններ ազգային փրկության երազանքը փայփայողների նկատմամբ:



Նա ցանկանում է ապահովել պայմաններ, երբ կկարողանա հայրենիքի մեկ հատվածը ծախելու, իսկ մյուսի ապագան թուրքական ուժից կախման մեջ դնելու դավադրությունը հասցնել իր ավարտին:

Ինչ ապագա է ունենալու հայկական շունչը պահպանած արցախյան վերջին հողակտորը՝ առանց կարգավիճակի, որ նշանակում է կարգավիճակ Ադրբեջանի կազմում: Ինչ կլինի հողից կառչած արցախահայության հետ հինգ տարի անց, երբ Ադրբեջանի պահանջով ռուսական զորքը լքի տարածքը: Ինչը կստիպի Ադրբեջանին չփակել Բերձորի միջանցքը, ինչպես կապում են պարկի բերանը:

Վարդենիսից մինչև Մեղրի Հայաստանի սահմանին նստած թուրք-ադրբեջանական հորդային ինչը կստիպի պղտոր հեղեղի պես չհորդալ ու ծածկել Հայաստանը, երբ Ռուսաստանը սուզվի հերթական հեղափոխական ալեկոծության մեջ, կամ իշխանության գա թուրքասեր բոլշևիկակերպ հերթական իշխանությունը: Դավադիր գործարքի հետևանքով արցախյան հակամարտության հետ առնչություն չունեցող Մեղրիով թշնամուն հանձնվելիք ճանապարհի համար ինչ երաշխիք կա, որ ամբողջությամբ չի տնօրինվելու վերջինիս կողմից կամ ուղղակիորեն չի գրավվելու: Ունի՞ այս հարցերի պատասխանը Հայաստանի մեծամիտ ու աթոռապաշտ միապետիկը: Իր իսկ խոստովանությամբ՝ այդ ամենը անորոշ է: Եթե դեռ թուրքական ոտնձգության չենթարկվածի ապագան անորոշ է, ապա որոշակի է այն, ինչ թշնամուն հանձնել է երկրի ամբողջականության ապահովման թիվ մեկ պատասխանատուն:

Պարտության այս խայտառակ գործարքից հետո կամավոր չհեռանալն ու ազգային համախումբ ուժերին փրկության ուղիներ որոնելու հնարավորություն չընձեռելը այլ անուն չի կարող ունենալ, բացի դավաճանությունից: Կա այն, ինչ կա: Մի իրողություն, որի հետ երբեք չի կարելի հաշտվել, իսկ անօրինական գործարքի վկայագիրը մի օր պատռվելու ու դեն է նետվելու: Կանգնած ենք ճակատագրական ընտրության առաջ, իսկ հայրենիքը հայրենասերի համար սակարկության առարկա չի կարող լինել: Այս պայքարը մեկ վախճան միայն կարող է ունենալ, որի անունն է հաղթանակ:

Հայրենիքն ու հայութիւնը դէմ յանդիման Արցախի պարտուողական համաձայնութեան

ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Խաչերեանի հարցազրոյցը «Վանայ ձայն» ձայնասփիւռի կայանին

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչպէս և ինչու նման պարտուողական կացութեան առջև կանգնեցաւ հայութիւնը, ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Խաչերեանը ըսաւ, թէ եղածը կուտակուած սխալներու հետևանք էր, որմէ զերծ չի մնար որևէ քաղաքական կողմ, բայց և այնպէս, պատասխանատուութեան չափը կը տարբերի, մանաւանդ եթէ նկատի ունենանք այն հսկայական աւերը, որ գործուեցաւ վերջին փուլին: Ըստ անոր՝ արձանագրուած հետևանքներէն ակնյայտ է, որ այս իշխանութիւնը իր երկուքուկէս տարուան գործունէութեամբ և յատկապէս իշխանութեան միանձնեայ ղեկավարը կը կրեն այդ սխալներուն մեծագոյն բաժինն ու ամբողջական պատասխանատուութիւնը:

Խօսելով ժողովրդային շարժման մասին՝ Յ. Խաչերեան յայտնեց, թէ օրին ան յուսադրեց բոլորը, աւելի պայծառ ապագայի, աւելի ամուր հայրենիքի և աւելի բարգաւաճող միջավայրի ակնկալութիւն ներշնչեց, բայց և այնպէս, ժամանակն ու փաստերը ցոյց տուին, որ այդ ամէնը խաբկանք է, ոչ իրական աշխարհ մըն է:

«Սկսինք ժողովրդավարութիւն և ընկերային արդարութիւն հաստատելու խոստումներէն: Օրերը եկան փաստելու, որ իշխանութեան առած բոլոր քայլերը տրուած խոստումներուն հակառակ ուղղութեամբ ընթացան. կազմուեցաւ Ազգային ժողով մը, ուր կայ բացարձակ մեծամասնութիւն մը, ինչ որ ժողովրդավարութեան դէմ է լիովին, իսկ ընդդիմադիր կուսակցութիւններուն արտայայտուելու և գործելու կաշկանդումներ եղան՝ բիրտ ոճով կամ պատգամաւորներու հալածանքով, բանտարկութեամբ, գաղտնալսումներով, բազմակարծութեան արգիլումով, հասան մինչև սահմանադրական օրէնքներու կոպիտ խախտումի, դատական գործընթացի արգելակման, Ազգային անվտանգութեան ծառայութեան մէջ եղած շարունակական փոփոխութիւններուն և այլն: Այս բոլորը ցոյց տուին, որ Հայաստան շատ հեռու է ժողովրդավար երկիր ըլլալէ: Յակոբ Խաչերեան հաստատեց, որ համացանցային հարթակներու վրայ և իշխանութեան հովանիին տակ կը գործէ կեղծ լրատուութեան բանակ մը, որ կը գործէ ժողովուրդին միտքը ստրկացնելու, անոնց հոգիները բռնաբարելու ուղղութեամբ: «Այս վախի մթնոլորտն է, որ ստեղծուած է Հայաստանի մէջ, ինչ որ կը մղէ եզրակացնելու, թէ ժողովրդավարութիւնը դժուար թէ վերականգնի այս իշխանութեան տիրապետութեան օրերուն»,- հաստատեց Յակոբ Խաչերեան:

Նախորդ իշխանութիւններուն վերադառնալու

ձախից աջ Յակոբ Խաչերեան, Վիգէն Ավագեան

մթնոլորտին մասին մնայուն կերպով խօսելու ներկայ իշխանութիւններուն քաղաքականութեան վերաբերող հարցումի մը պատասխանելով՝ Բիւրոյի անդամը յայտնեց, որ ՀՅԴ-ի դէմ եղած կեցուածքներուն մէջ միշտ ակներև է անցեալին վերադառնալու ամբաստանութիւնը: «Մենք մեր առաջին հաւաքին՝ 2019-ի կէսերուն Օփերային հրապարակին վրայ, յայտարարեցինք, թէ անցեալին վերադարձ չկայ, որովհետև մենք ևս դժգոհ էինք անկէ: Բայց ժամանակը ցոյց տուաւ, որ ներկայ իշխանութիւնը տարբեր չէ նախկիններէն, միայն դիմակներն են փոխուած: Նոր դիմակը աւելի նենգ, վախազդու և տժգոյն է»,- յայտնեց ան՝ աւելցնելով, որ այս իշխանութիւնը նաև շերտաւորեց հայութիւնը Հայաստանի մէջ թէ անկէ դուրս՝ «բաժնէ, որ տիրես» սկզբունքով առաջնորդուելով:

Յ. Խաչերեան դիտել տուաւ, որ արտաքին ճակատի վրայ ասիկա ամէնէն տխուր ժամանակշրջանն է մեր միջազգային յարաբերութեանց առումով, իսկ Դաշնակցութիւնը, փաստօրէն, եղաւ արտահայաստանեան քաղաքականութեան շրջուն թարգմանը՝ իր Հայ դատի և կուսակցութեան գրասենեակներով, որոնք քաղաքական տեսանկիւնից կատարեցին այն աշխատանքը, որ ենթադրաբար պէտք է կատարեր արտաքին գործոց նախարարը: Իբրև օրինակ ան յիշեց, թէ ինչպէս վերջին 45 օրերուն ընթացքին ՀՅԴ գրասենեակները արտաքին գործոց նախարարին կողքին վարեցին արտաքին քաղաքականութիւնը, յարաբերական աշխատանքները տարբեր ձևերով և այլազան մակարդակներու վրայ:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչ է իր մօտեցումը պատերազմի փուլին դրսևորուած ազգային միասնականութեան, Դաշնակցութեան մեծ ընտանիքի զօրաշարժին, հայ զինուորին ցուցաբերած մարտունակութեան և հերոսական երևոյթներուն

վերաբերեալ, Յակոբ Խաչերեան ըսաւ. «Մենք միշտ եղած ենք ամուր, կուռ, միակամ, երբ թշնամին կայ: Ատիկա բնական է, հայը չի կրնար այդպէս չըլլալ, և կը յուսամ՝ բոլորիս ալ համոզումն է, որ պատերազմը չէ վերջացած, թշնամին տակաւին կայ և պիտի մնայ, մինչև որ մենք յաջողինք թուղթերու վրայ արձանագրուած այս պարտութիւնը և պատերազմի դաշտին վրայ արձանագրուած նահանջը վերածել յաղթանակի: Այս օրերուն առաջին փուլով աշխատանք կը տարուի, որպէսզի աւելի ծանր, անտեսանելի այլ հետևանքներ ալ չընդգրկեն այս յայտարարութեան յաջորդելիք բանակցութիւնները»,- ընդգծեց Յ. Խաչերեան:

Յաջորդ հարցումը կը վերաբերէր նախորդ երկուքուկէս տարուան ընթացքին Արցախի տագնապին գծով Դաշնակցութեան տարած աշխատանքներուն: Յակոբ Խաչերեան յիշեցուց, որ, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, ՀՅԴ-ն իր նախորդ Ընդհանուր ժողովը գումարեց Արցախի մէջ անկախ Հայաստանի հողերուն վրայ գումարած առաջին Ընդհանուր ժողովէն ճիշդ հարիւր տարի ետք: «Ասիկա փաստացի ազդանշան մըն էր, որովհետև մեր բոլոր մակարդակի ժողովներուն ընթացքին Հայաստանն ու Արցախը առաջնակարգ օրակարգի վրայ եղած են: Ժողովներէն դուրս ևս՝ մեր գործնական աշխատանքին մէջ: Այդ ժողովէն անմիջապէս ետք մենք ունեցանք ռազմաքաղաքական դաշինքի կնքման և կարևորութեան գծով ֆորում, աւելի ուշ՝ ամրան, ունեցանք Հայ դատի գրասենեակներու միջազգային համագումարը կրկին Արցախի մէջ: Բնական դարձած էր մեր և մեզի ուղեկից բոլոր կազմակերպութիւններուն աշխատանքներու ծաւալումը Հայաստանի կողքին, երբեմն ալ աւելիով՝ Արցախի տարածքին՝ շրջանային թէ միջազգային ժողովներուն զուգահեռ: Նիւթական ներդրումներու իմաստով ևս ՀՅԴ համակիրներ տարբեր ձևերով՝ հանգանակութիւններ կամ այլապէս, չեն զլացած իրենց լուման ներդնելու բազմաբնոյթ ծրագիրներու, որոնց կիզակէտը Արցախն ու անոր բարգաւաճումն է: Այս բոլորով հանդերձ՝ կ'ըսեմ, որ ինչ որ տուած ենք Արցախին, անբաւարար է, կրնայինք աւելի՛ն տալ թէ՛ ազգովին և թէ՛ իբրև Դաշնակցութիւն»,- շեշտեց Յ. Խաչերեան՝ հաստատելով, որ Արցախը միշտ ալ աւելին կ'արժէ:

Վ. Աւագեան անդրադարձաւ այն հարցին, թէ ստորագրուած նոր յայտարարութեան լոյսին տակ արդեօք այս բոլոր ներդրումները, գործունէութիւնը, իրականացած ծրագիրները, տարուող և ընթացքի մէջ եղող աշխատանքները յօդս ցնդեցան: «Մեր կամքը ամուր է, տրամադրութիւնները առկայ են: Երբեմն աշխարհաքաղաքական շահերը մեր կամքէն աւելի զօրաւոր կրնան ըլլալ, բայց մնայուն չեն անոնք, որովհետև չկան մնայուն կապեր ու մնայուն շահեր, ուրեմն այս դրուածքը կրնայ փոխուիլ ապագային: Մենք պէտք է միշտ պատրաստ ըլլանք այդ փոփոխութիւններուն: Մենք այսօր կը գտնուինք ալեկոծ ծովու վիճակին մէջ, միշտ տրամադրուած ըլլանք ու ծրագրենք՝ առանց վայրկեան մը իսկ մտածելու, որ մենք կրնանք ընկրկում ունենալ: Պէտք է մեր կամքը

Հայ դատի խորհրդաժողովը Արցախում

միշտ անկոտրում պահել»,- յայտնեց Յ. Խաչերեան:

Ներկայ կացութեան անդրադառնալով՝ ՀՅԴ Բիւրոյի անդամը յայտնեց, որ այսօր կը գտնուինք ալեկոծ ծովու մը մէջ, որ պէտք է իր աղբերը թափէ դուրս և ինքզինք վերագտնէ:

«Մենք վերջին փուլին տեսանք ազրպէյճանական և թրքական միացեալ ռազմափորձեր, բայց մեր Ազգային անվտանգութեան ծառայութեան պատասխանատուները պէտք է գիտնային, որ մարզումներ կ'ըլլային, և անոնք պէտք է նկատէին, որ այդ մարզումներէն ետք զինամթերք կը կուտակուէր Ազրպէյճանի մէջ, և մարզումները կը կատարուէին թուրք սպաներու կողմէ: Անոնք պէտք է նկատէին այն, ինչ որ տնտեսագէտներ նկատած էին, թէ տնտեսական մագլցում արձանագրուած է Ազրպէյճանի զինուորական պիւտճէին մէջ վերջին երկու տարուան ընթացքին, և թէ անիկա պիտի գործածուի պատերազմի ընթացքին, իսկ Ազրպէյճանի միակ թշնամին Հայաստանն է ու Արցախը:

Դիւանագիտական մարզին մէջ ևս, բացի Արտաքին գործոց նախարարութենէն, ընդհանուր անճրկում տեսանք դեսպաններէն, որոնք պէտք եղածին պէս պատրաստուած չէին՝ հակառակ մեր բազմաթիւ յիշեցումներուն: 2016-ին ալ նոյնը եղաւ. ազրպէյճանական դիւանագիտութիւնը յաղթեց հայկականին, և այն, ինչ որ օրին ըրին, այս օրերուն ալ նոյնը կրցան ընել ազրպէյճանցիները՝ օգտագործելով մամուլը, ընկերային հարթակները և տանելով յարաբերական աշխատանք: Մենք թերացանք ճշմարտութիւնը բացայայտելու մէջ, չկրցանք ցոյց տալ, որ կեղծ է այն թէզը, որ Ազրպէյճան կ'ուզէ վերատիրանալ իր «պատմական հողերուն», կը կռուի իր «հողերու ամբողջականութեան համար», քարոզչական և յարաբերական անհրաժեշտ արշաւը չկատարեցինք, չկրցանք համոզել աշխարհը, որ մեր դատը արդար է, չկրցանք վերադառնալ մեր չորս հազար տարուան պատմութեան, իսկ իրենք ցոյց տուին իրենց հարիւր տարուան պատմութիւնը՝ ըսելով, որ ասոնք իրենց հողերն են»,- նշեց Յ. Խաչերեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանին հետ ՀՅԴ յարաբերութեան անդրադառնալով՝ Յ. Խաչերեան ըսաւ. «Վերջին տասը օրերուն վարչապետին հետ հանդիպումի մեր դիմումին պատասխանը չորս

օր սպասել ետք ժխտական էր: Անկէ առաջ ալ կայացած մեր հանդիպումներուն մեր արտայայտած մտահոգութիւնները լսող կար, բայց ոչ ընկալող: Բայց և այնպէս, մենք միշտ ալ կը մնայինք ամուր և կը շարունակէինք մեր յարաբերական, դիւանագիտական, նուիրահաւաքի աշխատանքները: Նաև մենք է, որ կը ֆինանսաւորէինք մեր կամաւորական ջոկատները: Ասկէ վերջ նոր պահ է, նոր ալիշով պէտք է շարունակենք աշխատանքը»,- ընդգծեց Յ. Խաչերեան՝ հաստատելով, որ այս պատերազմը պարտուած ենք, սակայն տակաւին յաղթելիք այլ պատերազմներ կան, և անոնց համար պէտք է աշխատանքի լծուիլ:

Արցախեան պատերազմին սահմանագիծին մէջ դաշնակցական վաշտերուն և անոնց դերակատարութեան, ինչպէս նաև քաղաքական մակարդակի վրայ իբրև համախմբող ուժ տարած աշխատանքին մասին ան ըսաւ. «Չեմ ուզեր արժևորել, հայ ժողովուրդը ի՛նք թող արժևորէ, և վստահ եմ՝ պիտի արժևորէ: Մենք այս անգամ ալ ունեցանք նահատակներ, օրինակ՝ մեր հաստատութիւններէն մէկուն մէջ աշխատող նահատակին յղի կինը անոր դագաղին ետև քալեց և երկու օր ետք ծնունդ բերեց: Ասիկա նոր երևոյթ չէ Դաշնակցութեան և դաշնակցականներուն համար, միշտ ալ այդպէս եղած է, երբ օրհասական պահը հնչած է:

Պատերազմի առաջին օրը՝ սեպտեմբեր 27-ի առաւօտուն, մենք ՀՅԴ Գերագոյն մարմինի միջոցով եղանք վարչապետին կապուող առաջիններէն և մեր պատրաստակամութիւնը յայտնեցինք մեր կառոյցներով ու կարողութիւններով ծառայելու Հայաստանին ու հայութեան: Քանի մը ժամ ետք մեր առաջին վաշտի հերոսները արդէն հաւաքուած էին Արամ Մանուկեանի արձանին մօտ, վերանորոգեցին իրենց ուխտը և մեկնեցան ճակատ: Յաջորդող օրերուն նորանոր վաշտեր հետևեցան անոնց»,- դիտել տուաւ Յակոբ Խաչերեան՝ աւելցնելով, որ Դաշնակցութեան կատարածին գնահատականը պէտք է տայ ժողովուրդը:

Քաղաքական առումով ՀՅԴ Բիւրոյի անդամը յայտնեց, որ 27 սեպտեմբերին միւս կուսակցութիւններուն հետ համատեղ գումարուեցաւ զօրակցական հաւաք, երկրորդ հաւաքը եղաւ օրեր ետք, երբ տեղեկութիւններ ստացանք այն մասին, որ հարցերը չեն ընթանար փափաքելի հունով: Հոկտեմբեր 12-ին Բիւրոյի ներկայացուցիչն ու նախագահը մեկնեցան Արցախ և հանդիպում ունեցան Արցախի ներկայիս նախագահ Արայիկ Յարութիւնեանի, նախկին նախագահ Բակօ Սահակեանի, Արկադի Ղուկասեանի, Ռոպերթ Քոչարեանի, Վիթալի Բալասանեանի, Արցախի հայոց թեմի առաջնորդ Պարգև արք. Մարտիրոսեանի հետ կէսգիշերէն մինչև յաջորդ օրը կէսօր: Բոլորին ալ առաջարկ եղած էր, որ պէտք է որոշ փոփոխութիւն մտցնել մեր արտահայաստանեան քաղաքականութեան մէջ, այս պարագային՝ դէպի Ռուսիոյ, և համախմբել մեր կարողականութիւնը, յատկապէս մարդուժը, որ կրնայ որոշ ուղղութիւն և լիցք տալ ստեղծուած այս իրավիճակին: Այդ օրերուն արդէն

կորսնցուցած էինք Ֆիզուլին, Հատրութի շրջակայքը, բայց կը յայտարարուէր, թէ կացութիւնը այդպէս չէ: Մենք կը գտնուէինք բարձունքներուն, բայց տէրը չէինք այդ շրջանին, չեմ ուզեր աւելին ըսել: Նոյն օրը վերադարձան, հանդիպում ունեցան վարչապետին հետ: «Զգուշացուցինք, յիշեցուցինք, լսող կար, բայց մտիկ ընող չկար»,- ըսաւ Յ. Խաչերեան՝ աւելցնելով, որ երբ գործնական ոչինչ շօշափուեցաւ, խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցութիւններու համախմբումով յայտարարութեամբ հանդէս եկան:

«Մեր առաջարկը սահմանադրական յօդուածով արդէն սահմանուած կարելիութիւն է, ո՛չ յեղաշրջում, ո՛չ իշխանափոխութիւն, ուժերու համախմբման մասին էր խօսքը, որովհետև պահը օրհասական էր: Հարցը հոն այլևս քաղաքական չէր: Մենք առաջարկեցինք վստահութիւն ներշնչող նախկին քաղաքական ծանօթ դէմքերէ, բանակին մէջ վաստակ շահած և վստահելի անձնաւորութիւններէ կազմուած յատուկ մարմին մը ստեղծել, և ըսեմ, որ առաջարկուած այդ անձնաւորութիւններու անուններուն մէջ ոչ մէկ դաշնակցականի անուն կար: Մենք ո՛չ իշխանութեան կը ձգտէինք, ո՛չ ալ կ՚ուզէինք յանձնախումբերու մէջ ըլլալ, այլ մեր նպատակն էր օգտակար ըլլալ, որպէսզի այս վիճակին չհասնինք, այլ հոգեկան փոփոխութիւն յառաջացնել և մեր բանակը զինել հարկ եղածին պէս»,- շեշտեց Յ. Խաչերեան: Ան յայտնեց, որ եղաւ փուլ մը, երբ արցախեան օդային տարածքը ամբողջապէս գտնուեցաւ ազրպէյճանական-թրքական տիրապետութեան տակ, այդ օրերէն ետք էր, որ մեծ կորուստներ արձանագրուեցան, և պատերազմի շրջադարձը սկսաւ՝ ի վնաս հայկական կողմին:

Վերջին բաժինով Յ. Խաչերեան խօսեցաւ Նիկոլ Փաշինեանի ստորագրած յայտարարութեան մասին՝ իբրև ձևի և բովանդակութեան:

«Անին ծախուեցաւ»-էն ալ աւելի գէշ էր ասիկա, հայ ժողովուրդի արժանապատուութիւնը, հայոց պետականութիւնը, Արցախի Հանրապետութիւնը ծախուեցան:

«Չենք հաւատար, որ ասիկա պատերազմի դաշտին վրայ եղած բարդութեան արդիւնք ծրագիր էր, ծրագիրի աւարտն էր թերևս: Հայաստանի մէջ թէ անկէ դուրս ապրող ոչ մէկ ողջմիտ անձ կրնայ ըսել, որ թաւշեայ յեղափոխութենէն ետք բանակցային

առումով որևէ յառաջխաղացք արձանագրուեցաւ Արցախի տագնապին գծով: Այն սուտը, որ կը տիրէր պատերազմական օրերուն, տիրական էր նաև քաղաքական գործընթացին մէջ, որուն գծով վարչապետը կը յայտարարէր, որ բանակցութիւնները տակաւին պիտի սկսին զերոյէն, իր վարչապետութեան օրերէն, և որ Փաշինեան այս հարցով պիտի դիմէր ժողովուրդին՝ առանց անոր կարծիքին ու տեսակէտին ոչ մէկ որոշում տալով: Նաև ան յայտարարած էր, որ որևէ փաստաթուղթ պիտի ստորագրէ միայն այն ատեն, երբ Արցախի և Հայաստանի ժողովուրդը համաձայն ըլլայ: Ոչ մէկ ձևով եղան այս բոլորը, ոչ մէկ ձևով վերադարձ կատարուեցաւ ժողովուրդին, նոյնիսկ վերադարձ չկատարուեցաւ ժողովուրդին ընտրած պատգամաւորներուն, որոնք վարչապետին խմբակցութեան անդամ են նաև, ի յայտ եկաւ, որ վարչապետին դաշնակից պատգամաւորները տեղեակ չեն եղած, նախագահը ևս տեղեակ չէր որոշուած համաձայնութենէն՝ բացի իր անմիջական շրջապատէն, իր նեղ շրջանակէն:

Այդ գաղտագողի գործելաոճին նախանշանները տուած էր վարչապետը: Պէտք է յիշէք նոյեմբերին առաջին կիսուն վարչապետին կատարած մէկ յայտարարութիւնն ու տխրահռչակ ելոյթը, երբ ներկայացուց ամէն բան ձեռքէ դուրս ելած տրամադրութեամբ, խօսեցաւ ցաւոտ զիջումներու մասին, որոնք ցնցեցին համայն հայաշխարհը: Արդէն մենք իր ձայնի, խօսքի ոճէն նկատեցինք պարտուած ղեկավար մը: Թէև օր մը ետք փորձեց ուղղել, սակայն զգալի էր, թէ հայկական կողմին անունով բանակցողը, պաշտպանութեան գերագոյն հրամանատարը ինչ վիճակի մէջ էր: Մենք առաջարկեցինք մեր օժանդակութիւնը, բայց ինք մերժած էր որևէ օժանդակութիւն. իւրաքանչիւրը իր կաթիլով կրնար լեցնել բաժակը, և այլ վիճակի մէջ ըլլայինք: Ցաւ ի սիրտ, պատմութիւնը կարդալով չէ, որ եզրակացութիւն կ՚ընեմ, մենք կը խօսինք մեր այսօրուան ակնոցով. այս է, որ կը ցաւցնէ»,- ընդգծեց Յ. Խաչերեան:

Անդրադառնալով ներկայիս շրջանառուող այն լուրերուն, որ Դաշնակցութիւնը իր բողոքի հաւաքներով իշխանութեան կը ձգտի, Խաչերեան ըսաւ. «Այսօրուան կացութիւնը կրնայ քաջալերական չթուիլ ոևէ մէկուն, որ իշխանատենչ է: Մենք կ՚ուզենք Հայաստանը այսօրուան կացութենէն դուրս բերել, գործակցիլ բոլոր կողմերուն հետ: Մենք ներքին թշնամի չունինք: Ինչ իշխանութիւն, ինչ փառք, կայ ազգային պարտականութիւն՝ քանդուած Անին վերականգնելու: Այսօր մեր թշնամին մեզ պաշարելու վիճակին մէջ է, Հայաստանը պաշարելու վիճակին մէջ է: Մենք վրէժխնդրական ոչ մէկ զգացում ունինք ոչ մէկ անձի նկատմամբ, մենք մեր պարտականութիւնը կ՚ուզենք կատարել բոլորով, նոյնիսկ «Իմ քայլ»-ի պատգամաւորներուն հետ, որոնցմէ ոմանք ներկայ կ՚ըլլան ցոյցերու: Մենք միայն կը խնդրենք, որ վարչապետը անցնցում հեռանայ»:

Վարչապետի հրաժարականի երկրորդ պատճառն այն է, որ, ընդունուած հասկնալի տրամաբանութեամբ, պարտուած ղեկավարի հոգեբանութեամբ ոչ մէկ բանակցութիւն կարելի է վարել, և այսօր Փաշինեանը պարտուած ղեկավարի հոգեբանութեամբ անզօր է բանակցութիւն վարելու: «Բաւարար են իր արձանագրած սև էջերը հայոց պատմութեան մէջ: Պէտք է անդրադառնայ, մտածէ, առիթը տայ և հեռանայ իշխանութենէն, կարելիութիւն տայ փրկելու այն, ինչ որ կարելի է փրկել»,- շեշտեց ան:

«Վանայ ձայն»-ի տնօրէնը հարցուց, որ եթէ վարչապետ Փաշինեան չհրաժարի, կա՛յ իրաւական, օրինական, սահմանադրական ելք՝ այս կացութենէն դուրս գալու, իսկ եթէ չկայ, որն է այլընտրանքային ծրագիրը:

«Սահմանադրական լուծումներէ առաջ պէտք է ապաւինիլ մեր ժողովուրդին ողջմտութեան, զինուորներուն, կառավարութեան, ազգի ղեկավարներուն, հոգևորականներուն դատողութեան, որպէսզի ստեղծուի անցնցում այս փոփոխութիւնը ընելու մթնոլորտը»,- շեշտեց Յակոբ Խաչերեան՝ յառաջիկայ քայլերուն մասին ըսելով. «Մեր թղթածրարը պէտք է պատրաստուի իր իրաւական հիմքերով, և մենք արդէն մեր գրասենեակներուն փոխանցած ենք իրաւաբանական անհրաժեշտ ցուցումները, որպէսզի դիմեն ամերիկեան, եւրոպական և ԵԱՀԿ Մինսկի խումբի ղեկավարութեանց: Բայց անմիջապէս պէտք է ունենանք պետական ղեկավարութիւն՝ պետութեան թևի մասնակցութիւնը այդ աշխատանքներուն աւելի յաջող և արդիւնաւէտ տանելու համար, որովհետև այլապէս բոլորս պիտի կորսնցնենք, Սփիւռքի մէջ նստած հայութիւնը պիտի կորսնցնէ»,- ընդգծեց Յ. Խաչերեան:

«Տատամսումներ պիտի չըլլան օժանդակութեան ձեռք երկարելու դէպի Արցախ: Մենք պիտի փորձենք այդ ողնայարը շտկել, մենք ժողովուրդը պիտի պատրաստենք այն մտքին, որ մեր հողերուն վերատիրանալո՛ւ գործը նաև պատերազմ է, վերակառուցելո՛ւ գործը նաև պատերազմ է»,- ըսաւ Յ. Խաչերեան՝ իբրև օրինակ թուելով Պէյրութի նաւահանգիստի ահաւոր պայթումէն վնասուած լիբանանահայութեան վերականգնումի ճիգերը:

Հայաստանի մէջ ներքին երկփեղկումի հարցին անդրադառնալով՝ Խաչերեան ըսաւ. «Քաղաքացիական պատերազմը աւարտած է հայուն համար, չկա՛յ հայ մը, որուն ատրճանակը ուղղուի հայու դէմ, բացի դաւաճանէն, որ չկայ Հայաստանի մէջ»:

Իսկ երիտասարդութեան ներուժին վերաբերեալ ան ընդգծեց. «Ներկայով է, որ մենք պիտի կարենանք ձևաւորել մեր ապագան: Պէտք է բոլոր նախաձեռնութեանց, բայց մանաւանդ Արցախի վերակառուցման նախաձեռնութեան տէրը ըլլայ երիտասարդութիւնը»: ■

Հարցազրոյցը վարեց «Վանայ ձայ»
ձայնասփիւռի տնօրէն Վիգէն Ավագեանը
13 նոյեմբեր, 2020 թ.

Հրանտ Մարգարյան
«Կամավորական շարժում» ՀԿ նախագահ

Սիրելի՛ բարեկամներ, ընկերներ.

Մենք միշտ խոսել ենք ազգ-բանակի, համաժողովրդական բանակի, պահեստազորը կազմակերպելու, պատրաստ լինելու մասին: Ցավոք, մեր կոչերը շատ ուշ են արձագանք գտել, հազիվ կարողացել ենք մե՛նք պատրաստվել: Բայց պատրաստ ենք: Պատրաստ ենք և սպասում ենք հրամանի, պատրաստ ենք և ասում ենք՝ ոչ մի քաղաքական հարց, ոչ մի քաղաքական տարաձայնություն չի կարող այսօր մեր միասնականության մեջ որևէ կեղտ առաջացնել:

Ազգովի դեպի ճակատ պետք է գնալ, դեմ դուրս գալ և ուժը դեմ տալ թշնամու հարվածներին: Մենք պետք է հաղթենք այս պատերազմում և հաղթանակը պետք է նվիրենք մեր գալիք սերունդներին: Գերխնդիրը թշնամին է, որին պետք է ծնկի բերել: Այս պահին չունենք այլ գերխնդիր: Կգա օրը, նորեն կհավաքվենք, նորեն կքննարկենք խնդիրները, բայց այսօր ունենք մեկ խնդիր՝ թշնամուն ծնկի բերելու, և դրան պետք է պատրաստ լինենք:

Իբրև Գևորգ Չավուշի, Սերոբ Աղբյուրի, Արամ Մանուկյանի, Դուշման Վարդանի, Թաթուլ Կրպեյանի ժառանգ՝ ՀՅԴ-ն պետք է լինի առաջամարտիկը և գնա առջևից: Պետք է գնանք առջևից՝ մեզ հետ տանելով ժողովրդին ու ազգին: Մենք պետք է կարողանանք սովորեցնել, որ հայրենասիրությունը գործ է, որ պետք է կատարվի, ոչ թե խոսք: Եվ այդ գործի ապացույցը պետք է լինենք մենք բոլորս:

Հրանտ Մարգարյանի խոսքը՝ Արցախ մեկնող ՀՅԴ կամավորներին

Երևան, 27 սեպտեմբերի 2020 թ.

ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը

2020 թուականի նոյեմբերի 10-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմից պատերազմը դադարեցնելու մասին ստորագրուած յայտարարութիւնը ոչ այլ ինչ է, քան պարտութենական և նուաստացուցիչ մի փաստաթուղթ, որը ոչ միայն մեծագոյն յանցագործութիւն է հայրենիքի և ողջ հայ ազգի շահերի, իղձերի և նպատակների նկատմամբ, այլ նաև միանշանակօրէն վտանգում և ոտնահարում է հայ ժողովրդի ներկայ և գալիք սերունդների՝ անկախ, անվտանգ և զարգացող երկրում ապրելու և արժանապատիւ ապագայ կառուցելու բացարձակ իրաւունքը:

Հայաստանի և Արցախի ամբողջական անձնատուութեան (կապիտուլյացիայի) մասին դատապարտելի և անընդունելի այս փաստաթուղթն առաջացրել է հայ ժողովրդի ընդվզումն ու ցասումը, որի արդարացի պահանջը կացութիւնը փրկելու նպատակով Նիկոլ Փաշինեանի անցնցում հեռացումն է:

Համաժողովրդական ընդվզման ֆոնին պատասխանատուութիւնից խուսափելու, սեփական իշխանութիւնը երկարաձգելու և բռնի միջոցներով համաժողովրդական ընդվզումը լռեցնելու նպատակով իշխող վարչախումբը սկսել է ձերբակալել ընդդիմադիր կուսակցութիւնների ղեկավարներին և այլ հանրային գործիչների:

Խստօրէն դատապարտելով հակաօրինական ձերբակալութիւնները՝ վստահեցնում ենք, որ նման արարքներով անհնար է զսպել համաժողովրդական բողոքի և ցասման արդար ալիքը:

Միևնոյն ժամանակ կենսական ենք համարում եռակողմ յայտարարութեամբ նախատեսուած քայլերի իրականացման շուրջ և առհասարակ Արցախի հիմնահարցի կարգաւորման յաջորդ փուլերի բանակցութիւններին Հայաստանի և Արցախի Հանրապետութիւնների, ընդհանրապէս հայ ժողովրդի շահերը արժանաւոր կերպով պաշտպանելու հնարաւորութիւն ստեղծելու համար՝ վարչապետ Փաշինեանի հրաժարականը այդ պաշտօնից:

Վարչապետի հրաժարականը կը վկայի այն մասին, որ նա իր անձնական քաղաքական փառասիրութիւնը ստորադասում է ազգային-պետական շահին: Եթէ իսկապէս վարչապետը եռակողմ յայտարարութիւնը ստորագրել է հայրենիքի մնացորդացի փրկութեան նպատակով, նոյն տրամաբանութեամբ նա պիտի հեռանայ իր պաշտօնից՝ հնարաւորութիւն տալով քաղաքական դաշտին միաւորելու ազգային ամբողջ ներուժը և դուրս գալու այս իրավիճակից: Զգուշացնում ենք վարչապետին իր բռնութիւններով, հալածանքներով և սադրանքներով երկիրը չտանել ապակայունացման: Կոչ ենք անում մեր ժողովրդին լինելու զգօն և չտրուելու սադրանքների:

Առնուազն ինքը՝ վարչապետը, շատ լաւ գիտի ՀՅ Դաշնակցութեան անսակարկ ու անմնացորդ նուիրումը հայրենիքին, պատերազմի առաջին իսկ ժամերից հէնց իրեն՝ վարչապետին յայտնած մեր պատրաստակամութիւնը՝ մեր միջև բոլոր տարաձայնութիւնները դէս դնելու, և հայոց բանակին զինուորագրուելու Դաշնակցութեան ողջ կառոյցի յանձնառութիւնը և այդ պատրաստակամութիւնն ու յանձնառութիւնը հետագայ օրերին ռազմաճակատում և թիկունքի ներքին ու արտաքին հարթակներում իրագործելու փաստը: Պատերազմի ողջ ընթացքում տարբեր առիթներով այդ մասին յայտնել ենք վարչապետին:

Վերջապէս դիմում ենք աշխարհացրիւ մեր երիտասարդութեան՝ չվհատուելու, չհիասթափուելու և չյուսահատուելու. մեր ազգային շահերի պաշտպանութեան համար մեր յանձնառութիւնը ամբողջական է, և յարատև պայքարով, թէկուզ երբեմն անյաջող, ի վերջոյ կը հասնենք մեր համազգային նպատակներին:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
12 նոյեմբեր, 2020 թ.

Դաշնակցականի ճանապարհը

Արտաշես Շահբազյան

Հայ ժողովուրդն անցավ դժոխքի միջով: Արցախին ու ողջ հայությանը պարտադրված պատերազմի հրդեհի մեջ այրվեց ազգի ծաղիկը, նրա սերուցքի մի մասը: Բազմաթիվ են անկրկնելի սխրանքների և անձնազոհ վարքի օրինակները, որոնք ակնառու վկայություններն են հայ ժողովրդի հերոսական ոգու, որ հպարտություն է ներշնչում նման որդիներ ծնող ժողովրդին պատկանելուդ համար: Հերոսներն ու նվիրյալները հավասար են, նրանք բոլորը նույն ազգի զավակներն են, և մենք պարտավոր ենք հիշել բոլորին ու յուրաքանչյուրին առանձնաբար, խոնարհվել բոլորի վաստակի առաջ: Միաժամանակ, որպես մեկ ընտանիքի զավակների, ցանկանում եմ խոսել Դաշնակցության անդամ, հայրենիքի փրկության համար կռված և նահատակված զինվորների մասին: Ովքե՞ր էին նրանք, որ մեր կյանքի մասն էին և մի ակնթարթային պահի պոկվեցին իրականությունից ու համբարձվեցին երկինք: Նրանք հայրենիքում վերածնված կուսակցության երեսնամյա երթի մասնակիցն ու դրոշակակիրներն էին: Նրանց կշիռն ու առաքինությունը դիրք, պաշտոն, հասարակական ճանաչում ունենալով չէր պայմանավորված, եթե նույնիսկ իրենց մեջ կային այդպիսիք: Մեզ համար նրանց առաքինությունը հայրենիքում վերընձյուղված Դաշնակցության սյուները լինելն էր, եթե անգամ նրանցից ոմանք ավելի ուշ են միացել ազգային պայքարի այդ երթին կամ միացել են հայրենի կառույցին այլ վայրերում, բայց նույն դրոշի ներքո որոշակի ճանապարհ անցնելուց հետո:

Հայրենիքում Դաշնակցության վերածնունդը տեղի ունեցավ արցախյան ազատագրական պայքարի բովում: Կարելի է ասել, որ Դաշնակցության Հայաստանի ներկա սերունդը արցախյան պայքարի սերունդն է, որպես կուսակցական շրջան հավաքականությունը ձևավորվել և գործում է ցայսօր այդ հոգեբանությամբ: 1989 թվականից սկսած՝ ազգային ինքնագիտակցությամբ օժտված մարդիկ՝ երիտասարդ ու հասակավոր, կին թե տղամարդ, գալիս էին Դաշնակցություն, որպեսզի նրա ճանապարհով օգտակար լինեին այդ պայքարին, յուրաքանչյուրը՝ իր կարողությունների ու ընդունակությունների չափով:

Իհարկե, Դաշնակցության գլխավոր անելիքը արվեց Արցախում ու Հայաստանի սահմանների վրա նրանց կողմից, ովքեր կամավորագրվեցին զինյալ պայքարին: Նվիրյալների այդ բույլից զգալի թվով ընկերներ նահատակվեցին, մյուսները վերադարձան ու ներգրավվեցին երկրի և կուսակցության խաղաղ աշխատանքներում: Լինելով գաղափարական մարտիկներ՝ նրանք երբեք չփորձեցին շահարկել իրենց մարտական կենսագրությունը, առավել ևս չփորձեցին մյուսներից շատ ուզել սեփական վաստակի դիմաց: Նախապես այս տողերին չճանաչած մեկը, նրանց կողքին երկար ժամանակ գտնվելով, այդպես էլ դժվար թե իմանար, որ իր ընկերն անցել է մարտական փառավոր ուղի և իրական հերոս է, իսկ գործը հրապարակայնացված չէ, որովհետև այդպիսին է Դաշնակցությունը: Նրանք բոլորը, երեկվա կամավորները, պատերազմից վերադառնալով, եղան սովորական կուսակցականներ, ապրեցին այն

Դաշնակցական կամավորականները

առօրյայով ու հոգսերով, ինչ բոլորը: Մենք մեր ընկերների իրական սխրանքների մասին պատմություններ ենք լսել միայն այն ժամանակ, երբ նրանք այլևս մեզ հետ չեն եղել: Չեմ կարող հիշել որևէ դեպք, երբ անցած ավելի քան քսանհինգ տարվա ընթացքում նրանցից որևէ մեկը պատմեր, թե այսինչ ժամանակ այսպիսի կարևոր բան է արել: Նրանք խուսափել են նաև լրագրողներից ու տեսախցիկներից: Հաճելի տրամադրության, ուրախ առիթների դեպքում ընկերական միջավայրում եթե ինչ-որ բան էլ հիշվել է նրանց մարտական կենսագրությունից, ապա հիմնականում զվարճալի միջադեպեր: Նրանք զատվեցին մյուսներից միայն այն ժամանակ, երբ կրկին զինվորական համազգեստ հագնելու անհրաժեշտություն առաջացավ: Այդպես մեր վետերանները երիտասարդների հետ գնեք վերցրին 2016 թվականին և ապա' 2020 թվականին: Վերջին պատերազմը եղավ առավել դաժան ու ողբերգական էր, որովհետև այս անգամ ավելի շատ մարտադաշտից դուրս պարտություն պարտադրվեց մեզ, ու կրկնակի ողբերգական դարձան մեր կորուստները: Տեղն է, որ անուն առ անուն հիշենք մեր նոր նահատակներին, սակայն այս անգամ ես այդ բանն անել չեմ ցանկանում: Իմ խոսքը բոլորի մասին է՝ որպես մեկ հավաքականության՝ գործի, գաղափարի, նպատակի ու նահատակության:

Եթե ցանկանում ենք հասկանալ, թե ինչ է արել Դաշնակցությունը Հայաստանում անցած երեսուն տարվա ընթացքում, ապա արժե առաջին հերթին հիշել մեր կամավորներին և նրանց կատարած գործը՝ առանց նսեմացնելու մնացած բոլորի գործունեությունը: Կարելի է ասել, որ Հայաստանում երկրորդ հարյուրամյակի շեմն անցնող Դաշնակցության ճանապարհը հենց դաշնակցականների և մասնավորապես մարտական ուղի անցած ընկերների անցած ճանապարհը եղավ:

Համեստ, պարզ, հայրենասեր ու անձնազոհ մարտիկներ, ովքեր Դաշնակցության մեջ ճանաչեցին իրենց ժողովրդի հերոսական անցյալն ու չավարտված դատը, անմնացորդ ու պատվախնդրորեն նվիրվեցին հարազատ կուսակցությանը՝ սեփական ուսերի վրա բարձրացնելով նրա հզոր կառույցը և սեփական մեջքին կրելով նրա գործի բեռը: Փառք մեր բոլոր մարտիկներին, հավերժ հիշատակ անմահացածներին: Անկախ իրադարձությունների ընթացքից նրանց կամավոր ընտրությունը եղել է գիտակցված ու արդարացված: Նրանց ապրած կյանքն օրինակ է դառնալու վաղվա պայծառ Հայաստանը կերտողների համար: ■

Արցախի Հանրապետության անկախության հռչակման իրավաքաղաքական հենքը

Գևորգ Ղուկասյան
«Երկիր» ռազմավարական ծրագրավորման հիմնադրամի տնօրեն, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ

Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սեպտեմբերի 27-ից սանձազերծված լայնամասշտաբ ագրեսիայի և դրան ուղեկցող պատերազմական հանցագործությունների խորապատկերին ցանկանում ենք ուշադրություն հրավիրել Արցախի Հանրապետության անկախության հռչակման և դրա իրացման գործընթացի իրավաքաղաքական հիմնավորումների վրա՝ մեկ անգամ ևս ցուցելով միջազգային իրավունքի տեսանկյունից այդ գործընթացի անթերի լինելը[1]:

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը

ՄԱԿ-ի կանոնադրությամբ, ԵԱՀԿ Հելսինկիի 1975թ. եզրափակիչ ակտով և ԽՍՀՄ Սահմանադրությամբ սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչությունը մարզային իշխանության միջոցով 1988 թ. սկսեց ինքնորոշման իրավունքի իրացման իրավաքաղաքական գործընթաց, որը 1988 թ. փետրվարի 20-ին վերաճեց ինքնավար մարզի մարզխորհրդի՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ տեղափոխելու և այդ հարցով ինչպես կենտրոնական, այնպես էլ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ խորհրդարաններին դիմելու մասին որոշմանը: Հայաստանի խորհրդարանն ընդունեց, իսկ Ադրբեջանինը մերժեց ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը: Մոսկովյան կենտրոնական իշխանությունը հարցի լուծում համարեց Լեռնային Ղարաբաղը ադրբեջանական իշխանությունների տիրույթից դուրս բերելն ու ուղղակիորեն Մոսկվային ենթարկելը, ինչի վերաբերյալ որոշումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը կայացրեց 1989 թ. հունվարի 12-ին:

Ստեղծված նոր իրավիճակից իրավական ելք տրամադրեց 1990թ. ապրիլի 3-ի **«Խորհրդային Միությունից միութենական հանրապետության դուրս գալուն վերաբերող հարցերի լուծման կարգի մասին»** օրենքը: Համաձայն սույն օրենքի երրորդ կետի՝ ինքնավար կազմավորումները, որոնք միութենական հանրապետությունների մաս էին, վերջիններիս՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում անկախ էին իրենց հետագա ճակատագրի որոշման հարցում:

Ադրբեջանն իր անկախությունը հռչակեց 1991թ. օգոստոսի 30-ին, Լեռնային Ղարաբաղը՝ սեպտեմբերի 2-ին և չմասնակցեց Հայաստանի՝ սեպտեմբերի 21-ին կայացած անկախության հանրաքվեին՝ այդպես բացառելով անկախացման գործընթացի իրավական խոցելիությունը: Այդ գործընթացի իրավական փուլն ավարտվեց նույն թվականի դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեով՝ միջազգային դիտորդների մասնակցությամբ: Համաձայն «Խորհրդային Միությունից միութենական հանրապետության դուրս գալուն վերաբերող հարցերի լուծման կարգի մասին» վերը հիշատակված օրենքի՝ անկախության հանրաքվեն նախապայմանային նշանակություն ուներ, որն Արցախն անցկացրեց Ադրբեջանից վաղ: Ադրբեջանում անկախության հանրաքվե անցկացվեց դեկտեմբերի 15-ին: Ըստ այդմ՝ Խորհրդային Միության կազմալուծման պահին նախկին Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքում, միջազգային և ներպետական իրավական կառուցակարգերին համապատասխան, ձևավորվել էին անկախ և իրավահավասար երկու սուբյեկտներ՝ Ադրբեջանն ու Լեռնային Ղարաբաղը:

Վերոնշյալ գործընթացին ադրբեջանական իշխանություններն արձագանքեցին էթնիկ զտումներով, ապա նաև 1992 թ. լայնամասշտաբ ռազմական գործողություններով, որոնք ուղեկցվում էին էթնիկ զտումներով, քաղաքացիական բնակչության ռմբահարումներով և այլն, որոնք ամբողջությամբ ընդգրկվում են ագրեսիայի մասին միջազգային իրավական սահմանումների շրջանակներում:

Ագրեսիայի ակտը

Միջազգային իրավունքը ժողովրդի, ինքնորոշվող կամ ինքնորոշված սուբյեկտի դեմ ագրեսիան որպես այդպիսին սահմանելը ենթակայորեն չի կապում սուբյեկտի միջազգային իրավաքաղաքական կարգավիճակի հետ: Մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր 1974 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 3314 բանաձևով հաստատել է ագրեսիայի ակտի սահմանումը: Ըստ այդ սահմանման՝ ագրեսիա է համարվում մի պետության կողմից ուժի կիրառումը ընդդեմ երկրորդ պետության սուվերենության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության: Բանաձևի առաջին հոդվածը սահմանում է պետությունների հանձնառությունը՝ բացառելու ուժի կիրառումը ժողովուրդներին

ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկախությունից զրկելու նպատակով:

Հատկանշական է, որ ըստ բանաձևի առաջին հոդվածի ծանոթագրության՝ «պետություն» եզրույթը կիրառելի է նաև այն սուբյեկտների դեպքում, որոնք միջազգայնորեն ճանաչված չեն: Այդ սահմանումից միանշանակորեն բխում է, որ միջազգայնորեն չճանաչված և ՄԱԿ-ի անդամ չհանդիսացող Արցախի Հանրապետության դեմ ռազմական գործողությունների իրականացումը ագրեսիա է:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցությունը միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերում

Միջազգային իրավունքը շոշափելի դարձնող հիմնարար փաստաթղթերը, հատկապես ՄԱԿ-ի կանոնադրությունն ու ԵԱՀԿ Հելսինկիի եզրափակիչ ակտը, պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը երբեք չեն հակադրում ժողովուրդների ինքնորոշման իրավունքին: Ժողովուրդների իրավահավասարությունն ու ինքնորոշման իրավունքի հարգումն ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության հենց առաջին հոդվածում, որում թվարկվում են ՄԱԿ-ի նպատակները: Նույն կանոնադրության 2-րդ հոդվածը սկսվում է նախաբանով, ըստ որի՝ կազմակերպության անդամ պետությունները, հետամուտ լինելով առաջին հոդվածում թվարկված դրույթներին, պետք է գործեն կոնկրետ սկզբունքների համաձայն, այդ թվում նաև ձեռնպահ մնան «ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ՄԱԿ-ի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից»:

Այսպիսով՝ տարածքային ամբողջականությունը՝ որպես սկզբունք, չի կարող հակադրվել ժողովուրդների իրավահավասարության կամ ինքնորոշման իրավունքին, որի իրացումը ՄԱԿ-ի նպատակներից է, ավելին՝ եթե նույնիսկ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը պատճառ է դառնում պետությունների տարածքային փոփոխությունների, ապա դա չի կարող դիտվել որպես տարածքային ամբողջականության խախտում՝ համաձայն այն մասով, որով պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը երաշխավորված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ: Այլ կերպ ասած՝ սկզբունքը չի կարող հակադրվել նպատակին:

Հատկանշական է, որ ԵԱՀԿ Հելսինկիի եզրափակիչ ակտի՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ ձևակերպումները, բխելով ՄԱԿ-ի կանոնադրությունից, ամբողջությամբ համահունչ են ՄԱԿ-ի շրջանակներում մշակված 1966թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրին» ու նույն թվականի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրին», ինչպես նաև 1970թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 2625 (XXV) բանաձևով հաստատված՝ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրին:

Հարցի նախադեպայնությունը

Ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության իրավունքի հակադրման ու տարբեր հակամարտությունների օրինակները բազմաթիվ են ու բազմազան, սակայն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրացման առումով թերևս զուգահեռներ անցկացնենք Կոսովոյի խնդրի հետ և հպանցիկ դիտարկենք Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) 2010 թ. հուլիսի 22-ի որոշումը՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցության վերաբերյալ: Համաձայն ԱՄԴ որոշման՝ միակողմանիորեն անկախության հռչակումը միջազգային իրավունքում որևէ կերպ արգելված չէ, և տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է բացառապես միջպետական հարաբերություններին:

Հանուն անկախության և ինքնորոշման իրավունքի իրացման աշխարհում ծայր առած գործընթացները ոչ միայն անկասելի են, այլև վիթխարի արդյունքներ են գրանցել: Այսպես՝ ՄԱԿ-ի անդամ պետությունների թիվը 1945 թվականից առ այսօր աճել է 3,5 անգամ՝ 55-ից դառնալով 193: Դրանց թվում են նորանկախ այնպիսի պետություններ, ինչպիսիք են Էրիթրեան (1993 թ.), Արևելյան Թիմորը (2002 թ.), Չեռնոգորիան (2006 թ.), Հարավային Սուդանը (2011 թ.) և այլն:

Ինչ վերաբերում է Արցախին, ապա Արցախի Հանրապետության անկախության միջազգային ճանաչման գործընթացը նախորդ տարիների ընթացքում դրսևորվել է երեք հիմնական հարթություններում՝ ապակենտրոն ճանաչման, ապակենտրոն համագործակցության և միջխորհրդարանական հարաբերությունների: Դրանք կատարված հսկայական աշխատանքի արդյունք են, որոնք թեև վերջնարդյունքում չեն հանգեցրել Արցախի Հանրապետության՝ որպես միջազգային իրավունքի սուվերեն սուբյեկտի ճանաչման, այնուամենայնիվ, դրա համար խիստ անհրաժեշտ հենք են նախապատրաստել: Այսօր էլ պատերազմական իրավիճակի և Արցախի բնակչության իրավունքների զանգվածային խախտումների խորապատկերին Արցախի անկախության ճանաչումը դառնում է կենսական-անվտանգային նշանակության կանխարգելիչ գործոն: Վերջին մեկ ամսվա ընթացքում Արցախի միջազգային հարաբերությունների շրջանակը շեշտակի զարգացում է ապրել. առկա միտումը ոգևորիչ է:

ԱՀ միջազգային ճանաչման և արտաքին հարաբերությունների մասին առավել մանրամասն խոսել ենք «Դրօշակ»-ի նախորդ՝ 2020/09 համարում հրապարակված «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը» հոդվածում: ■

Հոկտեմբեր 2020թ.

Օգտագործված Աղբյուրներ

1- Սույն հրապարակման մեջ օգտագործվել են կարևոր նշանակության շեշտադրումներ՝ վերցված ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի 2015թ. «Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը» հոդվածից:

Արցախյան հակամարտության կարգավորումը փորձություն Ռուսաստանի համար

Վարդան Հակոբյան

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված հարձակումը Արցախի վրա, դրա հետ կապված ռազմաքաղաքական զարգացումները, իրադրության վերաբերյալ տարբեր դիտորդների գնահատականները նորից տեղիք են տալիս մերձավորարևելյան և հատկապես հարավկովկասյան տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող տերությունների իրական նպատակներին առնչվող որոշ հարցերի արծարծմանը: Այս տեսանկյունից ուշադրության կենտրոնում է առավելապես Ռուսաստանը: Գրեթե 3 դար Ռուսաստանը հայ ազգային, հասարակական, քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում է: Երկար և ոչ միշտ հարթ ճանապարհ է անցել հայ ժողովուրդը ռուսական պետության հետ: Այսօր էլ լսում ենք բազմաթիվ ու բազմապիսի կարծիքներ ու գնահատականներ Հայաստանի նկատմամբ այս երկրի վերաբերմունքի մասին: Դա բնական է, ընդ որում, հիմնականում գնահատում ենք այդ երկրի դերակատարությունը տարածաշրջանում հայերիս շահերի տեսանկյունից:

Սույն հոդվածի նպատակն է փորձել քննել Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակը՝ ընդհանրացնելով ռուս քաղաքագետների և վերլուծաբանների դիտարկումները: Բայց նախ համառոտ ներկայացնենք, թե քաղաքական ինչ մթնոլորտում է գտնվում ՌԴ-ն:

Վերջին 20 տարվա ընթացքում Ռուսաստանը կարողացավ ոտքի կանգնել, վերականգնեց բանակի հզորությունը, ամրապնդեց իր միջազգային դիրքերը և ինքնիշխանությունը: Դրան զուգահեռ՝ 20 տարի ԱՄՆ-ն, գործընթացի մեջ ներքաշելով իր դաշնակիցներին, ռազմաքաղաքական դիվանագիտական, տնտեսական պատժամիջոցների կիրառման և այլ ճանապարհներով փորձում է զսպել Ռուսաստանի մղումը՝ վերականգնելու նախկինում իր ունեցած հզորությունն ու դերակատարությունը, և սահմանափակել գլոբալ քաղաքական ու տարածաշրջանային գործընթացներին նրա մասնակցությունը: Չանդրադառնալով ՌԴ վերը նշված ձեռքբերումներին՝ դիտարկենք, թե Արևմուտքի դեմ ծավալվող այս կոշտ հակամարտության հետևանքով ինչ իրավիճակում է հայտնվել Ռուսաստանը:

Օգտվելով 90-ական թվականներին Ռուսաստանի թուլությունից և օգտագործելով, այսպես կոչված, գունավոր հեղափոխությունների իրականացման հայտնի միջոցներն ու գործիքները՝ ԱՄՆ-ն նախկին խորհրդային հանրապետությունների տարածքը դարձրեց հակամարտության գոտի: Այսօր Ռուսաստանի հարաբերությունները լարված են այդ պետությունների մեծ մասի հետ, իսկ Ուկրաինայի և Վրաստանի հետ թշնամական են: Իսկ եթե հաշվից դուրս չթողնենք մյուս հանրապետություններում նման դեր ստանձնելու պատրաստ և դրան ձգտող քաղաքական ուժերին, ապա կտեսնենք, որ վերոնշյալ լարվածության գոտու ձևավորումը Ռուսաստանի շուրջ մոտենում է իր ավարտին:

Ռուս քաղաքագետները նաև նշում են, որ նախկին խորհրդային հանրապետությունները «գրավելու» համար Արևմուտքը չի իրականացնում ռազմական կամ օպերատիվ դիվերսիոն գործողություններ, այլ ընդամենը «մարտի» է նետում այդ երկրներում ստեղծված հինգերորդ շարասյուները՝ պայքարելու ընդդեմ ռուսամետ քաղաքական գործիչների հաստատած կոռուպցիոն ռեժիմի և հանուն ժողովրդավարության հաստատման: Դրան զուգահեռ շարունակում են կիրառել տնտեսական պատժամիջոցները, հետևողականորեն լարում են ներքաղաքական դաշտը, օրինակ՝ բեմադրելով Նավալնու թունավորման շոուն: Նրանք նշում են նաև այն հանգամանքը, որ թե ԱՄՆ-ն, թե նրա արևմտաեվրոպական դաշնակիցները հրաժարվում են որևէ վիճելի հարց քննարկելուց. մեղադրում են, դատապարտում են և վերջ: Սա նշանակում է միայն մի բան՝ վերջիններս գնալու են մինչև վերջ, մինչև իրենց նպատակների իրականացումը: Իսկ նպատակները հայտնի են՝ նսեմացնել Ռուսաստանին՝ միջազգային հարաբերություններում իջեցնելով նրա ստատուսը երկրորդականի և պահանջելով անվերապահ ենթարկվել Արևմուտքի հաստատած խաղի կանոններին: Նշելով այս հանգամանքները՝ ռուս վերլուծաբանները գնահատում են դրությունը որպես ծայրաստիճան լարված, հղի վատթարագույն հետևանքներով:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի հարձակումը Լեռնային Ղարաբաղի վրա եկավ վերջնականապես հաստատելու ռուս քաղաքագետների մտահոգությունները: Այս պատերազմը, որը, թվում էր, թե հայ-ազերիական հերթական բախումն է և մի քանի օրից ՄԽ համանախագահողների, մասնավորապես ՌԴ-ի կողմից կսաստվի, հանկարծ դրսևորվեց նոր կողմից, բացահայտեց նոր սպառնալիքներ և անակնկալի բերեց ռուս քաղաքագետներին:

Իհարկե, «անակնկալը» Ռուսաստանին հերթական անգամ մատուցեց Թուրքիան: Քաղաքագետները չեն մոռացել Սիրիայում թուրքերի կողմից ռուսական ռազմական օդանավի խոցումը, դեսպանի սպանությունը, պարտավորությունների մշտական խախտումը: Վերջիններս զայրացան նրանց հանդգնության վրա իրենց շահերի ավանդական դաշտ՝ Անդրկովկաս ներխուժելու համար: Որոշ քաղաքագետներ հարցեր

էին ուղղում նաև սեփական իշխանություններին, համապատասխան պետական կառույցներին՝ պարզելու, թե ինչպես եղավ, որ թույլ տվեցին թուրքերին օրը ցերեկով զենք ու զինամթերք տեղափոխել Ադրբեջան, զորավարժություններ անցկացնել ու պատրաստել ազերիներին հարձակման և, օգտվելով դրանից, հաստատվել այդ երկրում և քաղաքականություն թելադրել այդ երկրի իշխանություններին:

Քաղաքագետները անդրադարձան նաև Ռուսաստանում քաղաքական ու տնտեսական լայն գործունեություն ծավալող թուրք-ադրբեջանական լոբբիին՝ փաստելով, որ ռուսաստանյան էլիտան միասնական չէ այս հարցում, և մի շարք խոշոր գործարարներ իրենց շահերն ունեն Թուրքիայի հետ բազմամիլիարդանոց առևտրատնտեսական հարաբերություններում: Վերլուծելով իրավիճակը՝ նրանք հանգում են այն եզրակացությանը, որ իրադրությունը չի կարելի դիտարկել հայ-ադրբեջանական բախման սահմաններում: Այն բազմաշերտ է: Այս հակամարտությունում, բացահայտ մասնակից Թուրքիայից զատ, կան իրենց իրական նպատակները քողարկած մասնակիցներ:

Որպեսզի ընդհանրացնենք ռուս քաղաքագետների դիտարկումներն ու եզրակացությունները, պետք է դրանք դասավորենք մի տրամաբանական հարթության վրա: Հետևելով այդ տրամաբանությանը՝ դժվար չէ նկատել, որ, վերլուծելով Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը, նրանք մեկը մյուսի ետևից բացում են ՌԴ-ի առաջ ծառացած խնդիրները, կարծես զբաղված են ռուսական ամենահայտնի հուշանվերով՝ մատրյոշկայով:

Այսպես, փորձելով խորանալ հակամարտության պատճառների և հետևանքների մեջ՝ հասկանալու, թե ինչ դիրքորոշում կորդեգրի Ռուսաստանը, նրանք բացում են առաջին մատրյոշկան, որի մեջ երկրորդն է հայտնվում Ռ. Էրդողանի կերպարով: Վաղուց արդեն Ռ. Էրդողանը հետևողականորեն ընդլայնում է Թուրքիայի քաղաքական ազդեցության դաշտը՝ ընդգրկելով ողջ տարածաշրջանը՝ Լիբիայից մինչև Կասպից ծով: Նա գործում է արագ և համարձակ՝ հաշվի չնստելով ոչ մրցակից, ոչ գործընկեր, ոչ նույնիսկ դաշնակից պետությունների հետ: Թուրքիայի նախագահի ոճն է օգուտ քաղել գործընկերներից, հնարավորինս օգտագործել նրանց, բայց նրանց առաջ երբեք իրեն պարտավորված չզգալ: Այդպես վարվեց Ռ. Էրդողանը Վ. Պուտինի հետ Սիրիայում: Իսկ եթե գործընկերը թույլ է, Թուրքիան քամում է նրան մինչև վերջ: Այսպես, շահարկելով Վրաստանի հակառուսական տրամադրությունները, ձգտումը՝ անդամակցելու ՆԱՏՕ-ին, ներգրավեց այդ երկիրը իր քաղաքական շահերի ոլորտ: Այսօր Թուրքիան օգտագործում է վրացական հաղորդակցական ուղիները՝ Ադրբեջանի հետ անխաթար կապի համար, թուրք առևտրականները ողողել են երկիրը Աջարիայից մինչև ադրբեջանական սահման: Ավելին, ձևացնելով, թե Սիրիայում համագործակցում է Ռուսաստանի հետ, և Վ. Պուտինը իր «թանկագին բարեկամն» է, իսկ Ի. Ալիևը՝ իր եղբայրը, նա աստիճանաբար հող նախապատրաստեց Անդրկովկասում հաստատվելու համար. ոտք դրեց Ադրբեջան, և այլևս դժվար է լինելու նրան դուրս բերել այնտեղից: Էրդողանի ակտիվ ներգրավումը

այս պատերազմում պետք է դիտել ոչ թե որպես իր ցեղակիցների հետ համերաշխության դրսևորում, այլ որպես հերթական քայլ նեոօսմանական նպատակների իրականացման ճանապարհին: Իսկ այդ ճանապարհը, ռուս քաղաքագետների համոզմամբ, տանում է դեպի Հյուսիսային Կովկաս, Վոլգայի ափերը ու Միջին Ասիա: Դա մահացու սպառնալիք է Ռուսաստանի համար, և նա ցանկացած գնով պետք է դուրս մղի Էրդողանին Հարավային Կովկասից:

Այստեղ նոր հարցեր են ծագում: Որտեղի՞ց է գալիս Էրդողանի՝ լկտիության հասնող համարձակությունը՝ ավազակի նման խցկվելու Ռուսաստանի կենսական շահերի դաշտ: Դա պարզելու համար բացում են Էրդողանի մատրյոշկան և տեսնում, որ դրա մեջ թաքնված է ՆԱՏՕ-ն խորհրդանշող մատրյոշկան, ասենք, Ազատության արձանի տեսքով, որի ջահի վրա վառվում է քառակողմ աստղը, իսկ գոտու վրա պատկերված են Բարենցի ծովից մինչև Սև ծով ընկած երկրների դրոշները: Գոտու վրա իհարկե կան նաև կազմակերպության զինակիրների՝ ՈՒկրաինայի և Վրաստանի դրոշները:

Ի՞նչ հետաքրքրություն ունի ՆԱՏՕ-ն ղարաբաղյան այս պատերազմում: Չէ՞ որ ԱՄՆ-ն և Ֆրանսիան՝ որպես համանախագահող երկրներ, կոչ արեցին դադարեցնելու բախումը, հայտարարեցին, թե որպես հակամարտության կարգավորման գլխավոր դերակատարի տեսնում են Ռուսաստանը, որի միջնորդությամբ է հնարավոր դադարեցնել պատերազմը:

Ինչո՞ւ են ԱՄՆ-ն և Ֆրանսիան նախաձեռնությունը զիջում ռուսներին: Ինչո՞ւ բելառուսական ճգնաժամի, Նավալնու «թունավորման» և այլ դեպքերում հրաժարվում են նույնիսկ մոտ թողնել Ռուսաստանին, իսկ այս դեպքում լիազորում են նրան կարգավորելու հակամարտությունը: Ինչպե՞ս եղավ, որ ՌԴ-ի հետ Արևմուտքի այս ծայրահեղ լարվածության պարագայում ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում վերջինս զիջում է քաղաքական առաջնայնությունը: Այն բացատրությունը, թե Արևմուտքը Հարավային Կովկասը միշտ համարել է ռուսական շահերի դաշտ, չի դիմանում քննադատության. ի՞նչ է, Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում Ռուսաստանը շահեր չունի՞: Մյուս կողմից՝ հարց է ծագում, թե այս նույն տարածաշրջանում ՆԱՏՕ-ն որևէ շահ չունի: Իհարկե ունի և հետապնդում է դրանք, իհարկե միջնորդավորված ձևով կամ, կարելի է ասել, ուրիշի ձեռքերով: Միջազգային հարաբերություններում այս գործելակերպը ՆԱՏՕ-ի և, մասնավորապես, ԱՄՆ-ի

կողմից վաղուց է կիրառվում: Որպես օրինակ բավական է նշել Լեհաստանի դերը ուկրաինական գունավոր հեղափոխություններում և Բելառուսում: Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում այդ դերը հանձնված է Թուրքիային, որի նախագահին ներկայացնում են որպես նատոյական այլախոհ, անկարգ և չարաճճի անդամ՝ քողարկելու համար իրենց անմիջական կապն այդ այլախոհի հետ: Արևմուտքը իրականում ոչ միայն դեմ չէ, այլև խրախուսում է Թուրքիային՝ հաստատվելու Ադրբեջանում: Իսկ այդ դեպքում Ռուսաստանը չի էլ կարողանա որևէ հարց կարգավորել Հարավային Կովկասում: Ասել կուզե, թե Թուրքիայի միջոցով ՆԱՏՕ-ն Ռուսաստանը շրջափակող գոտին Բարենցի ծովից կհասցնի Կասպից ծով: Այս ճանապարհով Արևմուտքը փորձում է հասնել ևս մեկ նպատակի, այն է՝ Ադրբեջանը դարձնել ռազմաքաղաքական հենակետ Իրանին ճնշելու համար: Այստեղ բացահայտվում է նաև ազերիներին օժանդակելու Իսրայելի շահագրգռվածությունը:

Իսկ հասկանալու համար, թե ինչու է Արևմուտքը այս հարցում առաջ մղում Ռուսաստանին, վերլուծողները բացում են երրորդ մատրյոշկան և տեսնում վերջին՝ ամենափոքր, բայց ամենաամուր, ամբողջական կտորից պատրաստված ֆիգուրը՝ ղարաբաղցի պապիկ-տատիկի կերպարով:

Ինչպե՞ս է Ռուսաստանը լուծելու այս խնդիրը: Պարտադրելո՞ւ է կողմերին նստել բանակցությունների սեղանի շուրջ և փոխադարձ զիջումների հաշվին գալ համաձայնության: Բայց արդեն 30 տարի է, դա չի հաջողվում իրականացնել: Ռազմական ո՞ւժ կկիրառի երկու կողմերի կամ նրանցից մեկի նկատմամբ: Բայց նրանք անկախ պետություններ են, և դա միջազգային հանրության կողմից կդիտվի որպես ագրեսիա: Բացի այդ՝ կողմերից և ոչ մեկը չի էլ հրավիրում Ռուսաստանին ուժային միջնորդության՝ ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ Հայաստանը: Խնդիրը նաև այն է, որ ռուսների համար ծայրահեղ վտանգավոր է հանդես գալ կողմերից որևէ մեկի օգտին: Եթե որպես դաշնակցի՝ ՌԴ-ն պաշտպանի Հայաստանին, ապա Ադրբեջանի համար դա հիմք կհանդիսանա վերջնականապես կողմնորոշվելու դեպի Թուրքիա և վերջինիս միջոցով անդամագրվելու Հյուսիսատլանտյան դաշինքին: Իսկ եթե պաշտպանելով Ադրբեջանին ուժով պարտադրի հայերին ընդունել կարգավորման Բաքվի պայմանները, ապա կմղի Հայաստանին հրաժարվելու դարավոր ռուսական կողմնորոշումից, այն, ինչը և խորհուրդ էր տալիս Ջ. Բոլթոնը, ու նրան նույնպես կմղի դեպի ՆԱՏՕ, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ում գունավոր հեղափոխության ճանապարհով իշխանության եկածները պատրաստ են դրան: Եվ փաստ չէ, որ այս դեպքում Ադրբեջանը կմնա ՌԴ ազդեցության դաշտում. Էրդողանը շատ պինդ է բռնել Ալիևի կոկորդից, և վերջինս ի զորու չէ ինքնուրույն որոշումներ կայացնելու:

Այս և բազմաթիվ այլ դատողություններից հետո ռուս քաղաքագետներն ու վերլուծաբանները հանգում են հետևյալ եզրակացություններին:

Նախ՝ Ռուսաստանն արդեն կորցրել է իր հսկողությունը Ադրբեջանի և Հայաստանի իշխող քաղաքական ուժերի վրա: Ի. Ալիևը մաքրեց իշխանությունը ռուսական ազդեցության տակ գտնվող տարրերից, մասնավորապես՝ Արտաքին գործերի և Պաշտպանության նախարարությունները, և բացարձակապես գործում է Էրդողանի թելադրանքով՝ կապելով Ադրբեջանի և իր իսկ ապագան Թուրքիայի հետ: Նման կերպ վարվեց նաև ՀՀ վարչապետը: Գալով իշխանության՝ նա առաջին հերթին, մեղմ ասած, չեզոքացրեց Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունների կողմնակից քաղաքական գործիչներին, մաքրեց բանակը ռուսամետ հրամանատարներից, վարկաբեկեց ՀԱՊԿ-ը: Ուստի զարմանալի չէ, որ նույնիսկ Հայաստանի տարածքին հարված հասցվելուց հետո նա չդիմեց Վ. Պուտինին, չնայած վերջինս հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է կատարելու իր դաշնակցային պարտավորությունները: Մի խոսքով՝ տպավորություն է ստեղծվում, որ ո՛չ Ալիևը և ո՛չ էլ Փաշինյանը չեն ուզում ներգրավել ռուսներին այս հակամարտության մեջ: Ակնհայտ է, որ Ալիևին դա թույլ չեն տալիս թուրքերը, իսկ Փաշինյանին՝ ենթադրաբար իր արևմտյան խորհրդատուները:

Երկրորդ՝ հիմնական խնդիրը ոչ թե կովկասյան երկու հանրապետությունների խամաճիկային իշխանությունները, այլ Թուրքիան է, որի նպատակն է հաստատվել Հարավային Կովկասում և դուրս մղել այնտեղից Ռուսաստանին: Օգտվելով Արևմուտքի ամենաթողությունից և խցկվելով նրա աշխարհաքաղաքական ծրագրերի իրականացման գործընթացի մեջ՝ Թուրքիան իր սեփական պանթուրքական նպատակներն է փորձում իրականացնել:

Երրորդ խնդիրը իհարկե ՆԱՏՕ-ն է: Վերջինս, փաստորեն, պլանավորել և թուրքերի ձեռքով իրագործում է Ռուսաստանի դեմ իր ծրագիրը: Ըստ այդ ծրագրի՝ հայ-ադրբեջանական պատերազմը՝ Թուրքիայի ակտիվ մասնակցությամբ, թակարդ է ռուսների համար: Թակարդ է, որովհետև Ռուսաստանը կա՛մ պետք է հեռանա Հարավային Կովկասից և հրաժարվի իր աշխարհաքաղաքական շահերից այդ տարածաշրջանում, կա՛մ ներգրավվի դրա մեջ և դուրս շպրտի թուրքերին Անդրկովկասից ու պարտադրի երկու հանրապետությունների իշխանություններին խնդրի լուծման իր տարբերակը: Բայց վերջին տարբերակը իրագործելու համար քաղաքական, դիվանագիտական, ռազմական ու տնտեսական չափազանց մեծ ջանքեր կպահանջվեն ռուսներից: Կդիմանա՞ արդյոք Ռուսաստանը այդ բեռին:

Այնպես որ այս վերջին մատրյոշկան չնայած փոքր, բայց շատ ամուր է, և ով որ փորձի այն բացել, կարող է ատամները կոտրել:

Չհանգելով ընդհանուր եզրակացության՝ ռուս հասարակական-քաղաքական մեկնաբանները համակարծիք են այն հարցում, որ Ռուսաստանը կանգնած է չափազանց բարդ խնդրի առաջ, և այն պահանջում է արագ լուծում: Հաշվի առնելով Ղրիմի, Սիրիայի փորձը՝ նրանք վստահ են, որ Վ. Պուտինը կարող է լուծել նաև այս խնդիրը: Մենք ևս միանում ենք նրանց այս կարծիքին՝ միաժամանակ հույս տածելով, որ այդ լուծումը չի լինի ի վնաս Հայաստանի:

Հոկտեմբեր 2020թ.

Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը և Վրաստանը

Վահե Սարգսյան
պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի լայն աջակցությամբ Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված արյունալի պատերազմին Վրաստանի «մասնակցությունը» (խոսքը, իհարկե, դիրքորոշման, չեզոքության պահպանման կամ կողմերից որևէ մեկին այս կամ այն կերպ աջակցելու մասին է) տեղիք տվեց հայ և օտար շրջանակներում բազմաթիվ քննարկումների, մեկնաբանությունների, անգամ որոշ մեղադրանքների: Ջուգահեռաբար կրկին ակտիվացան հակամարտող կողմերի զինամատակարարման և զինտեխնիկայի փոխադրման տարանցիկ ուղիների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները, որոնք ոչ միշտ էին համահունչ մասնագիտական և հանրային շահագրգիռ շրջանակների ձեռքերում հայտնված փաստերին:

Վրաստանը տնտեսական, էներգետիկ, ռազմական, տարանցիկ և այլ ոլորտներում խոր կախվածություն ունի իր հարևաններ Թուրքիայից և Ադրբեջանից: Եթե այս ամենին գումարենք նաև երբեմն ծայրահեղության հասնող արևմտամետ, դեպի ՆԱՏՕ ձգտող, միևնույն ժամանակ հակառուսական քաղաքականությունը, ապա *«Վրաստանն ինչպես կդրսևորի իրեն ուժերի «ուղղահայաց» և «հորիզոնական» առանցքների օղակների (ՀՀ-Արցախ, Ադրբեջան) միջև ընթացող արյունալի պատերազմի օրերին, երբ վաղուց ներքաշված է «հորիզոնական» ուժային վեկտորի մեջ»* հարցադրումը միանգամայն հասկանալի է:

Պատերազմի նախօրյակին

Նախապատերազմական շրջանում Թուրքիայի և Ադրբեջանի ռազմաօդային ուժերի ինքնաթիռները Վրաստանի օդային տարածքով հաճախակի թռիչքներ են կատարել երկու երկրների միջև: Հայկական և միջազգային փորձագիտական շրջանակները, սակայն, պատերազմի նախօրյակին բարձրաձայնել էին, որ, սկսած սեպտեմբերի 23-ից, այդ թռիչքների թիվը կտրուկ աճել է: Նշված ժամանակահատվածում Թուրքիայի Կայսերի, Թեքրիդաղ և այլ քաղաքների օդակայաններից Վրաստանի օդային տարածքով դեպի Ադրբեջանի Գյանջա (Գանձակ), Եվլախ և Բաքու քաղաքների օդակայաններ և հակառակ ուղղություններով գերակտիվ թռիչքներ են իրականացրել ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի ռազմաօդային ուժերին պատկանող ինքնաթիռները՝ հավանաբար Ադրբեջան տեղափոխելով մեծաքանակ զինտեխնիկա: Ավելին՝ ինչպես Ադրբեջանի ռազմաօդային ուժերին, այնպես էլ ադրբեջանական մասնավոր «Silk Way West»[1] ավիափոխադրողին պատկանող բեռնատար ինքնաթիռները նշված ժամանակահատվածում կրկին Վրաստանի օդային տարածքով ակտիվ թռիչքներ են իրականացրել նաև Ադրբեջան-Թուրքիա-Իսրայել և հակառակ երթուղիներով: Եթե հաշվի առնենք պատերազմի ողջ ընթացքում կիրառված իսրայելական արտադրության անօդաչու թռչող սարքերի ու այլ տեսակի զինտեխնիկայի ահռելի քանակը, ինչպես նաև այն իրողությունը, որ Իսրայելը Ադրբեջանին զենք մատակարարող հիմնական երկրներից մեկն է, պարզորոշ է, որ պատերազմի նախօրյակին թռիչքների նման ակտիվացումը խոսում է զինտեխնիկայի փոխադրման քանակական աճի մասին: Ըստ այդմ՝ Իսրայելը ևս Թուրքիայի հետ մեկտեղ մասնակցել է Արցախի դեմ ակտիվ ռազմական գործողությունների նախապատրաստմանը:

Պատերազմ, քաղաքական հայտարարություններ

Պատերազմի առաջին իսկ օրերին Վրաստանի նախկին նախագահ Մ. Սահակաշվիլին հայտնեց, որ *«....իր դիրքորոշումը լիովին ակնհայտ է, որը հիմնված է տարածքային ամբողջականության սկզբունքի վրա, հետևաբար Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխան տարածք է, և որևէ բան չի փոխի այդ հանգամանքը»:* Որևէ նորություն չպարունակող, իրավիճակի վրա ոչ մի ազդեցություն չունեցող, այդուհանդերձ, պատերազմի օրերին աղմուկ հանած այդ հայտարարությանը Վրաստանի պետական այրերը շտապեցին արձագանքել՝ միաժամանակ ներկայացնելով Վրաստանի պաշտոնական դիրքորոշումը, երկրի տեղն ու դերը արցախա-ադրբեջանական պատերազմի հարցում: Մ. Սահակաշվիլիի հայտարարության հրապարակման հենց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 29-ին, նշված հայտարարությունը Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիա Վոլսկին որակեց սադրանք: Հայտարարելով, որ Վրաստանն առավելագույնս ձեռնպահ և չեզոք պետք է լինի, Գ.

Գիա Վոլսկի

Վոլսկին նշել է հետևյալը. *«Ապակայունացման և վնաս պարտաճանելու դրսևորում է մի կողմին աջակցություն հայտնելն ու դիրքորոշում արտահայտելն այն ժամանակ, երբ Վրաստանի շահն է հարևանությամբ միայն խաղաղություն ունենալը: Սահակաշվիլիի նպատակը վրացիների հետ հարյուրավոր տարիներ խաղաղ բնակվող հայ ու ադրբեջանական էթնիկ խմբերի բախումներ առաջացնելն է: Ու եթե Սահակաշվիլիի երազանքը կատարվի, այս ամենը կվերածվի հակամարտության: Այդ հայտարարությունն այլ բան չի կարող նշանակել»:*

Չնայած այս հայտարարությանը՝ պատերազմի առաջին իսկ օրերին տեղեկություններ շրջանառվեցին, որ Վրաստանի օդային տարածքով Ադրբեջան է տեղափոխվում ոչ միայն թուրքական և իսրայելական զինտեխնիկա, այլև ահաբեկչական խմբեր Սիրիայից և այլն: Դրությունը Վրաստանում լարվեց հատկապես այն ժամանակ, երբ Վրաստանի սահմանային ծառայության աշխատակիցները թույլ չտվեցին ջավախահայության մարդասիրական օգնության բեռները Նինոծմինդա-Բավրա սահմանային անցակետով տեղափոխել Երևան: Ի պատասխան դրան՝ սեպտեմբերի 29-ին Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների բնակիչները հավաքվեցին սահմանային Կարծախ գյուղում և փակեցին Թուրքիա-Վրաստան նորակառույց միջպետական ճանապարհը: Ինչպես պարզվեց, ջավախահայության նախաձեռնած հանրահավաքի նպատակներից էր նաև Վրաստանի ցամաքային ճանապարհով Թուրքիայից դեպի Ադրբեջան զենքի ու զինամթերքի տեղափոխությունն արգելելը:

Սեպտեմբերի 30-ին այդ ամենը փորձեց հերքել Վրաստանի խորհրդարանի անվտանգության և պաշտպանության հանձնաժողովի ղեկավար Իրակլի Սեսիաշվիլին՝ հայտարարելով, որ Վրաստանը ռազմական տարանցման երկիր չի դառնա: *«Վրաստանը դարաբաղյան հակամարտության հարցում չեզոք է և բարիդրացիական հարաբերություններ ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի հետ: Երկու պետություններն էլ գնահատում են Վրաստանի դիրքորոշումը, քանի որ հարցը երկրի տարածքով ռազմական տեխնիկայի տեղափոխմանն է վերաբերում: Մենք կտրականապես մերժել ենք բոլորին: Դա գիտեն մեր հարևաններն ու հարգանքով են վերաբերվում: Մենք վերլուծում ենք իրավիճակը, հետևում ենք գործընթացին ու պատրաստ ենք ցանկացած սցենարի»*,-հայտարարել է Սեսիաշվիլին՝ ընդգծելով, որ Վրաստանը կողմ է հակամարտության խաղաղ կարգավորմանը և կոչ է անում կողմերին դադարեցնելու կրակը: Նույն օրը հայտարարությամբ հանդես եկավ նաև Վրաստանի վարչապետ Գեորգի Գախարիան՝ նշելով, որ Վրաստանը պատրաստ է ցանկացած ձևաչափով օգնելու դուրս գալու ստեղծված իրավիճակից, այդ թվում՝ հակամարտող կողմերի ներկայացուցիչներին երկխոսության նպատակով ընդունելու Թբիլիսիում: Հետաքրքրական է, որ Վրաստանի վարչապետն իր հայտարարության մեջ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ պատերազմն Արցախի դեմ անվանել է *«Ադրբեջանի և Հայաստանի միջև հերթական ռազմական առճակատում»*՝ *հավանաբար Ադրբեջանին ցույց տալու համար, որ Վրաստանը չի ճանաչում Արցախի գոյությունն ու չի ընդունում վերջինիս ինքնորոշման փաստը: Այսպես. «Ադրբեջանի և Հայաստանի միջև հերթական ռազմական առճակատման հետևանքով ստեղծվել է բարդ իրավիճակ, կան շատ զոհեր, և, ցավոք, մինչ այժմ չի հաջողվել դադարեցնել ռազմական գործողությունները և վերսկսել երկխոսությունը: Բոլորս էլ լավ հասկանում ենք, որ իրավիճակի հետագա սրումը խիստ բացասական ազդեցություն կունենա տարածաշրջանի անվտանգության վրա: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն ու միջազգային դերակատարները պետք է առավելագույնս օգտագործեն իրենց հնարավորությունները՝ էսկալացիայի դադարեցման և երկխոսության վերսկսման համար: Ինչպես գիտեք, մեր երկիրը բարիդրացիական հարաբերություններ ունի երկու երկրների՝ Ադրբեջանի և Հայաստանի հետ: Պատմականորեն Վրաստանում ապրող մեր ադրբեջանցի և հայ քաղաքացիները միշտ մեծ դեր են խաղացել մեր երկրի, ինչպես նաև ընդհանուր առմամբ տարածաշրջանի զարգացման գործում: Միևնույն ժամանակ նրանց համակեցությունը լավ օրինակ է, որ վրացիները, հայերն ու ադրբեջանցիները ունեն ներուժ՝ ամբողջ Հարավային Կովկասը դարձնելու*

Իրակլի Սեսիաշվիլի

խաղաղության և զարգացման տարածք»:

Վրաստանի օդային տարածքով թուրքական և իսրայելական զինտեխնիկայի, ինչպես նաև սիրիացի ահաբեկչական խմբերի՝ Ադրբեջան տեղափոխման մասին բավականին փաստարկված հրապարակումները հոկտեմբերի 3-ին փորձեց հերքել Վրաստանի պետանվտանգության ծառայության ղեկավար Գրիգոլ Լիլուաշվիլին՝ հայտարարելով, թե նման տեղեկատվության տարածման նպատակը տարածաշրջանն ապակայունացնելն է: Վրաստանի տարածքով զենք-զինամթերքի փոխադրման վերաբերյալ Գ. Լիլուաշվիլին նշել է հետևյալը. *«Հակամարտության էսկալացիայից հետո Վրաստանը չի սահմանափակել քաղաքացիական բեռների փոխադրումն իր տարածքով: Միևնույն ժամանակ Ադրբեջանի և Հայաստանի միջև շարունակվող ռազմական գործողությունների պատճառով[2] Վրաստանի կառավարությունը լարվածության առաջացումից ի վեր ժամանակավորապես դադարեցրել է իր տարածքով՝ ինչպես ցամաքով, այնպես էլ օդով, դեպի երկու երկրներ ռազմական բեռների տեղափոխման թույլտվությունների տրամադրումը: Այդ մասին կողմերը տեղեկացվել են»:* Այդուհանդերձ, Վրաստանի օդային տարածքով Ադրբեջան ռազմական նշանակության բեռների փոխադրման վերաբերյալ փաստարկված հրապարակումները շարունակվեցին նաև նշված հայտարարությունից հետո: Անդրադառնալով դրանց՝ Վրաստանի ԱԳ փոխնախարար Լաշա Դարսալիան հոկտեմբերի 13-ին հայտարարեց .*«Մենք ցանկանում ենք կրկնել, որ Վրաստանի տարածքով ռազմական տրանզիտ չի իրականացվում: Ըստ Վրաստանում առկա փաստաթղթերի՝ Վրաստանի օդային տարածքով իրականացվող թռիչքները միայն մարդասիրական ու քաղաքացիական բնույթ ունեն և լիովին համապատասխանում են ICAO-ի չափանիշներին»:*

Գեորգի Գախարիա

Փաստենք, որ այս հայտարարությունը ևս չի փարատել շահագրգիռ շրջանակների կասկածները, որոնք արդեն փաստական հիմք ստացան հոկտեմբերի 22-ին: Եթե մինչ այդ տարբեր հարթակներում խոսվում էր ռազմական բեռների տեղափոխման թույլտվություն ունեցող ադրբեջանական «Silk Way West Airlines» ընկերության բեռնատար ինքնաթիռներով Ադրբեջան զինտեխնիկայի փոխադրման շարունակականության մասին (դրանք վրաց պաշտոնյաներն իրենց հայտարարություններում անվանել են «մարդասիրական» կամ «քաղաքացիական» թռիչքներ), ապա հոկտեմբերի 22-ին Վրաստանի երկնքում արդեն հստակորեն երևաց Ադրբեջանից դեպի Թուրքիա թռչող՝ Թուրքիայի ՌՕՈՒ-ին պատկանող «TUAF512» (Airbus A400M-180) ռազմական բեռնատար ինքնաթիռը: Հայկական մամուլը, փաստական հենք ունենալով, բարձրաձայնեց այդ մասին[3], այդուհանդերձ, Թբիլիսին որևէ պաշտոնական հայտարարություն չարեց այդ առիթով:

Հայ-ադրբեջանական «հակամարտություն» Վրաստանում՝ քաղաքական հողի վրա

Վրաստանի խորհրդարանի երկու գործող պատգամավորներ՝ «Միացյալ ազգային շարժում»-ից Ազեր Սուլեյմանովը և «Վրացական երազանք»-ից Ռուսլան Գաջիևը, պատերազմի հենց հաջորդ օրն իրենց ֆեյսբուքյան էջերում անդրադարձել են արցախա-ադրբեջանական պատերազմին: Ազեր Սուլեյմանովը Հայաստանին մեղադրել է Հարավային Կովկասում անկայունություն մտցնելու և Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը օկուպացնելու, ինչպես նաև Վրաստանի դեմ հանցագործություն կատարելու մեջ: Նա նաև բաց նամակով դիմել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին և նշել, որ *«վերջինիս որոշիչ քայլերով իրենց հողերը վերջնականապես կազատագրվեն»:* Ռուսլան Գաջիևը նույնպես իր աջակցությունն է հայտնել Ադրբեջանին և նշել, որ *«Ադրբեջանի զինված ուժերի հաջող ռազմական գործողությունները՝ իր տարածքային ամբողջականությունը հաստատելու համար, հիմք են տալիս ասելու, որ մեր տարածաշրջանում նման հակամարտությունները պետք է շուտափույթ լուծում ստանան»:* Ադրբեջանցի պատգամավորների հայտարարություններին արձագանքեցին ինչպես Վրաստանի պետական, այնպես էլ հայկական հասարակական-քաղաքական շրջանակները:

Նախկին պետնախարար Պատա Զաքարեիշվիլին Վրաստանի խորհրդարանի անդամների կողմից արված հայտարարությունն ամոթալի է որակել և նշել, որ կուսակցությունները պարտավոր են պարզաբանել կատարվածը. *«Բացարձակապես ամոթալի փաստ է: Նրանք Վրաստանի խորհրդարանի անդամներ են և չգիտեն, թե ինչպես պետք է վարվել. սա անընդունելի է և մտածելու տեղիք պետք է տա կուսակցություններին: Փաստ է, որ այս մարդիկ չեն*

Գրիգոլ Լիլոաշվիլի

զգում, որ Վրաստանի պատգամավորներ են և որպես այլ երկրի պատգամավոր, քաղաքացի կամ նրա շահերը պաշտպանող են ներկայանում: Պետության խնդիրն է, որ հակամարտությունը լուծվի խաղաղ ճանապարհով, և տարածաշրջանում պահպանվի կայունություն, իսկ ներկայումս այս քաղաքական գործիչների դիրքորոշումը լրիվ հակառակն է: Չի երևում, թե նրանք մտածում են տարածաշրջանի կայունության մասին. նրանք ակնհայտորեն մտածում են տարածաշրջանի անկայունության մասին: Առանձին պատգամավորների այս հայտարարությունը խոսում է այն մասին, որ ակնհայտորեն այս մարդիկ չեն գիտակցում՝ որ երկրի քաղաքացիներ են»:

Բնականաբար, Ադրբեջանը քաջ գիտակցում է Վրաստանի տեղն ու դերը ՀՀ-ի համար՝ ռազմավարական, տարանցիկ և այլ առումներով: Որպես արդյունք՝ամեն ինչ արվել և արվում է ՀՀ-Վրաստան առանց այն էլ փխրուն հարաբերություններում առավել խոր վիհեր ստեղծելու համար, իսկ այդ քաղաքականության լավագույն գործիքը Վրաստանում ապրող ադրբեջանական զանգվածն է: Բարեբախտաբար, Վրաստանի պետական-հասարակական շրջանակները, քաջ գիտակցելով այդ ամենը, հնարավորինս արագ չեզոքացրին ադրբեջանական սադրանքները: Այդ խնդրում կարևոր դերակատարություն ունեցան նաև Ջավախքի հասարակական-քաղաքական շրջանակները: Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը, Վրաստանի խորհրդարանի՝ Ջավախքից ընտրված երկու պատգամավորներից մեկը, Ջավախքի առանձին շրջանների ՏԻՄ ներկայացուցիչները, Վրաստանի խորհրդարանական ընտրություններին Ջավախքից իրենց թեկնածությունն առաջադրած մի շարք քաղաքական այրեր իրենց հայտարարություններով անվերապահորեն աջակցեցին Արցախյան գոյապայքարին, դատապարտեցին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմը՝ միաժամանակ հայտարարելով, որ ՀՀ-Վրաստան հարաբերությունների վատացմամբ շահագրգիռ ադրբեջանական ուժերն ու անձինք որևէ կերպ հաջողության չեն հասնելու:

Հոկտեմբերի 5-ին հատուկ կոչ-ուղերձով հանդես եկավ նաև Վրաց ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս, Ախալքալաքի ու Գումբուրդոյի վարդապետ Նիկոլոզ Պաչուաշվիլին: Հայտարարելով Վրաստանի կողմից չեզոքություն պահպանելու անհրաժեշտության մասին՝ նա կողմերին կոչ արեց դադարեցնելու զինված հակամարտությունը և գտնելու ընդհանուր լեզու. *«Ես՝ վարդապետ Նիկոլոզ Պաչուաշվիլիս, ապրում եմ Ախալքալաք, Գումբուրդո, Կարս կոչվող թեմում: Իմ թեմում հայերը ճնշող մեծամասնություն են կազմում՝ ավելի քան 97%: Ես ապրում եմ հայերի մեջ, շփվում եմ նրանց հետ, հոգ եմ տանում նրանց մասին, սիրում եմ նրանց: Եվ հետևաբար այն, ինչ կատարվում է այժմ Ղարաբաղում, ինձ համար շատ ցավալի է: Սա բաց վերք է ոչ միայն ադրբեջանցիների և հայերի, այլ նաև Վրաստանի և, հուսով եմ, ամբողջ աշխարհի համար: Ջավախքում անհիշելի ժամանակներից բոլոր հովիվները ադրբեջանցիներ են* (նկատի ունի Ջավախքի լեռնային արոտավայրերը վարձակալող անասնապահներին, որոնք ամռանն այս վայրեր են գալիս Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններից – Վ.Ս.), *և երբևէ հակամարտություն չի եղել ադրբեջանցի և հայ բնակիչների միջև: Հետևաբար մենք, ես՛ անձամբ, և վրացիները, և վրացական պետությունը իրավունք չունենք որևէ կողմի սատարելու: Մենք պետք է ամեն ինչ անենք հաշտության համար: Որպես քրիստոնյա՝ ես ուզում եմ ձեզ հորդորել սիրել մարդուն և սիրել սեփական թշնամուն: Իր հայրենիքի պաշտպանը չպետք է վերածվի մարդասպանի: Ես բոլորին կոչ եմ անում գտնելու ընդհանուր լեզու և դադարեցնելու ռազմական գործողությունները»:*

Թուրքական բեռնատար ինքնաթիռը Վրաստանի օդային տարածքով թռչում է դեպի Ադրբեջան

Վրաստանն Իրանի «կարգավիճակում»

Ինչպես Իրանի հյուսիսային շրջանների պարագայում, Վրաստանի՝ Ադրբեջանին սահմանակից շրջանները ևս «առնչվեցին» պատերազմին. հոկտեմբերի 7-ին՝ գրեթե նույն ժամին, Վրաստանի արտակարգ իրավիճակների ծառայությունը հրթիռի ու անօդաչու թռչող սարքի մասին հաղորդագրություն է ստացել: Պարզվել է, որ Ադրբեջանի կողմից արձակված հրթիռն ընկել է Կախեթի նահանգի Ղվարելիի շրջանի (սահմանակից է ՌԴ-ին) Կուճատան գյուղի խաղողի այգում, իսկ կրկին ադրբեջանական անօդաչու թռչող սարքը՝ նույն մարզի Սագարեջոյի շրջանի՝ Ադրբեջանին սահմանամերձ Ուդաբնո գյուղում (գյուղի մոտ է գտնվում նաև Դավիթ Գարեջիի հայտնի վանական համալիրը)[4]: Երկրի ներքին գործերի նախարարությունն անմիջապես հետաքննություն է սկսել:

Եզրակացություն

Չնայած Վրաստանի պատկան բարձրաստիճան պաշտոնյաների՝ չեզոքության մասին բազմաթիվ հայտարարություններին և վստահեցումներին, այդուհանդերձ, հավաստի փաստերի համաձայն, Վրաստանի օդային տարածքով Ադրբեջան զինտեխնիկայի փոխադրման գործընթացն ինտենսիվորեն շարունակվել է պատերազմի ողջ ընթացքում: Այդ ընթացքում Ադրբեջան զինտեխնիկա և վարձկաններ են փոխադրվել ինչպես ադրբեջանական ընկերություններին պատկանող քաղաքացիական, այնպես էլ Թուրքիայի ՌՕՈՒ-ին պատկանող ռազմական բեռնատար ինքնաթիռներով: Զինամատակարարումն իրականացվել է կամ Թուրքիայի և Ադրբեջանի՝ Վրաստանի հետ ունեցած ներքին պայմանավորվածությունների շրջանակներում, կամ ստիպողաբար, այն է՝ Վրաստանի վրա ճնշումների գործադրման միջոցով:

Չնայած որոշ քաղաքացիների հրապարակած տեսանյութերին, այդուհանդերձ, Թուրքիայի կողմից Վրաստանի ցամաքային ճանապարհով Ադրբեջան զինտեխնիկայի փոխադրման փաստերը չհաստատվեցին: Կարծիք կա, որ Վրաստանը դա թույլ չի տվել՝ կանխելով ջավախահայության շրջանում հնարավոր ընդվզումները, որոնց դեպքում փխրուն կայունությունը կարող էր վերաճել անգամ քաղաքացիական (հայ-ադրբեջանական) բախումների[5]: Չնայած Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից տարիներով անտեսված լինելու հանգամանքին, ինչպես նաև սեփական հողի վրա ազգային-քաղաքական բազում հիմնահարցերի առկայությանը՝ ջավախահայությունը, փաստորեն, թուրք-վրաց-ադրբեջանական «հորիզոնական» առանցքի հակահայ գործողությունների զսպման հարցում ունեցավ անառարկելի դեր:

Հոկտեմբեր 2020թ.



Օգտագործված Աղբյուրներ

1- «Silk Way West Airlines»-ը «Silk Way Holding»-ին պատկանող կազմակերպություն է, որի 3 սեփականատերերից մեկը Իլհամ Ալիևի դուստր Արզու Ալիևան է(սեփականատեր է դարձել դեռևս 2010 թ.՝ 21 տարեկան հասակում): «Silk Way West Airlines»-ն ունի ռազմական տեխնիկա տեղափոխելու թույլտվություն և բավականին հարուստ փորձ: Դեռևս 2005 թ., երբ ընթանում էր աֆղանական պատերազմը, ԱՄՆ ղեկավարությունը պայմանագիր է կնքել «Silk Way West Airlines»–ի հետ՝ Աֆղանստանում գտնվող ամերիկյան և միջազգային ուժերին ռազմական տեխնիկա, զենք ու զինամթերք մատակարարելու համար:

2- Վրաստանի պետանվտանգության ծառայության ղեկավարը ևս պաշտպանում է վարչապետ Գ. Գախարիայի դիրքորոշումը՝ համարելով, որ պատերազմն ընթանում է ՀՀ-ի և Ադրբեջանի միջև:

3- Ինչ կարելի է Ադրբեջանին, չի կարելի Հայաստանին. Վրաստանի երկինքը փակ է միայն Հայաստանի համար, http://www.yerkir.am/news/view/217681.html?fbclid=IwAR0ciQ1CbjXVomUeRnqGhkUYdvd3rFECzb0kmrl-nIRCfTiXarf0emnVOeB8(մուտք՝ 26.10.2020 թ.):

4- Դավիթ Գարեջիի համալիրի մոտ ընկած անօդաչու թռչող սարքն էր պատճառը, թե՞ ոչ, այդուհանդերձ, դեպքից 3 օր անց՝ հոկտեմբերի 10-ին, «Վրացական քայլերթ» ազգայնական կուսակցությունը (կազմավորվել է 1 ամիս առաջ, իսկ մինչ այդ՝ շուրջ 4 տարի, գործել է որպես ծայրահեղական խմբերի միավորում) «նախազգուշական» բողոքի ակցիա է կազմակերպել Դավիթ Գարեջիի վանական համալիրի մոտ՝Ադրբեջանի իշխանություններին վերջնագիր ներկայացնելով: «Քայլերթ»-ի 50-ից ավելի ներկայացուցիչներ «Գարեջին Վրաստան է» և «Կեցցե՛ Վրաստանը» վանկարկումներով երթ են իրականացրել, որից հետո «Վրացական քայլերթ»-ի առաջնորդ Սանդրո Բրեգաձեն կոչ է արել հարևան Ադրբեջանին՝ Դավիթ Գարեջիի վերաբերյալ կայացնելու «ընկերական որոշում»: «Մենք Ադրբեջանի իշխանություններին 10-օրյա վերջնագիր ենք ներկայացնում: Կարծում ենք՝ Ադրբեջանը մեր ընկեր երկիրն է, և որպես ընկեր՝ նա դուրս կբերի իր զինված կազմավորումները մեր սուրբ տարածքներից »,- ասել է Բրեգաձեն: Վերջնագրի չկատարման դեպքում «Վրացական քայլերթ»-ը սպառնում էր «խաղաղ» ճանապարհով գրաղեցնել վիճելի տարածքը: Ըստ Բրեգաձեի՝ Դավիթ Գարեջին «վաճառվել է» Վրաստանի երրորդ նախագահ Մ. Սահակաշվիլիի և Վրաստանի նախկին արտգործնախարար (2008-2012 թթ.) Գ. Վաշաձեի կողմից:

5- Հիշեցնենք, որ Վրաստանի իշխանությունները մեծ դժվարությամբ և ջավախահայության բողոքի հուժկու ալիքի ճնշմամբ թույլ տվեցին հումանիտար օգնության առաջին բեռնատարների ելքը երկրից: Նինոծմինդա-Բավրա սահմանային անցակետի մոտ հավաքվել էր շուրջ 3.000-5.000 ջավախահայ, ինչն անսպասելի էր: Վրաստանի իշխանությունները քաջ գիտակցում էին, որ այդ օրերին յուրաքանչյուր անզգույշ քայլ կարող էր անկառավարելի իրադրության առաջացման տեղիք տալ:

Արցախի պաշտօնական ճանաչումը, Ֆրանսան եւ մասամբ նորին

Հրաչ Վարժապետեան
ՀՅԴ Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ

Վերջին ամիսներուն ֆրանսեթրքական լարուած յարաբերութիւններու հետզհետէ վատթարացումը, որ Փարիզի կողմէ հասաւ մինչեւ իսկ իր դեսպանը Անգարայէն տուն կանչելու փուլին, թողած է այն տպաւորութիւնը, որ Ֆրանսա շուտով պիտի ճանչնայ Արցախի անկախութիւնը, մանաւանդ արցախեան պատերազմին վերաբերեալ ի նպաստ հայկական կողմին նախագահ Մաքրոնի ծանօթ յայտարարութենէն, ինչպէս նաեւ ֆրանսական քանի մը քաղաքներու կողմէ Արցախի ճանաչման քայլէն ետք: Անշուշտ, նման տպաւորութիւն պարզունակ է և աւելի ցանկութիւն է, քան լուրջ մօտեցում:

Սակայն նախքան Արցախի ճանաչման հարցին անդրադառնալը հպանցիկ ակնարկ մը պէտք է նետել ֆրանսեթրքական վերջին ամիսներու աւելի քան լարուած յարաբերութիւնների վրայ: Ի՞նչն է թէժացման տոն տուող պատճառը երկու երկիրներուն միջև, յատկապէս միջերկրականեան արևելեան աւազանին մէջ, ուր տեղի ունեցաւ մինչեւ անգամ ռազմական ուժի ցուցադրութիւն՝ «Շարլ Տը Կօլ» մարտանաւի գործուղումով:

Փարիզ հաշտ աչքով չ'ընկալեր Էրտողանի՝ Թուրքիոյ նէօօսմանական ծաւալապաշտական ախորժակը և այդ ուղղութեամբ քայլերը, որոնք լուրջ վտանգ կը սպառնան ֆրանսական տնտեսութեան ծանր արդիւնաբերութեան, որ ռազմավարական նշանակութիւն ունի Ֆրանսայի համար: Խօսքը կը վերաբերի առաջին հերթին կազի արտահանման, որ տուեալ ջուրերուն մէջ ֆրանսական «Թոթալ» ընկերութեան «մենաշնորհն» է:

Կան նաեւ այլ պատճառներ, որոնք կը մղեն Մաքրոնը որդեգրելու հակաանգարական իր այս քաղաքականութիւնը. Լիպիոյ ճամբով զէնքի վաճառք-փոխադրութիւնը ծայրայեղ իսլամական ահաբեկչական կեդրոններու և խմբակներու, որոնց գլխաւոր թիրախներէն մէկն է Ֆրանսան, Թուրքիա-Յունաստան սահմանով գաղթականներու արտահոսքը դէպի Եւրոպա (Էրտողան յաճախ կը սպառնայ իր դռները բանալ և յաւելեալ մէկ միլիոն գաղթական ուղարկել Եւրոպա) և վերջապէս՝ էրտողանեան կրկնուող ծանր նախատինքները Մաքրոնի հասցէին, որոնք, ի դէպ, սկսած են ընդվզումի և անհանդուրժողութեան մեծ ալիք յառաջացնել ոչ միայն քաղաքական շրջանակներէն ներս, այլև ֆրանսացի ժողովուրդին մէջ ընդհանրապէս:

Ֆրանսեթրքական այս լարուած յարաբերութիւններուն մթնոլորտին մէջ յառաջ մղուեցաւ նաեւ Արցախի պաշտօնական ճանաչման հարցը: Հարցում. այս խնդիրը պիտի դրուէ՞ր արդեօք ֆրանսական քաղաքական շրջանակներու սեղանին, եթէ տեղի չունենար թուրքևազերիական յարձակումը Արցախի և Հայաստանի վրայ, որ անմիջապէս վերածուեցաւ ծանրագոյն պատերազմի: Պատասխանը միանշանակ ոչ է: Սուրիայէն, Լիպիայէն, Փաքիստանէն վարձկաններու, ահաբեկիչներու և ժիհատիսթներու ներկայութիւնը մղեց Մաքրոնը անմիջապէս դիրքորոշուելու թրքական կողմին դէմ, իսկ հայկական կողմը, բնականաբար, առիթը օգտագործեց ճանաչման թեման յառաջ մղելու համար: Արցախի և Հայաստանի նախագահները, Հայաստանի վարչապետը այս ուղղութեամբ պաշտօնական դիմում յղեցին իրենց ֆրանսացի գործընկերոջ, իսկ տեղւոյն հայ համայնքը և լոպպին միասնաբար լծուեցան գործի, աւելի ճիշդ՝ բազմապատկեցին իրենց աշխատանքը, զոր նախաձեռնած էին արդէն վերջին հինգ տարիներուն, և որուն դրական արդիւնքն էր տարբեր քաղաքներու կողմէ Արցախի ճանաչումը կամ արցախեան քաղաքներու հետ բարեկամութեան համաձայնագրերու կնքումը:

Փակագիծ մը բանանք և ընդգծենք, գէթ պատմութեան համար ու յանուն արդարութեան, որ երբ կը խօսինք հայկական միաւորուած լոպպիի մասին, պէտք է առանց բարդոյթներու հաստատել, որ այդ լոպպիին մղիչ ուժը, «դինամօ»ն ՀՅԴ Հայ դատի յաջորդական յանձնախումբերն ու մարմիններն են՝

առանց այլևայլի: Նոյն մղումով ահաւասիկ Հայ դատի երկարամեայ բարեկամ, երեսփոխան Ֆրանսուա Փիւփոնի, գործակցաբար ու համադրաբար հայկական լոպպիին հետ, ինչպէս նաև վայելելով իր խումբ մը պատգամաւոր գործընկերներուն զօրակցութիւնը, անմիջապէս Ազգային ժողով ներկայացուց ճանաչման օրինագիծ մը, որ սկզբունքով պիտի քննարկուի մինչև տարեվերջ:

Ճանաչումը, սակայն, հեշտ ու մանաւանդ անմիջապէս իրագործելի գործընթաց չէ թէ՛ թեքնիք, թէ՛ մանաւանդ քաղաքական առումով: Խորհրդարանի զոյգ պալատներու (Ազգային ժողով և Ծերակոյտ) որոշումին համար հարկաւոր է քուէներու մեծամասնութիւն, որուն ապահովումը կը կարօտի լոպպիստական հսկայական աշխատանքի, որ տեղւոյն հայ համայնքը ոչ մէկ ճիգ կը խնայէ, ըլլայ ժողովրդային բողոքի նկատառելի հաւաքներով և ցոյցերով, ըլլայ ակադեմական և քարոզչական շրջանակներու մօտ տարուող յարաբերական աշխատանքով, ըլլայ քաղաքական հանդիպումներով՝ Էլիզէէն մինչև կառավարութիւն, մինչև խորհրդարանի զոյգ պալատներու ներկայացուցիչներ և անդամներ: Սակայն հակառակ ուղղութեամբ ևս աշխատանք կը տարուի անշուշտ:

Թուրքևազերիական խաւիարային կամ փեթրոտոլարային քաղաքականութիւնը ընդյատակեայ կը շարունակէ գործել յատկապէս քարոզչական դաշտին մէջ, որուն նպատակը հանրային կարծիքը ապակողմնորոշելն է:

Միւս կողմէ՝ կայ նաև հրէական լոպպիին ազդեցիկ ներկայութիւնը այս հարցի առնչութեամբ: Թուրքիոյ և Ատրպէյճանի դաշնակից և զէնքի մատակարարման աղբիւր Իսրայէլի գործօնը, բնականաբար, ջերմաչափին սնդիկն է հրէական լոպպիին համար, ուստի անոր տրամադրութիւնը բացասական է ճանաչման հարցով, նոյնիսկ եթէ հրէական յատկապէս ակադեմական և մտաւորական որոշ շրջանակներ որդեգրած են փրօհայկական դիրքորոշում և դէմ կ՚արտայայտուին Իսրայէլի գործադիր իշխանութեան և անոր ականջալուր լոպպիին դիրքորոշումին:

Վերջապէս՝ ամէնէն էականը Քէ տ՚Օրսէի (արտաքին գործոց նախարարութեան) կեցուածքն է, որ բարենպաստ գործօն մը չէ ճանաչման հոլովոյթին մէջ, ընդհակառակը՝ խոչընդոտող հիմնական գործօնն է: Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան մէջ Քէ տ՚Օրսէն միշտ ալ ունեցած է և ունի իր վճռական ըսելիքը, նոյնիսկ եթէ սահմանադրականօրէն հանրապետութեան նախագահին կը պատկանի վերջին խօսքը: Քէ տ՚Օրսէ քաղաքական այն հիմարկն է, որ սոսկական նախարարութենէ մը աւելին է և ունի յատուկ լիազօրութիւններ: Ան Հինգերորդ հանրապետութեան մէջ կը մարմնաւորէ Ֆրանսայի ռէալփոլիթիքը՝ զերծ աջի կամ ձախի գաղափարական ուղղութիւններէն, և կը մեկնի միայն ու միայն սեփական երկրի շահերէն: Եւ այս մեկնակէտով է, որ արցախեան պատերազմի վերաբերեալ առաջին իսկ վայրկեանէն նախարար Ժան-Իվ Լը Տրիան յայտարարեց, որ Փարիզ չէզոք դիրք կ՚որդեգրէ՝ հակառակ օր մը առաջ նախագահ Մաքրոնի հռչակած փրօհայկական յստակ կեցուածքին: Իսկ այս պարագային Քէ տ՚Օրսէի շահերը այլ բան չեն, եթէ ոչ Թուրքիոյ և Ազրպէյճանի հետ կնքած միլիառաւոր արոյի տնտեսական համաձայնագրեր՝ քարիւղի մարզէն մինչև ռազմական արհեստագիտութիւն:

Վերոյիշեալ բոլոր դժուարութիւններն ու խոչընդոտները գիտակցելով հանդերձ՝ միասնական ֆրանսահայութիւնը կը շարունակէ մնալ պահանջատէր, անդուլ կը պայքարի Արցախի ճանաչման համար՝ իր բոլոր հնարաւորութիւնները մէկտեղելով և առաջնորդուելով այն համոզումով, որ քաղաքական բառամթերքին մէջ «անկարելի» ածական գոյութիւն չունի, իսկ Ֆրանսան կը շարունակէ մնալ աշխարհի այն սակաւաթիւ պետութիւններէն, որոնք տակաւին կը պահպանեն համամարդկային արժէքներ: Առ այդ ժողովուրդին քուէով ընտրուած ներկայացուցիչներուն՝ խորհրդարանականներուն որոշումը կրնայ գերազանցել ռէալփոլիթիքը այնպէս, ինչպէս պատահեցաւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման պարագային: Այս երկուքը թէև երկու տարբեր թղթածրարներ են, սակայն ունին նաև նկատառելի հասարակ յայտարարներ: ■

Հոկտեմբեր 2020թ.

Հայ քաղաքական միտքի նորագոյն մարտահրաւէրը՝ այս պատերազմը

Վահէ Բրուտեան

Քաղաքական «մոռացկոտութեան» գինը ահաւոր է ու անչափելի, տասնամեակներու ընթացքին ձեւաւորուած, կազմաւորուած քաղաքական մշակոյթը անտեսելը՝ նոյնպէս:

20րդ դարասկիզբի հայ քաղաքական միտքը մեզի լուրջ ժառանգութիւն մը ձգեց, հարստութիւն մը: Հայաստանը աշխարհագրական հասկացութենէն պետական կառոյցի վերածելը 19րդ դարավերջի և 20րդ դարասկիզբի հայ քաղաքական միտքի մեծագոյն նուաճումը պէտք է համարել:

Ինչ իրագործեցինք

Այս մտածողութիւնն էր, որ գաղափարական հենքի վրայ նախ պատկերացուց հայութեան քաղաքական անօթը, ապա ձև ու մարմին տուաւ անոր: Հայ քաղաքական միտքը առաջադրեց, որ ինչպէս բոլոր ժողովուրդները, հայութիւնը ևս արժանի է իր հողերուն վրայ ունենալու իր սեփական պետութիւնը: Գաղափարականօրէն ան առաջադրեց նաև, որ հայ ազգը ո՛չ մէկ ուրիշէ գերադաս է և ո՛չ ալ ստորադաս, այլ հաւասարազօր մէկ անդամն է ազգերու համերաշխ գոյակցութեան:

Որպէսզի հայութիւնը իր սեփական պետութիւնն ունենար, անհրաժեշտ էր ազգային-ազատագրական պայքարի դաշտ նետուիլ՝ ունենալով գաղափարական ամուր խարիսխ ու քաղաքական ռազմավարութիւն: Մեր ռազմավարական նպատակները իրագործելու համար անհրաժեշտ էր ոչ միայն գործի լծել մեր ներազգային կարելիութիւնները, այլև արտաքին ճակատի վրայ փնտռել ու գտնել զինակիցներ, դաշնակիցներ ու առ այդ՝ նպաստաւոր հող՝ մեր ռազմավարութիւնը յաջողութեամբ պսակելու համար: Ասո՛ր համար էր, օրինակ, որ ՀՅ Դաշնակցութիւնը նախորդ դարասկիզբին, սեփական ուժերուն ապաւինելով հանդերձ, գործնապէս զօրակցեցաւ Պարսկաստանի մէջ սկսած սահմանադրական շարժումին, զինակցեցաւ ուրիշ յեղափոխական շարժումներու հետ՝ ընդդէմ օսմանեան բռնապետութեան: Եւրոպայի մէջ փորձեց գտնել քաղաքական յենարաններ, յատկապէս օրուան առաջադէմ մտաւորականութեան շարքերէն ներս: Պաքուի մէջ 1918ին ՀՅ Դաշնակցութիւնը չվարանեցաւ զինակցելու բոլշևիկներուն հետ (Ստ. Շահումեանի ճամբով)՝ պաշտպանելու համար թէ՛ քաղաքը և թէ՛ անոր հայ բնակչութիւնը: Սեփական ուժերուն ապաւինիլ ու միաժամանակ զինակիցներ գտնել, որպէսզի անոնք ևս մեր մէջ տեսնեն վստահելի խօսակից-գործակից, եթէ պիտի ուզենք հասնիլ մեր ռազմավարական նպատակներուն. ա՛յս էր այդ օրերու հայ քաղաքական միտքի կարևոր իրագործումներէն մին, որ այսօր՝ հոկտեմբեր- նոյեմբեր 2020ին, սուր կերպով զգացնել կու տայ ինքզինք:

Հայ քաղաքական միտքի փայլուն դրսևորումներէն մէկն էր Հայաստանի պետականութեան հռչակումի բանաձևը մայիս 30 1918ին, բայց մանաւանդ այդ անկիւնադարձը իրականութիւն դարձուցած Արամ Մանուկեան երևոյթը: Այդ յայտարարագրին մէջ չէր խօսուէր նորաստեղծ պետութեան սահմաններուն կամ տարածքին մասին, չէր խօսուէր նորաստեղծ պետութեան վարչաձևին մասին: Այդ ամէնը գալիք օրերուն ձգելով՝ պարզապէս կ՚ըսուէր, թէ, հաշուի առնելով Անդրկովկասի կոմիսարիատի փլուզումը, Թիֆլիսի Հայոց ազգ. խորհուրդը ինքզինք կը հռչակէ հայկական գաւառներու գերագոյն ու միակ իշխանութիւն, մինչև որ մօտ օրէն կազմուելիք կառավարութիւնը ինք ստանձնէ պետութեան ղեկը:

Բարացուցական պէտք է համարել նաև այն, որ նորանշանակ վարչապետ Հովի. Քաջազնունին պնդեց համախոհական (կօալիցիոն) կառավարութեան գաղափարը, որպէսզի այդ փոթորկոտ օրերուն հայութեան մէջ գործող բոլո՛ր քաղաքական ուժերն ու հոսանքները կրէին պատասխանատուութիւնը՝ երկիրը ոտքի հանելու:

Պետականազուրկ ժողովուրդը մէկ ազգ-պետութեան վերածելու համար օրուան քաղաքական ղեկավարութիւնը Հայաստանը հռչակեց միացեալ, ազատ ու անկախ (28 մայիս 1919): Վերջ կըտրուէր թրքահայ (տաճկահայ)-արևելահայ երևոյթին, վերջ կըտրուէր Արևելահայաստան-Արևմտահայաստան հասկացութիւններուն, և հիմը կըդրուէր ազգի ու հայրենիքի մէկութեան:

Պետականութեան հիմքերը հաստատելուն զուգահեռ՝ հայ քաղաքական միտքի փայլուն դրսևորումներէն էր նաև 1915ի ցեղասպանութիւնը ծրագրած դէմքերը պատժելու որոշումը, որ ընդունուեցաւ Երևանի մէջ ՀՅ Դաշնակցութեան 9րդ

Ընդհանուր ժողովին: «Նեմեսիս» գործողութիւնը, որ կը միտէր նաև վերականգնելու մեր ժողովուրդի վիրաւորուած արժանապատուութիւնը, միաժամանակ ցոյց տուաւ աշխարհին, որ անպատիժ չեն կրնար մնալ հայութեան ֆիզիքական գոյութեան սպառնացողները: Այս գաղափարը տարբեր տարողութեամբ դրսևորուած էր արդէն 1897ին Խանասորի արշաւանքով: «Նեմեսիսի» պարագային գաղափարն ու էութիւնը նոյնն էին, միջոցներն ու պայմանները՝ տարբեր:

Ազգի մէկութեան ու ապահովութեան այս գաղափարական նուաճումը կը մնայ հենքը մեր այսօրուան քաղաքական պայքարին, և այդ հենքին վրայ էր, որ ՀՅ Դաշնակցութեան քաղաքական միտքը 1970-80 ական թուականներուն մշակեց մեր դատի հետապնդումի թէ՛ գաղափարական և թէ՛ քաղաքական-ռազմավարական մօտեցումները:

Հայութիւնն ու Հայաստանը միացեալ տեսնելու գաղափարական մօտեցումն էր, որ թափ տուաւ հայկական պահանջատիրութեան նոյն այդ երկու տասնամեակներուն: Նոյն գաղափարական հենքին վրայ էր, որ ՀՅ Դաշնակցութիւնը փարեցաւ Արցախի ազատագրական պայքարին՝ Ստեփանակերտի մէջ ծայր առած ցոյցերուն առաջին իսկ օրէն համոզում յայտնելով, որ այդ պայքարը թէ՛ արդար է և թէ՛ անխուսափելի: Ու չէինք սխալած:

Հայ քաղաքական միտքի 1918ի սերունդն էր, որ ստեղծեց պետական կառոյցներ ու վարչամեքենայ՝ նախարարութիւններ, դատական համակարգ, բանակ, արտաքին յարաբերութիւններ, դեսպանատուներ, համալսարան:

Այս բաժինը ամփոփելով՝ պէտք է նշել, որ Պերլինի դաշնագրէն ետք հայ իրականութեան մէջ ձևաւորուած զէնքի գաղափարը զարգանալով ու մշակուելով հասաւ մինչև պետականութեան ստեղծում, «Նեմեսիս», Սփիւռքի կազմակերպում, Հայ դատի գործնական հետապնդում, Արցախի ազատագրական պայքար: Մէկ խօսքով՝ հսկայական հարստութիւն:

Հասանք մեր օրերը

Ինչպէս վերը հաստատեցինք, 70-80 ական թուականներուն այս հարստութեան շէնքին վրայ նոր քարեր դրուեցան: Դժբախտութիւն է, որ Հայաստանի վերանկախացման տարիներու հայ պետական ղեկավարութիւնը մեծ չափով կտրուած էր այդ հարստութենէն: Մինչև իսկ ականատես եղանք նոյն այդ հարստութիւնը ուրանալու փորձերուն, յատկապէս 90ի սկիզբները և վերջին երկուքուկէս տարիներուն, երբ մեր ժողովուրդի արդար իրաւունքները անտեսելու գնով Թուրքիոյ հետ «բարիդրացիական» կապերու մասին «մեծաշռինդ» յայտարարութիւններ կ՚արուէին:

Ճիշդ է, որ Արցախի ազատագրումով կենսական քայլ առնուած էր Միացեալ Հայաստանի կերտման

ուղղութեամբ, և սա անուրանալի իրողութիւն է: Սակայն միաժամանակ հայ քաղաքական միտքի կտրած ճամբան անտեսելու դրսևորումներէն էին նախագահ Ռ. Քոչարեանի օրով սկսած հայ-թրքական, այսպէս կոչուած, «հաշտեցման» փորձերը: Անգարայի իշխանութիւնները իրենք ևս հետամուտ եղան Սփիւռքի մէջ գտնելու և օգտագործելու հայ Քուիսլինկներ: Այս ճիգերը ձախողութեան մատնուեցան ՀՅ Դաշնակցութեան կողմէ:

Պակաս վտանգաւոր չէին նախագահ Սերժ Սարգսեանի «ֆութպոլային դիւանագիտութեան» դրսևորումները: Բարեբախտաբար, սա ևս կարելի եղաւ օրին ձախողութեան մատնել՝ շնորհիւ ՀՅ Դաշնակցութեան թափած ճիգերուն, որ օգտագործեց իր ժառանգած, մշակած ու փայփայած այդ քաղաքական-գաղափարական զինանոցը՝ ստեղծելով ժողովրդային ուժեղ ընդդիմութիւն: Միւս կողմէ, սակայն, իրողութիւն է նաև այն, որ Ռոպերթ Քոչարեան և Սերժ Սարգսեան անդրդուելի մնացին մէկ խնդրի՝ Արցախի անկախութեան պահպանման մէջ ու մերժեցին հարցի լուծման որևէ տարբերակ, որ չէր երաշխաւորեր Արցախի գոյութիւնը Ատրպէյճանի կազմէն դուրս:

Վերջին երկուքուկէս տարիներուն Հայաստանի քաղաքական ղեկը ստանձնած Ն. Փաշինեանի իշխանութիւնը, անկախ անկէ, որ գաղափարական որևէ յայտարարուած համոզում չունէր, քաղաքականօրէն ինք ևս մեծ չափով խզուած էր մեր նշած՝ քաղաքական միտքի կուտակած փորձառութենէն: Այս պատճառով ալ թէ՛ ներքին՝ ներազգային վարքագծի և թէ՛ արտաքին քաղաքականութեան մէջ արձանագրեց լուրջ խարխափումներ: Խօսքն ու գործը երբէք չհամապատասխանեցին իրարու: Մինչ 20րդ դարասկիզբի հայ քաղաքական այրերը անձն քառսէն պետականութեան հիմքեր ստեղծեցին՝

համապատասխան հիմնարկութիւններով (ինստիտուտ), ու ամէն քայլափոխի պետական մտածողութեան համահունչ քայլեր առին, այս օրերուն մենք ականատես եղանք վարչական կառոյցներու լուծարքին, ինչպէս էր պարագան կարգ մը նախարարութիւններու: 1920ին Նիկոլ Աղբալեանի նման մտաւորական մըն էր, որ գալիք սերունդներու ազգային ու գիտական դաստիարակութեան միտող շօշափելի քայլեր կ՚առնէր՝ պետական համալսարան հիմնելով, իսկ այսօր մենք ականատես կ՚ըլլանք ազգային դաստիարակութեան այնպիսի հայեցակարգերու մշակման, որոնց ներշնչման աղբիւրները բացայայտօրէն կասկածելի նկարագիր ունին:

20րդ դարասկիզբի հայ քաղաքական միտքը ըմբռնած էր այն պարզ ճշմարտութիւնը, որ, մեր սեփական ուժերուն յենելով հանդերձ, անհրաժեշտ է արտաքին քաղաքականութեան գետնի վրայ զինակիցներ որոնել ու գտնել՝ առանց տարբերութիւն դնելու տուեալ ուժերու գաղափարա-քաղաքական հակումներուն միջև: Այսպէս կը բացատրուի թէ՛ Եւրոպա և թէ՛ Մոսկուա առաքուած դիւանագիտական պատուիրակութիւններու աշխատանքը, որ կը բխէր ամէնուրեք Հայաստանի շահերը հետապնդելու ռազմավարութենէն: Իսկ արտաքին ուժերը ամէն բանէ առաջ, միշտ և ամէնուրեք կը փնտռեն յուսալի ու վստահելի խօսակիցներ: Մեր պետական այրերուն կողմէ դրսևորուած անհետևողական ու շատ յաճախ ալ մեծամիտ դրսևորումները չեն կրնար օտար մայրաքաղաքներուն մէջ յարգանք պարտադրել մեր երկրին նկատմամբ:

Մեր պետութեան ղեկին այսօր մենք չունինք Ռուբէն Տէր-Մինասեանի ռազմավարական միտքին հաղորդ անձեր, չունինք Նիկոլ Աղբալեանի նման հայ մշակոյթի խորքերը պեղած անձնաւորութիւններ, չունինք Արամի կամքին գաղափարական ակունքներուն քաջածանօթ պետական ղեկավարներ:

Հայաստանի վերանկախացումէն ետք հայ քաղաքական միտքի՝ մեր նշած հարստութենէն խզումը ծանր կացութեան մատնած է մեր երկիրն այսօր: Այսօրուան կացութեան մէջ դրական բեկում կարելի է մտցնել միայն այն պարագային, երբ մեր երկրի քաղաքական վերնախաւը ընկալէ, իրացնէ և տիրութիւն ընէ մեր հարիւրամեայ կենսափորձին՝ հետևելով Արամ Մանուկեանի, Նիկոլ Աղբալեանի և ընդհանրապէս 1918ի սերունդին թողած հոգեմտաւոր ժառանգութեան:

Հոկտեմբեր 2020թ.

Հունական դիցաբանության վրեժի Ասպվածուհի «Նեմեսիս»ի արձանը

Ապագայի կուսակցութիւն
(ՀՅԴ հայրենացման երեսունամեակին առիթով)

Շողիկ Աշըգեան
Պատմական գիտությունների թեկնածու

«Դաշնակցութիւնը իր արժէքաբանութեամբ ոչ միայն անցեալի և ներկայի կուսակցութիւնն է, այլև ապագայի»: (Յայտարարութիւն, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին, 8 Օգոստոս, 2020)

Ա. Յետահայաց ակնարկ

Իւրաքանչիւր ազգ կ'ունենայ իր տարերքը, որ «կը փոթորկի» պատմական ճակատագրական պահերուն, կը շարժի անսխալ ուղղութեամբ ու անշրջանցելի կերպով: Ընկերային ամէն շարժում կամ քաղաքական ամէն ալիք, թեկուզ և հուժկու, անպայմանօրէն տարերքի արտայայտութիւն կրնայ չըլլալ: Հայրենի հայութեան տարերքը վերջին անգամ փոթորկեցաւ 1988ին, որուն իբրև հետևանք՝ ան իր վրայէն յաղթականօրէն թօթափեց խորհրդային լուծը, դարձաւ պահանջատէր և, ինչպէս միշտ հայոց պատմութեան մէջ, յաղթական աւարտին հասցուց իր նորագոյն ազատագրական պայքարը՝ Արցախի անկախ պետութիւնը հիմնելով:

Ընթացիկ տարուան օգոստոսին լրացաւ Հայաստանի մէջ ՀՅ Դաշնակցութեան պաշտօնական ներկայութեան երեսունամեակը: 1989էն հայրենի հողին վրայ արդէն վերընձիւղած՝ հանրապետութեան ամբողջ տարածքին կառոյց ունենալու մասին 8 օգոստոս 1990ի իր յայտարարութեամբ ՀՅ Դաշնակցութիւնը մուտք գործեց քաղաքական դաշտ: Հայաստանը ամբողջապէս չէր անկախացած, իշխանութեան բաժնեկիցներ էին Համայնավար կուսակցութիւնն ու ՀՀՇն:

Դաշնակցութեան վերադարձը հայրենիք պայմանաւորուեցաւ 1988ի արցախեան պահանջատիրութեան պատմական պահու թելադրանքով, երբ Հայաստանի ու Արցախի հայութիւնը «կու գար տէր կանգնելու համազգային այն առաջադրութեանց, որոնք կը ներշնչուէին հայ ազգային-ազատագրական պայքարէն և կ'արձագանգէին Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարական աւանդներուն» (ընդգծումը մերն է),- ինչպէս օրին կը հաստատէր հայրենի հայութեան վերադառնալու իր որոշումը «Դէպի Երկիր» տարազումով բանաձևած ՀՅԴ 24րդ Ընդհ. ժողովը (1988): Վերադարձի առաջին հաստատակամ քայլերը սկիզբ առին Արցախէն, ուր ՀՅ Դաշնակցութիւնը ազատագրական պայքարին իր մասնակցութեամբ և անոր գաղափարական յստակեցում ու նպատակասլաց ուղղութիւն հաղորդելու առումով յառաջապահ ուժերէն մէկը եղաւ:

Վերահայրենացումով անոր համար սկիզբ առաւ պետականաշինութեան մէկ նոր հանգրուան մը՝ կամրջելով Հայաստանի առաջին հանրապետութեան (1918-1920) կենսափորձը, գումարած Սփիւռքի

կազմակերպման, արդիւնաւէտ կառավարման, անոր՝ քաղաքական, մշակութային, ընկերային և յարաբերական մարզի մէջ հարուստ փորձառութիւնը, որ սեփականութիւնը դարձաւ կուսակցութեան հայրենի կազմակերպական նորակազմ միաւորին: Այնպէս որ ՀՅ Դաշնակցութիւնը հայաստանեան իրականութեան մէջ առաջին օրէն զատորոշուեցաւ նորակազմ կուսակցութիւններէն և շարժումներէն իր մէկդարեայ պատմաքաղաքական հարուստ կենսափորձով, բայց նաև իր ընկերվարական գաղափարախօսութեամբ և ունենալով համահայկական կազմակերպական կառոյց: Ասոնց կողքին իր հետ բերաւ արդիական քաղաքական մշակոյթ:

Պէտք է հաստատել, որ վտարանդի ՀՅ Դաշնակցութիւնը բնաւ չէր դադրած հայրենիք իր վերադարձը փայփայելէ: Երկբևեռ աշխարհակարգի մէջ այդ մէկը ցնորատեսութեան հաւասարազօր էր: Գրաւը դրուած էր ոչ այնքան աշխարհաքաղաքական կացութիւններու փոփոխականութեան վրայ, որքան այն համոզումին, որ հայութեան խորթ որևէ վարչակարգ չէր կրնար տևական ըլլալ: Այդ համոզումով ալ Դաշնակցութիւնը խորհրդային վարչակարգին հանդէպ իր գաղափարական և քաղաքական ընդդիմախօսի դիրքէն անխնայ քննադատեց Խորհրդային Հայաստանի իշխանութիւնը, բայց միաժամանակ սփիւռքահայ զանգուածներուն ուշադրութիւնը սևեռած պահեց ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ վրայ՝ անոնց մէջ վառ պահելով Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստանի ազգային տեսլականը, զոր իրականացած տեսնելու յոյսով Սփիւռքի մէջ դաստիարակուեցան սերունդներ: Միւս կողմէ՝ 8 օգոստոս 1990ի յայտարարութիւնը եկաւ ցոյց տալու, որ խորհրդային ամբողջատիրական կարգերուն տակ ապրող հայը սպասած էր Դաշնակցութեան վերադարձը, որուն ծլարձակումը, լաւագոյն փաստը ըլլալով, բոլոր ժամանակներու համար տուած կ'ըլլար բիւրեղ ու հատու պատասխանը բոլոր անոնց, որոնք ինչ-ինչ շիլ ու շեղ հաշիներով պիտի փորձէին սեպ խրել կամ խրամատ բանալ

հայրենի ժողովուրդին և Դաշնակցութեան միջև:

Արդարև, այն պատմական օրերուն շահադէտութիւնը, ակամայ ընտրանքը կամ ուղղորդուած մոլորանքը չէին, որոնք խորհրդային հայ մարդը մղեցին կուսակցութիւններու (անոնց կարգին յատուկ նպատակով ստեղծուած կեղծ «Դաշնակցութիւն»ը) և շարժումներու առատութեան մէջէն ընտրելու Դաշնակցութիւնը, այդ կուսակցութեան պատմութիւնը, գաղափարախօսութիւնը, անոր ազգային նպատակները, այդ կուսակցութեան հետ կապուած ընտանեկան ժառանգական յիշողութիւնը, ընդհանրական բացատրութեամբ՝ ազնիւ ու գիտակից հայ մարդու գաղափարականութիւնն ու ազգային ձգտումները:

Աւելին՝ Հայաստանի մէջ Դաշնակցութեան ՎԵՐԸՆՁԻՒՂՈՒՄԸ եկաւ ապացուցելու Խորհրդային Հայաստանի իրերայաջորդ իշխանութիւններու հակադաշնակցական պետական քաղաքականութեան սնանկութիւնը, առ այն, որ, հակառակ հալածանքի ու աքսորի, հակառակ հետևողական հակաքարոզչութեան, կարելի չէր եղած հայրենի հայութենէն արմատախիլ ընել Դաշնակցութիւնը, որ իր հիմնադրութեան (1890) հետևած երեսունամեայ ազատագրական պայքարով, անկախ պետութիւն կերտելով խոր հետք ձգած էր հայ մարդու մտքին ու հոգիին մէջ: Փաստօրէն, ան դուրս չէր եկած հայրենի բնաշխարհէն, արմատախիլ չէր եղած հայրենի հողէն: Հայրենի հայութեան մէջ անթեղուած մնացած էր իբրև ոգեղէն ներկայութիւն, իբրև ազգային ապրումներու ու նպատակներու խորհրդանիշ կուսակցութիւն:

ՀՅ Դաշնակցութեան հայրենացումը իր հետ բերաւ կարգ մը ճշմարտութիւններ, որոնք ինչպէս այն օրերուն համար, այնպէս ալ ներկայի և ապագայի համար անժամանցելի են.

-Չկայ դուրսի և ներսի Դաշնակցութիւն. կայ ՄԷԿ Դաշնակցութիւն:

- Կայ ՄԷԿ հայութիւն՝ Սփիւռքի և հայրենի հատուածներով, որոնք իրենց ազգային ապրումներով և ձգտումներով անբաժանելի են:

Եւ վերջապէս՝ ՀՅ Դաշնակցութիւնը, Հայաստանի մէջ կազմակերպական կառոյց ունենալով (Խորհրդային Հայաստանի մէջ կուսակցութիւնը իր կառոյցը լուծարած էր 1933ին՝ հայրենի հայութեան ապահովութիւնը չվտանգելու նկատառումով), դադրեցաւ համասփիւռքեան կուսակցութիւն ըլլալէ և դարձաւ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ կուսակցութիւն՝ վերագտած ըլլալով իր գոյութեան և լինելիութեան պատմական մայր հունը, ուրկէ հարիւրամեայ կուսակցութեան համար սկիզբ կ՚առնէր անկիւնադարձային պատմական մէկ նոր հանգրուան:

Բ. Երեսունամեայ կենսափորձին հետքերով... և անկէ անդին

Անցած երեսուն տարիները եկան մեծապէս հարստացնելու 130ամեայ կուսակցութեան գործունէութեան ծանրակշիռ վաստակը,



8 Օգոստոս 1990ին, Հ.Յ.Դաշնակցութիւնը պաշտօնապէս բացայայտեց կազմակերպական իր ներկայութիւնը Հայաստանի մէջ: Պատմական այդ յայտարարութիւնը Երեւանի մէջ կատարեցին Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկերներ Հրայր Մարուխեան եւ Հրաչ Տասնապետեան, որոնք իրենց առաքելութեան աւարտին, Ֆրանսայի մեր պաշտօնաթերթ «Կամք»ին – 17 Օգոստոս 1990 համարով – տուին հետագայ էջերով արտատպուած հարցազրոյցը՝ լուսաբանելով պատմական այդ որոշումը եւ, միաժամանակ, վերահաստատելով հայաստանեան մեր բաղաքականութիւնը առաջնորդող գլխաւոր սկզբունքները: Հարցազրոյցին կցուած էր նաեւ այս լուսանկարը, ուր ներկայացուցիչ մեր ընկերները շնորհաւորական այցելութիւն մը կու տան հայրենի իշխանութեանց նոր վարիչներուն՝ խ. Հայաստանի Գերագոյն խորհուրդի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի եւ վարչապետ Վազգէն Մանուկեանի:

3

(431)

ազատագրական պայքարի կենսագրութիւնը, մարտական, ազգային, քաղաքական, բարոյական և մարդկային դիմագիծը, 1918-1920 թուականներու պետականաշինութեան կենսափորձին վրայ գումարուեցաւ երեսուն տարիներու ներդրում: Կը բաւէ հպանցիկ թղթատել ՀՅԴ անցած երեսուն տարիներու մամուլը՝ համոզուելու համար, թէ ՀՅ Դաշնակցութիւնը (ընդդիմութիւն, թէ իշխանութեան մաս կազմող կուսակցութիւն) ինչ գնահատելի ներդրում ունեցած է Արցախի ազատագրական պայքարին, պետականաշինութեան, պետութեան հզօրացման, հայրենիքի շէնացման և քաղաքացիական հասարակութիւն ստեղծելու մէջ:

Բայց և այնպէս, պէտք է հարց տալ. ՀՅ Դաշնակցութեան գործունէութիւնը գնահատելու համար բաւարար չէ նկատի ունենալ անոր անսակարկ նուիրումը հայոց նորագոյն ազատագրական պայքարին, երբ թշնամին յաւելեալ արիւն կը պահանջէր հայութենէն, մինչ առաջին իշխանութիւնը հետամուտ էր միայն յաւելեալ նիւթական արժէք դիզելու՝ պետական նշանակութեամբ տնտեսական կառոյցները փոշիացնելով, վայրագ ազատականութեան ծուռ հիմերուն վրայ պետականութեան առաջին քարերը դնելով: Պէ՞տք է հարց տալ, թէ անոր որ կեցուածքը կամ քայլը համահունչ չէր պետութեան շահերուն կամ հայրենի հայութեան պահանջներուն ու ձգտումներուն: Ուրեմն ինչո՞ւ ան անկախ ու ժողովրդավար Հայաստանի մէջ հալածուեցաւ, հարուածուեցաւ, բանտարկուեցաւ, ինչո՞ւ ի տես այս ժխտական երևոյթին՝ յանուն ճշմարտութեան ու արդարութեան ժողովրդային բողոք չբարձրացաւ, ինչո՞ւ ներկայիս կը մեղադրուի երկրորդ և երրորդ իշխանութիւններուն հետ այս կամ այն ձևաչափով համագործակցած ըլլալուն համար (արդեօք այն պատճառով, որ անոնց առաջին դէմքերը, Արցախէն իրենց հետ ներազգային քաղաքական կեանքը չբևեռացնելու մշակոյթ բերած ըլլալով, բացայայտօրէն թիրախ չընտրեցին Դաշնակցութիւնը՝ ի տարբերութիւն առաջին և չորրորդ իշխանութիւններու առաջին դէմքերուն), ան ի՞նչ պէտք է ըներ, որ չըրաւ կամ թերացաւ ընելու: Ինչո՞ւ ներկայիս անոր դէմ նոր արշաւ մը սանձազերծուած է Հայաստանի մէջ և անկէ դուրս՝մինչև Լիբանան և քիչ մը ամէն կողմ, ո՞վ, ի՞նչ ուժեր կանգնած են նորոգ

այդ արշաւի թիկունքին, երբ Դաշնակցութիւնը չունի «ներքին թշնամի», երբ անոր համար խորթ է այդ հասկացութիւնն իսկ:

Այս և շատ այլ հարցադրումներ բացառապէս կը դրուին ՀՅ Դաշնակցութեան նկատմամբ Հայաստանի իշխանութիւններուն կեցուածքները նկատի ունենալով: Անոնց պատասխանները պէտք չէ փնտռել ժողովուրդին մէջ, որովհետև ՀՅ Դաշնակցութիւնը ժողովուրդին հետ խնդիր չունի, չէ ունեցած, անկէ պահանջելու հաշիւ չունի, թէև արդարօրէն անկէ ունի ակնկալիք, բայց ոչ կուսակցական նպատակներու համար, այլ ժողովուրդին իսկ բարօրութեան ի խնդիր: Ան կ'ակնկալէ ու կ'աշխատի, որ հայ քաղաքացին գիտակից դառնայ իր ազգային, մարդկային, քաղաքացիական, ընկերային և տնտեսական իրաւունքներուն և պայքարի անոնց տէր դառնալու համար:

Ներկայիս ՀՅ Դաշնակցութիւնը կը մեղադրեն Հայաստանի երկրորդ և երրորդ իշխանութիւններուն հետ գործակցած ըլլալուն համար: Պէտք է յստակեցնել. ՀՅ Դաշնակցութիւնը այնքան ատեն, որ իշխող կուսակցութիւն չէ, եւ ընդդիմադիր է (քննադատելով իշխանութեան բացթողումները, նոյնիսկ երբ պետական պաշտօնով մասնակից է իշխանութեան), եւ պետութեան հզօրացման համար իշխանութեան զօրակիցն ու գործակիցը՝ առանց անոր կցորդը դառնալու: Այս պարզ ճշմարտութիւնը չհասկնալ ձևացնելը կամ խեղաթիւրել ջանալը քաղաքական և պետական մտածելակերպի տհասութիւն է:

Առ ի գիտութիւն այսպիսի մտածողներուն՝ ՀՅ Դաշնակցութիւնը գործակցած է նոյնիսկ Խորհրդային Հայաստանի իշխանութեանց հետ: Այնպէս որ ՀՅ Դաշնակցութիւնը Հայաստանի անկախութենէն տասնամեակներ առաջ կտրած անցած է Սփիւռքի և հայրենի հայութեան հատուածները իրարմէ բաժնող սահմանը՝ կարելի դարձնելով կենդանի քաղաքական կապի հաստատումը խորհրդային վարիչներուն հետ ազգային հասարակաց օրակարգի շուրջ՝ այս պարագային Հայոց ցեղասպանութեան յիսնամեակին իբրև մէկ ժողովուրդ պահանջատէր ներկայանալու:

ՀՅ Դաշնակցութիւնը համագործակցութեան իր ձեռքը հաւասարապէս մեկնեց անկախ Հայաստանի բոլոր իշխանութիւններուն: Անոր այս կեցուածքը սկզբունքային էր և պայմանաւորուած չէր միայն քաղաքական իրադրութիւններով, այլ կը բխի անոր գաղափարախօսութենէն, արժէքաբանութենէն և քաղաքական առաջադրանքներէն, պետութիւնը հզօրացնելու համար համահայկական միասնութիւնը ամրապնդելու ու մէկ բռունցք դառնալու հրամայական անհրաժեշտութենէն: Իշխանութիւնները իրենք էին, որ մերժեցին համագործակցիլ, իրենք էին, որ պէտք եղած ձևով չգնահատեցին Դաշնակցութեան ներուժը, իրենք էին, որ հակադրուեցան Դաշնակցութեան: Քաղաքական խաղի կանոններէն անդին՝ հասարակութիւնը Դաշնակցութենէն հեռու պահելու նպատակադրումով ժողովրդային զանգուածներու ենթագիտակցականի մէջ առկայծ հակադաշնակցականութիւն հրահրեցին (ներկայիս ճիշդ այդ երևոյթին ականատեսներն ենք), որովհետև ժողովրդային զանգուածներէն առաջ և անոնցմէ աւելի իշխանաւորները իրենք քաջածանօթ են ՀՅ Դաշնակցութեան պատմութեան, անոր ներկայացուցած ուժին ու հետապնդած ազգային նպատակներուն և մանաւանդ շատ լաւ գիտեն, որ Դաշնակցութեան ուժի միակ աղբիւրը ժողովուրդն է:

Եւ ի՞նչ ցոյց կու տան փաստերը: Հայաստանի առաջին նախագահին բիրտ հարուածը, ներկայ իշխանութեան առաջին դէմքերու զիկզակուող փոքր քայլերու մարտավարութիւնը անզօր դուրս եկած են ՀՅ Դաշնակցութիւնը շեղեցնելու իր ուղեգիծէն կամ զայն լուսանցքայնացնելու քաղաքական ասպարէզէն: Անոր պատասխանը ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾը եղաւ: Ան անշեղօրէն կը շարունակէ առաջ անցնիլ: Կը շարունակէ համակարգային փոփոխութիւններու պահանջը դնել, կառուցողական դիրքերէ դէմ կանգնիլ ազգային քաղաքականութեան ուղիէն շեղող ամէն քայլի, իշխանութիւններէն կը պահանջէ ազգային պահանջատիրական խիզախ կեցուածքներ ու հաստատուն քայլեր, անոնցմէ կ'ակնկալէ պետութիւնը չկուսակցականացնել, ի խնդիր քաղաքական կայունութեան և հասարակական բնականոն զարգացման՝ պետական շահը գերիվեր դասել կուսակցական-խմբակային նկրտումներէ...և մասամբ նորին:

Գուցէ ոմանք այպանեն, քննադատեն, մեղադրեն ՀՅ Դաշնակցութիւնը ժողովուրդին գլուխը չանցնելու, բաւարար քաղաքական վճռականութիւն չցուցաբերելու և պէտք եղած քաղաքական արդիւնաւէտ գործելակերպեր չկիրարկելու մէջ: Արդեօք իրեն պակսեցաւ անհրաժեշտ կամքը, գուցէ շատ աւելի վճռակա՞ն պէտք է ըլլար և այս կամ այն ձևով հասնէր իշխանութեան՝ «Եթէ կ'ուզէք, որ ձեզ ղեկավարենք, կը ղեկավարենք» ի փոխարէն ընտրելով այլ մարտավարութիւն:

Պատճառ չկայ պնդելու, որ ՀՅ Դաշնակցութիւնը անսխալական է: Կարելի է համաձայն չըլլալ անոր այս կամ այն քաղաքական կեցուածքին, այս կամ այն գործունէութեան երեսին, մէկ կամ միւս

առաջադրանքին և, բնականաբար, իրաւունքը ունենալ այդ բոլորը ազատօրէն ու ազնուաբար քննադատելու: Անոր հարիւրերեսունամեայ պատմութիւնը վկայ, որ ՄԷԿ բանի մէջ, որ ան բնաւ չէ սխալած, այդ ալ իր հարազատ ժողովուրդին հետ իր յարաբերութեան եղանակն է: Անոր հետ միշտ եղած է անկեղծ, շիտակ, թափանցիկ ու բացճակատ: Ան ՋՈՒԳԱՀԵՌ ընթացաւ ժողովուրդին տրամադրութիւններուն հետ՝ յարգելով անոր քաղաքական նախասիրութիւններն ու անոնցմէ բխած ընտրական արդիւնքները: Բայց նաև ամէն առիթի անոր տուաւ այլընտրանքի կարելիութիւնը՝ իր թեկնածութիւնը ներկայացնելով: Եւ բնաւ պէտք չէ երջանիկ ինքնախաբկանքը ունենան բոլոր անոնք, որոնք կը կարծեն, թէ ՀՅ Դաշնակցութեան ներկայացուցած քաղաքական կշիռը վճռած է ի՛նք ժողովուրդը՝ անոր քուէ չտալով: Քուէ չտալը դեռ չի նշանակեր, թէ ժողովուրդը կը մերժէ ՀՅ Դաշնակցութիւնը: Ընդհակառակը՝ մէկէ աւելի անգամ քուէարկող հասարակութեան մեծամասնութիւնը ՄԵՐԺԱԾ է իր իսկ ընտրածները: Եւ ընդհակառակը՝ ՀՅ Դաշնակցութեան ընտրազանգուածը, թէև թուաքանակով քիչ, բայց շատ աւելի կայուն դուրս եկած է:

Ներկայիս ՀՅ Դաշնակցութեան առանցքային նախաձեռնութեամբ ու ղեկավարութեամբ իշխանափոխութեան, նոր որակի իշխանութիւն ունենալու պահանջը արտախորհրդարանական ընդդիմադիր քաղաքական կուսակցութիւններու քննարկման առարկայ է՝ ի տես իշխանութիւններուն ապիկար կառավարման հետևանքով պետութեան հիմքերու խարխլման, անվտանգութեան սպառնացող մարտահրաւէրներուն, կայուն զարգացման միտումներու բացակայութեան ու համազգային ներուժը համախմբող քայլերու չգոյութեան:

Թէ որ քաղաքական ուժը յաջորդ ընտրութիւններուն պիտի հասնի իշխանութեան, կ'որոշուի ժողովուրդի քուէով. առաջին անգամ ըլլալով յուսալի է, որ ան իր քուէն տայ վասն ՅԱՆՈՒՆի և ոչ թէ ի հաշիւ ՄԵՐԺՈՒՄԻ: Կարևոր է, որ ան պատրաստ ըլլայ քուէ տալու ծրագիրի և ապա՝ ի՛նչ տեսակ ծրագիրի:

Իշխանութեան կը հասնի՞ ՀՅ Դաշնակցութիւնը: Տեսականօրէն այդ հաւանականութիւնը՝ իբրև կարելիութիւն, ինչպէս որևէ քաղաքական ուժի, այնպէս ալ Դաշնակցութեան պարագային բաց է ու բացառուած չէ: Առանց անտեսելու այլ գործօններու ներգործութիւնն ու ազդեցութիւնը՝ հանրութեան գիտակցումը իր իրաւունքներուն, առարկայական համապատասխան գործօններու առկայութիւնը աւելի հաւանական կը դարձնեն այդ կարելիութիւնը: Ինչ որ հաստատապէս կարելի է կանխատեսել, այն է, որ երբ հայրենի հայութիւնը իշխանութիւնը վստահի ՀՅ Դաշնակցութեան, այդ պահէն սկիզբ կ'առնէ իր ազատագրութիւնը ընկերային-տնտեսական ամէն տեսակի շահագործումներէն, որոնք անցնող երեսուն տարիներուն մեծ չափերու հասած են՝ հարուած հասցնելով իշխանութիւն-հանրութիւն ներդաշնակ յարաբերութեան և հանրային համերաշխութեան: Ազատական իշխանութիւնները հետամուտ չեղան ընկերային հաւասարութիւն և արդարութիւն հաստատելու: Ասկէ ետք ալ որևէ ազատական իշխանութիւն դժուար թէ իրեն վերապահէ այդ պատիւը:

Երեսուն տարիներու բազմաբովանդակ վաստակով կենսագործուած է հայրենիքի մէջ ՀՅ Դաշնակցութեան՝ քաղաքական հաշուառելի ուժ ըլլալու իրողութիւնը, երաշխաւորուած են անոր լինելիութիւնը և գործունէութիւնը հայրենի կենսատու հողին վրայ՝ անկախ բոլոր հանգամանքներէն:

Գ. ՀՅ Դաշնակցութիւնը՝ ապագայի կուսակցութիւն

ՀՅ Դաշնակցութիւնը հայրենիք մուտք գործեց՝ ունենալով հիմնարար սկզբունքներ, յստակ ռազմավարութիւն և նախագծուած քաղաքական ուղեգիծ: 1988ի դրութեամբ նախապայման դրած էր, որ իր վերադարձով ժողովուրդին շարժումի ազատութիւնները և ընդհանրապէս ապահովութիւնը չվտանգէ, դէմ էր Հայաստանի մէջ հրահրուող հակառուսական տրամադրութիւններուն, որովհետև վնաս կը պատճառէին ազգային քաղաքականութեան և շահերուն, կ'ընդգծէր համաթուրանականութեան վտանգը, ինք իրեն իրաւունք կը վերապահէր Հայաստանէն ներս բացասական երևոյթներու նկատմամբ ցուցաբերելու ընդդիմադիր քննադատական մօտեցում: Տակաւին կ'առաջադրէր ապահովել սփիւռքահայ ներդրումներ՝

սատարելու համար Հայաստանի տնտեսական հզօրացման, նախանձախնդիր էր, որ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները միակողմանի չըլլան և խտրական ոգիով չարաշահումի նիւթ չդառնան, դէմ էր հայ-թրքական տնտեսական մերձեցման և այնպիսի ընդհանրութիւններուն, որոնք կրնային վնասել Հայաստանի շահերուն: Շատ բան չէ փոխուած քաղաքական այս ուղեգիծէն: Այս սկզբունքները և առաջադրանքները նոյնքան այժմէական են, որքան էին աւելի քան երեսուն տարի առաջ:

Հայաստանի պարագային ՀՅ Դաշնակցութիւնը կը հետապնդէ հետևեալ նպատակները՝ պետականութեան հզօրացում, ժողովրդավարութիւն, իրաւական պետութիւն, ժողովուրդի բարօրութիւն, ընկերային արդարութիւն:

Առ այդ ան կ'առաջադրէ՝

-ստեղծել շահագործումէ ազատագրուած քաղաքացիական հանրութիւն,

-անհատի աշխատանքի իրաւունքի երաշխաւորում,

-եկամուտներու արդար բաշխում,

-բնակչութեան անհրաժեշտ կարիքներու բաւարարում՝ ժամանակակից չափանիշներով,

-աշխատանքի ապահովում,

-ստեղծել տնտեսական այնպիսի համակարգ, որ պետական կարգաւորումներով և ընկերային արդարութեամբ ըլլայ արդիւնաւէտ և մրցունակ,

-առաջքը առնելը ընկերային բևեռացումի,

-պահպանել բնութիւնն ու կենսոլորտը,

-տնտեսական որևէ համարկում պէտք չէ վտանգէ ազգային շահերը, մշակութային նկարագիրն ու ինքնատիպութիւնը,

-հաւասարութիւն օրէնքի առջև բոլոր քաղաքացիներուն,

-անձեռնմխելիութիւն՝ անձի, բնակարանի սեփականութեան և հաղորդակցութեան միջոցներուն,

-ազգային դիմագիծի պահպանման մէջ հայ եկեղեցւոյ և հայ ընտանիքին դերակատարութեան գնահատում:

Վերոնշեալ առաջադրանքները ՀՅ Դաշնակցութիւնը որդեգրած է 1998ին: Այդ թուականէն Հայաստանի մէջ անոր գործունէութիւնը ընթացած է այդ ուղղութեամբ:

Այս առաջադրանքներու վերաբերեալ քննադատական ամէն խօսք ու անդրադարձ, առողջ բանավէճ, պաշտօնական հարթակներէ լուրջ ելոյթներ աւելի քան ողջունելի են և օգտակար՝ պետութեան զարգացման համար, որովհետև այս առաջադրանքները ի շահ Հայաստանի պետութեան, հանրութեան բարօրութեան և քաղաքացիին իրաւունքներու պաշտպանութեան են:

Մինչդեռ այսօր ականատեսն ենք ճիշդ հակառակ պատկերին: Մանաւանդ ընկերային ցանցերը «կը պատռտին» ու «կը տնքան»՝ Դաշնակցութեան դէմ յանկերգելով խեղաթիւրուած գիտելիքներ, հնամաշ կարգախօսներ և անհիմն կարծրատիպեր (անոնց ծաւալը, տարածուն քարտէսը և որոշակի թեզերու կրկնութիւնը կասկած չեն ձգեր, որ տեղի ունեցածը սոսկ ամբոխային տրամաբանութեան արտայայտութիւն չէ, ոչ ալ պատահականութեան արդիւնք կրնայ ըլլալ):

Տրամաբանա՞ն է մտածել, որ այս առաջադրանքները ունենալուն և անոնց իրականացումը հետապնդելու համար Հայաստանի ընտրողը չի վստահիր Դաշնակցութեան և անոր չի տար իր քուէն: Տեղի՞ն է մտածել, որ ՀՀ քաղաքացին տակաւին ամբողջական գիտակցութիւնը չունի իր իսկ իրաւունքներուն: Եւ ո՞վ է մեղաւորը, Դաշնակցութի՞ւնը՝ իր գաղափարական սկզբունքայնութեամբ, որ, իշխանութիւն չըլլալով, միշտ բարձրաձայնած է ատոնց մասին, գործած է, իշխանութիւնը քննադատած, մեկնած իր ծրագրային այդ առաջադրանքներէն:

Թէև պէտք է ընդունիլ, որ սանձարձակ ազատականութեան մէջ Դաշնակցութեան առաջադրանքները, քաղաքական ուղեգիծը կրնան այնքան ալ ընկալելի ու ըմբռնելի չըլլալ հասարակութեան լայն խաւերուն համար, բայց անոնք չեն դադրիր հզօր Հայաստան կերտելու բաղկացուցիչ տարրերը ըլլալէ, որովհետև, մանաւանդ առանց ընկերային հաւասարութեան ու արդարութեան, կարելի չէ ունենալ հզօր Հայաստան: Գետնի վրայ ՀՅ Դաշնակցութեան այս առաջադրանքները աւելի քան երբևէ այժմէական, իրատեսական ու արդիական են, ներքաղաքական կեանքի ներկայ հանգրուանին, երբ ժողովուրդի դժգոհութիւնը կ'աճի, առաւելապէս ընկերային ենթահողի վրայ:

Միացեալ Հայաստան կերտելու ՀՅ Դաշնակցութեան ազգային հեռապատկերային նպատակին առընթեր ընկերային-տնտեսական իր այս առաջադրանքներով իսկ հայրենի իրականութեան մէջ իբրև ինքնուրոյն քաղաքական ուժ՝ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ԸՆԵԼԻՔ: Երբ մանաւանդ շեղողը չէ, նահանջողը չէ, հրաժարողը չէ իր սկզբունքներէն ու առաջադրանքներէն, Հայաստանի ու հայութեան ամբողջական ազատագրութեան իր տեսլականէն, երբ հաւատաւոր իր շարքերով հաստատամիտ ու հաստատաքայլ անշեղօրէն կ'ընթանայ զանոնք իրականացնելու համար: Դաշնակցութեան գաղափարախօսութենէն բխող, կուսակցութեան արժէքաբանութեան մաս կազմող առաջադրանքներու այս փաթեթով ՀՅ Դաշնակցութիւնը ոչ միայն ներկայի կուսակցութիւն է, այլև ապագայի:

Քաղաքական պահու տեսակէտէն՝ ժամանակն է քաղաքական մարտունակութեան: Մարտունակութիւն, որ բնորոշիչ յատկանիշներէն է Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ Դաշնակցութեան, ինչպէս ազատագրական պայքարի ճակատին վրայ, նոյնպէս և քաղաքական ասպարէզի մէջ:

Քեսապ, 18-19 սեպտեմբեր, 2020

Իրադրությունը Հայաստանի Հանրապետությունում 1920 թ. նոյեմբերին: Հանրապետության անկումը

Անի Մելքոնյան
Պատմաբան, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Այս տարի լրանում է Հայաստանի առաջին հանրապետության անկման 100-րդ տարելիցը: 100 տարի առաջ՝ դեկտեմբերի 2-ին, Հայաստանը խորհրդայնացվեց, բայց թե ինչ իրավիճակ էր Հայաստանում խորհրդայնացման նախօրյակին, ինչու և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, կքննարկենք ստորև:

Ինչպես գիտենք, 1920 թ. հոկտեմբերի 30-ին ընկավ Կարսը. «Կարսի անկումից յետոյ, պատերազմի ընթացքը հայերի համար դարձաւ այլևս յուսահատական»[1]: 1920 թ. նոյեմբերին թուրքական զորքերը շարժվում են դեպի Ալեքսանդրապոլ, իսկ հայկական զորքերը, մարտեր տալով, նահանջում են: Նոյեմբերի 3-ին վարչապետ Համազասպ Օհանջանյանը Քյազիմ Կարաբեքիրին զինադադար է առաջարկում, սակայն թուրքերը ձգձգում են այն և ավելի են խորանում Հայաստանի տարածքում: Նոյեմբերի 5-ին զորավար Մ. Սիլիկյանը բանակի հրամանատար Թ. Նազարբեկյանին հաղորդում է. «Զորամիավորումներն ինքնագլուխ թողնում են ռազմաճակատը: Զինվորները խմբերով դասալքում են և չեն ենթարկվում հրամանատարներին»[2]: Ալեքսանդրապոլին մոտեցած թուրքերին ընդառաջ է գնում տեղի բոլշևիկյան կոմիտեն. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը և չքավոր գյուղացիությունը՝ ազատագրված հայկական դարավոր լծից, հղում է եղբայրական և սրտալի ողջույնը Թուրքիայի կոմունիստական կուսակցությանը….

Կեցցե Թուրքիայի կոմկուսը
Կեցցե կարմիր հեղափոխական Արևելյան բանակը
Կեցցե կոմունիզմը
Կեցցե Սովետական Հայաստանը
Ար. Տեր-Մարտիրոսյան, Մկ. Խաչիկյան
Նոյեմբեր 13, 1920»[3]:

Սիմոն Վրացյան

Նոյեմբերի 18-ին Հայաստանի ներքգործնախարար Սարգիս Արարատյանը և Քյազիմ Կարաբեքիրը Ալեքսանդրապոլում ստորագրում են զինադադարի պայմանները: Զինադադարի վերջին օրը նոյեմբերի 25-ն էր, իսկ դրանից մեկ օր առաջ պետք է սկսվեին հաշտության բանակցությունները: Նոյեմբերի 23-ին Ալեքսանդրապոլ է մեկնում Հայաստանի Բյուրո-կառավարության պատվիրակությունը՝ Ալ. Խատիսյանի գլխավորությամբ՝ թուրքերի հետ բանակցություններ վարելու:

Նոյեմբերի 22-ին Բաքվում գտնվող Սարգիս Կասյանը ստեղծում է Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որը մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 29-ին, Իջևանի կողմից պետք է մտներ Հայաստան՝ այն հռչակելով խորհրդային: Այդ նույն օրերին երկրի անկախ գոյությունը երկարաձգելու համար ՀՀ կառավարությունը մի կողմից Ալեքսանդրապոլում թուրքերի հետ բանակցություններ էր վարում՝ հայրենիքի վերջին փշրանքները փրկելու համար, մյուս կողմից փորձում էր ստանալ Ռուսաստանի աջակցությունը: Վրացյանի խոսքերով՝ «….Կառավարութեան նպատակն էր սերտ բարեկամութիւն հաստատել Խորհրդ. Ռուսաստանի հետ և ապահովել նրա աջակցութիւնը: Ամենքի համար պարզ էր այն օրերին, որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պէտք է լինի, կամ պէտք է դառնայ թուրքերի ձեռքին խաղալիք, եթէ չբնաջնջուի իսպառ»[4]: Նոյեմբերի 23-ին խորհրդարանը ընդունում է Համազասպ Օհանջանյանի բյուրո-կառավարության հրաժարականը, հաջորդ օրը ձևավորվում է նոր կառավարություն՝ Սիմոն Վրացյանի վարչապետությամբ: Շարունակվող

բանակցություններում Բորիս Լեգրանը դնում էր Հայաստանի խորհրդայնացման հարցը, ինչը «….մահացու հարուած պիտի հասցնէր Հայկական խնդրին և Հայաստանին տրուած բոլոր միջազգային յանձնառութիւններին ու դաշնագրերին: Մինչդեռ, եթէ Հայաստանը պահուէր անկախ, թէ՛ դրսի աշխարհից չէր կտրուի, թէ՛ կը մնար Հայկական հարցի իրաւատեր….»[5]: Հայաստանի անկախության պահպանման դիմաց ՀՀ կառավարությունը Խորհրդային Ռուսաստանին առաջարկում էր ու նաև վստահեցնում, որ եթե «….Խորհրդ. Ռուսաստանին հարկաւոր է Հայաստանի բարեկամութիւնը_ մենք այդ կ'ապահովենք: Բոլշևիկների համար անհրաժեշտ են Հայաստանի ճանապարհները- մենք կը տանք»[6]:

Հակառակ ՀՀ կառավարության առաջարկին՝ Բ. Լեգրանը պնդում էր, որ «Հայերը ընդմիշտ պէտք է հրաժարուեն Եւրոպայից ու Ամերիկայից և խաչ քաշեն Սևրի դաշնագրի վրա: Հայերը իրենց յոյսը պէտք է կապեն միայն համաշխարհային յեղափոխութեան և բանուորագիւղացիական Ռուսաստանի հետ»[7]: Բանակցությունները, փաստորեն, Հայաստանի համար ցանկալի արդյունքը չտվեցին, իսկ Հայաստանի կառավարության մտահոգությունն այն էր, որ «….եթէ Կարմիր բանակը Հայաստան մտնէր Հիւսիսից, թուրքերը առաջ կը շարժուէն հարաւից և ռուսների հասնելուց շատ առաջ կը գրաւէին Երևանը: Այդ պատճառով, կառավարութիւնը աշխատում էր Ալեքսանդրապոլի բանակցութիւնները չխզել և հաշտութեան հարցը հասցնել իր տրամաբանական վախճանին»[8]:

Բանակցություններում թե՛ թուրքերը և թե՛ ռուս բոլշևիկները, համաձայն Հայաստանը բաժանելու իրենց ծրագրի, որդեգրել էին անզիջում կեցվածք, և նոյեմբերի 29-ին Բ. Լեգրանը Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերջնագիր ներկայացրեց, որում ասվում էր. «….Ռուսաստանի Կոմունիստ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Հայաստանի Յեղկոմը արդէն ոտք է դրել Հայաստանի հողի վրայ»[9]: Արդեն հաջորդ օրը նա Հայաստանի

Դրո

Սարգիս Կասյան

խորհրդայնացման գրավոր պահանջ ներկայացրեց, և նոյեմբերի 30-ին սկսվեցին բանակցությունները կառավարության ներկայացուցիչներ Դրոյի ու Համբարձում Տերտերյանի և Բ. Լեգրանի միջև: Նույն օրը Հայաստանի խորհրդայնացումն արագացնելու համար Ադրբեջանի հեղկոմը հանդես եկավ մի հայտարարությամբ, որով հրաժարվում էր Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ ունեցած հավակնություններից. «Ադրբեջանը հրաժարվում է «վիճելի» տարածքներից, և տարածքային հարցերը չեն կարող երկու ժողովուրդների՝ «հայերի և մահմեդականների» միջև արյունահեղության պատճառ դառնալ: Հոչակագրով Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Զանգեզուրի և Նախիջևանի գավառները ճանաչել է Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տվել ինքնորոշման իրավունք, պարտավորվել դադարեցնել ռազմական գործողությունները Զանգեզուրում և ադրբեջանական զորքերը դուրս հանել երկրամասից: 1920-ի նոյեմբերի 30-ին հրապարակվել է նաև Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի և արտաքին գործերի ժողկոմ Հուսեյնովի դիմում-ուղերձը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու մասին: Դիմում-ուղերձում Ադրբեջանի ղեկավարությունը հայտարարում է, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև վերացված են սահմանային վեճերը, և այդ օրվանից Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը համարվում են Խորհրդային Հայաստանի անբաժան մասերը: Ադրբեջանի հեղկոմի 1920-ի նոյեմբերի 30-ի հոչակագրի, «Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության», ինչպես նաև Ռուսաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցության կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921-ի հունիսի 3-ի որոշման հիման վրա Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհը 1921-ի հունիսի 12-ին

Լեռնային Ղարաբաղը հայտարարել է ՀԽՍՀ անբաժան մաս: Հայտնվելով մի կողմից թուրքական բացահայտ ռազմական ճնշման, մյուս կողմից՝ խորհրդայնացման անխուսափելիության առաջ՝ Հայաստանի կառավարությունը տեղի տվեց: Կառավարության, Դաշնակցության բյուրոյի և խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի համատեղ խորհրդակցությունում որոշվեց ընդունել ռուսական առաջարկը: Մյուս կողմից՝ վտանգավոր զարգացումներից խուսափելու համար Ալ. Խատիսյանի պատվիրակությանը լիազորվեց ընդունել թուրքական պայմանները և ստորագրել հաշտության պայմանագիրը:

Դեկտեմբերի 1-ին, երբ Հայաստանը դեռևս խորհրդայնացած չէր, Երևանում տեղի է ունենում խորհուրդների հանդիսավոր նիստը, որտեղ Գ. Օրջոնիկիձեն խոսում է Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանին թողնելու մասին. «Ինչ որ Զանգեզո՛ւր, անբերրի լեռներ, ո՛չ հաց կայ, ո՛չ ջուր: Այնտեղ ոչինչ չկայ: Ինչ որ Նախիջևան ճահիճ, մալարիա և ուրիշ ոչինչ: Ինչ որ Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ կայ այդ Ղարաբաղում: Ոչի՞նչ չկայ: Եւ ահա ընկ. Նարիմանովն ասում է. «Դրանք ձե՛զ վերցրէք: Այդ անբերրի հողերը վերցրէք Հայաստանի համար»[10]:

Բոլշևիկ-ադրբեջանական այս ներկայացումը նպատակ ուներ արագացնելու Հայաստանի խորհրդայնացումը՝ վստահեցնելով, որ Հայաստանը տարածքային կորուստներ չի ունենա: Եվ ահա դեկտեմբերի 2-ին կնքվում է Հայաստանի խորհրդայնացման պայմանագիրը, որով Հայաստանը հռչակվում է «խորհրդային-սոցիալիստական հանրապետություն»:

Այսպիսով՝ Լենին-Քեմալ կամ Թուրքիա-Խորհրդային Ռուսաստան դաշինքը, ի վերջո՝ ոչ առանց հայ բոլշևիկների մասնակցության, հանգեցրեց Հայաստանի Հանրապետության անկմանը: Բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև հայտնված Հայաստանի կառավարությունը այլ բան չէր կարող անել, քան հանձնել իշխանությունը բոլշևիկներին՝ անկախության կորստի գնով փորձելով փրկել Հայաստանը թուրքական վտանգից: Իսկ թե ինչ եղավ դրանից հետո, կքննարկենք այլ թեմայի շրջանակներում: Մեզ մնում են միայն 1920 թ. նոյեմբերի դաժան, բայց շատ կարևոր դասերը, որոնք չսովորելը կարող է ճակատագրական լինել, հատկապես՝ այս օրերին: Թուրքիան և նրա հովանավորությունը վայելող Ադրբեջանը միշտ կձգտեն պանթյուրքիզմի ճանապարհին պատնեշ հանդիսացող Հայաստանի վերացմանը, և Հայաստանն ու հայ ժողովուրդը կարող են դիմակայել, եթե ներազգային համերաշխությունը, հայրենիքի ու անկախ պետականության գաղափարը միշտ վեր դասվեն անձնական կամ նեղ խմբային շահերից: Հայ ազգը իր պատմության բոլոր հանգրվաններում հետայսու պարտավոր է հիշել Արամ Մանուկյանի պատգամը. «Մենակ ենք և պէտք է ապաւինենք միա՛յն մեր ուժերին….»: Ահա մեծագույն դասը, որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ որևէ այլ երկիր կամ ժողովուրդ պարտավոր չեն մեզ ոչնչով օգնել: Իսկ Ադրբեջանի հեղկոմի՝ Արցախի, Նախիջևանի և Զանգեզուրի վերաբերյալ վերը հիշատակված հռչակագիրը Արցախի հակամարտության կարգավորման հարցում կարող է մեզ բավականաչափ օգտակար լինել, եթե կարողանանք ճիշտ օգտագործել այն:

Համբարձում Տերտերյան



Լենին - Քեմալ

Օգտագործված Աղբյուրներ

1- Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի արանքում, Պէյրութ, 1953, էջ 58:
2- https://www.nt.am/am/dates/1166
3- ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189:
4- Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 123:
5- Նույն տեղում, էջ 125:
6- Նույն տեղում:
7- Նույն տեղում:
8- Նույն տեղում, էջ 126:
9- Նույն տեղում:
10- Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 127-128:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

ա) Աղբյուրներ

1. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189:

բ) Գրականություն

1. Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի արանքում, Պէյրութ, 1953:

գ) Համացանցային նյութեր

1. https://www.nt.am/am/dates/1166.

Արցախցիները Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում

Խաչատուր Ստեփանյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայ ականավոր պետական, հասարակական և քաղաքական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո ստիպված եղավ անցնել արտասահման, որտեղ կուսակցական, հրապարակախոսական աշխատանքներին զուգահեռ ձեռնամուխ եղավ իր հուշերի («Հայ յեղափոխականի մը յիշատակները» վերտառությամբ) շարադրմանը: Հիմնականում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազատագրական պայքարը նկարագրող այս անկրկնելի հիշողություններում Ռուբենը մեծ տեղ է հատկացրել արցախցիներին, ովքեր իրենց ծանրակշիռ մասնակցությունն են ունեցել հայոց ազատամարտին:

Մեծանուն հուշագիրը պատկառանքով է խոսում Արամ Մանուկյանի մասին: Ռուբենն Արամի հետ ծանոթացել է Կարսում, «որուն յեղափոխական հնոցին մէջ նորելուկ դաշնակցականները կարող էին եփուիլ և դուրս գալ թրծուած և յղկուած»: Ծանոթության առաջին իսկ օրվանից Ռուբենը Արամի մեջ տեսնում է խստապահանջ գործի մարդուն և նվիրված, կատակասեր, հավասար ընկերոջը: Ռուբենի տպավորությունն այն է լինում, որ Արամը «այնտեղ (Կարսում – Խ. Ս.) հաւաքուածներուն մէջ ամենէն սիրելին, ամենէն յարգուածն էր»: Հուշերում Ռուբենը, նկարագրելով «Կարսի հնոցի» գործիչներին, Արամին բնութագրում է նաև որպես ուղղամիտ մարդու, «որուն համար կըսէին, թէ կոշտ ու կոպիտ է, բայց «քեասա» բան կըսէ, ջանին՝ ջան կըսէ, չոռին՝ չոռ կըսէ»: Արամ Մանուկյանը Կարսում այնպիսի հեղինակություն ուներ, որ անգամ ցարական պաշտոնյաներն էին ակնածանքով վերաբերվում նրան: Կարսում ցարական իշխանությունը բավական ուժեղ էր ներկայացված: Բավական է նշել, որ այնտեղ բնակչության թվին հավասար զորք էր տեղակայված: Եվ նույնիսկ այս պայմաններում ռուս պաշտոնյաները խիստ հարգալից էին Արամի նկատմամբ:

Ռուբենը և Արամը Կարսում հետաքրքիր քննարկումներ են անցկացնում Հայաստանի ծայրագավառների և կենտրոնական նահանգների նշանակության շուրջ: Եթե Ռուբենը գտնում էր, որ Հայաստանի հզորությունը ծայրագավառները՝ Շուշին, Սպերը, Խարբերդն են, ապա Արամի պնդմամբ, առանց Տարոնի և Բարձր Հայքի հզորության, ծայրագավառները շատ թույլ կլինեն: Այստեղ հետաքրքիր է նաև այն, որ Ռուբենը Արամի, Նիկոլ Դումանի և մի շարք այլ արցախցիների ուժը պայմանավորում էր Շուշիի հաղորդած ոգով:

Կարսից հետո Ռուբենը և Արամը բախտ են ունենում միասին գործելու նաև Վան-Վասպուրականում: Հուշերում Ռուբենը նկատում է, որ Վասպուրականում ազգային-ազատագրական

շարժման ղեկավարների մեջ մեծ թիվ էին կազմում արցախցիները՝ հնչակյան Մարտիկը (Մարտիրոս Սարուխանյան), դաշնակցականներ Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Իշխանը (Նիկոլ Պողոսյան), որոնց շարքերը լրացնում է նաև Արամը: Ռուբենը գրում է, որ 1905 թ. Վանի ՀՅԴ կազմակերպության կենտրոնական դեմքն Արամն էր: Արամը և Իշխանը մեծ դերակատարում են ունեցել Վասպուրականում ժողովրդին զինելու, զենքին վարժեցնելու գործում: Ռուբենը փաստում է, որ հատկապես Արամի ջանքերով մեծապես բարձրացավ Վան-Վասպուրականի հայության պաշտպանվածության աստիճանը: Դրա պտուղներն ակնառու դարձան հատկապես 1915 թ., երբ վանեցիները կարողացան կազմակերպված դիմադրություն ցույց տալ թուրքերին և փրկվել անխուսափելի կոտորածից:

Վանում գործելու տարիներին Արամ Մանուկյանը հանգել էր այն մտքին, որ արևմտահայության փրկության համար պետք էր վերջ տալ տեղային պայքարին և համընդհանուր ապստամբության նախապատրաստվել: Այս առումով նա, փաստորեն, Հրայր Դժոխքի, Նիկոլ Դումանի գաղափարների կրողն էր: Ավելին՝ Արամը կարծում էր, որ Օսմանյան Թուրքիայում անհրաժեշտ էր համընդհանուր ապստամբություն իրականացնել և տապալել սուլթանական համակարգը:

1907 թ. մայիսին Արամ Մանուկյանը Վանում ձերբակալվում է և բանտից ազատվում է միայն մեկ տարի անց՝ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո: Այդ օրերին (Արամի՝ բանտից դուրս գալուց հետո) Ռուբենը Վանում հանդիպում է օսմանյան ոստիկանության պաշտոնյա Մեհմեդ էֆենդու հետ: Վերջինս նշում է, որ, գործելով թուրքական կառավարության դեմ, Արամը «արժանի» է եղել բանտարկվելուն, բայց և այնպես ավելացնում է. «Բայց Արամ բոլորիս համար կը մնայ յարգանքի և պատուի առարկայ»: Սա ոչ թե օսմանյան պաշտոնյայի կողմից սահմանադրության մեղրամսին

բնորոշ հավուր պատշաճի խոսք էր, այլ հայ ազգային-ազատագրական գործչի հանդեպ ունեցած հարգանքի ակամա խոստովանություն:

Արամ Մանուկյանի և Ռուբենի համագործակցությունը շարունակվում է նաև Հայաստանի անկախության նվաճման և պետականության կայացման շրջանում: Հայտնի է, որ, սկսած 1917 թվականից, Ռուբեն Տեր-Մինասյանը լրջորեն զբաղվել է արևմտահայ գաղթականությանը Արևելյան Հայաստանում տեղավորելու և Հայաստանի Հանրապետության տարածքում թուրք-թաթարական խռովություններն ու անջատողական շարժումները ճնշելու գործով: Այս խառնակ ժամանակաշրջանում Ռուբենին քչերն են աջակցել: Գաղթականների վերաբնակեցման հարցում նրա ամենաջերմ համախոհներից ու գաղափարակիցներից մեկը եղել է Արամ Մանուկյանը:

Արամի ավանդը Ռուբենն արժևորում է նաև Երևանի նահանգի տարածքում Հայոց ազգային խորհուրդների աշխատանքները համադրելու առումով: Անուրանալի է Արամի դերը 1918 թ. մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակներում: Արամը կարողացավ Երևանում կազմակերպել ժողովրդին, հիմքեր ստեղծել ազգային պետականության տարրերի արմատավորման համար: «Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից առաջ Արամը Երևանի նահանգի դիկտատոր էր ընտրուել, և յանձին նրա՝ փաստական հայկական իշխանութիւն էր ստեղծուած դեռ 1917-ից: 1918-ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Քաջազնունու դահլիճն էր կազմուել, փաստօրէն, կառավարութիւնը մնում էր Արամը, թէև նա ներքին գործոց նախարարն էր միայն»,- գրում է Ռուբենը:

Ռուբենն իր հուշերում հիշատակում է Արամին առնչվող մի կարևոր հանգամանք ևս: Արամն այն փոքրաթիվ գործիչներից էր, որոնք ձգտում էին 1917-1918 թթ. համագործակցելու բոլշևիկների հետ: Հեռատես քաղաքական գործիչը համոզված էր, որ բոլշևիկների և հայության շահերի համադրումով միայն հնարավոր կլինի խուսափել 1915 թ. կրկնությունից: Պատահական չէ, որ ՀՅԴ ներկայացուցիչներ Ռուբեն Տեր-Մինասյանը և Հակոբ Ջավրյանը Ստեփան Շահումյանի հետ Թիֆլիսում համագործակցության նախագիծը քննարկելիս իրենց ձեռքի տակ ունեին նաև Արամի գրավոր կարծիքը: Ավելին՝ Թիֆլիսի բանակցություններից հետո Արամը Երևանում գտնվող բոլշևիկ Պողոս Մակինցյանին հատուկ հանձնարարությամբ ուղարկում է Մոսկվա:

Այսպիսով՝ Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում հանդիպում ենք ոչ միայն Արամ Մանուկյանի կյանքին վերաբերող բացառիկ տեղեկությունների, այլև վերջինիս գործունեությանն արժանի բարձր գնահատականների:

Իր հուշերում Ռուբենն անդրադառնում և ըստ արժանվույն է գնահատում նաև մեկ այլ արցախցու՝ Նիկոլ Դումանին:

Նիկոլ Դումանը, որ տարիքով ավելի մեծ էր և

Արամը և Վանա Իշխանը

Ռուբենի՝ ազատագրական շարժման հորձանուտ մտնելու պահին բավական փորձառություն ուներ, մեծ ազդեցություն է ունեցել վերջինիս՝ որպես հեղափոխական գործչի կայացման գործում: Նիկոլ Դումանն այն գործիչն էր, ով հանձն էր առել իր հետ առաջին անգամ Արևմտյան Հայաստան տանել Ռուբենին: «Ես առանց գիտնալու, թէ ուր կտանի, երջանիկ կզգայի այդ պատուերի համար»,- հետագայում գրում է Ռուբենը: Նկարագրելով Նիկոլ Դուման հեղափոխականի անցած ուղին՝ Ռուբենը խոստովանում է, որ նրա ունեցած փորձն իսկական տեսություն էր հեղափոխության մասին: Ռուբենը տպավորված էր հեղափոխության մասին Նիկոլի դատողություններով. «Յեղափոխութիւն չկայ, երբ նրա համար պատճառ ու նպատակ չկայ: Պատճառն ու նպատակը անարժէք բաներ են, երբ նրանք իրագործելու համար ոյժ և կազմակերպութիւն չկայ: Ոյժն ու կազմակերպութիւնը վճռական են, եթէ նրանք հարազատ պատկերն են յեղափոխութեան նպատակներու և ժողովրդի շահերու»:

1904 թ. հունիսին Ռուբենը Նիկոլ Դումանի մարտախմբի հետ միասին փորձում է անցնել թուրք-պարսկական սահմանը: Սակայն Ղազին (Ռազի) կոչվող վայրում խումբը պաշարվում է թուրք-քրդական ուժերի կողմից և մարտի բռնվում: Շնորհիվ Նիկոլ Դումանի գործադրած ջանքերի՝ խումբը կարողանում է ճիշտ կողմնորոշվել և փրկվել կոտորվելու վտանգից: Հայդուկների խումբը ստիպված վերադառնում է Սալմաստ: Ճիշտ է, Ռուբենը չկարողացավ այս անգամ անցնել Երկիր, սակայն Նիկոլ Դումանի հետ շփումները մեծ ազդեցություն ունեցան նրա վրա:

Հայտնի է, որ թուրք-պարսկական սահմանի վրա գտնվող Դերիկի վանքը կարևոր նշանակություն ուներ արևմտահայ ազատագրական պայքարում: Այն անփոխարինելի հենակետ էր Երկիր զենք, զինամթերք և կռվող ուժեր փոխադրելու համար: Դերիկի վանքը Նիկոլ Դումանի պաշտելի վայրերից մեկն էր: Վերջինս վանքի խորհրդավորության մասին հետևյալն է պատմում Ռուբենին. «Երբ ոչ թիւ, ոչ

որակ, ոչ էլ ոյժ ունիս, թշնամուդ մի՛ զարնէ, հարուածդ տուր՝ նրա երևակայութիւնը բորբոքելու համար: Քո վրայ նետուող գազանի աչքերին նայիր, նա պոչը կը քաշէ, ոչխար կը դառնայ: Այս է գաղտնիքը Դերիկի յաջողութեան»: Սրանով Նիկոլ Դումանն ուզում էր ասել, որ ամենազոր թշնամին անգամ քո վճռականությունից և անակնկալ հարվածից կարող է տեղի տալ:

Անդրադառնալով Նիկոլ Դումանի՝ Խանասորի արշավանքի հրամանատար չդառնալու խնդրին, չնայած որ արշավանքի գաղափարի հեղինակը և նախաձեռնողն ինքն էր, Ռուբենը գրում է, որ Նիկոլի համար էականը արշավանքը հաջողությամբ ավարտելն էր:

Ռուբենի հուշերում կան Նիկոլ Դումանի գործունեությանը վերաբերող այլ դրվագներ ևս, սակայն այսքանն էլ բավարար է՝ պատկերացում կազմելու, թե՛ լեգենդար հայդուկապետի մեծության, թե՛ նրա հանդեպ Ռուբեն Տեր-Մինասյանի ունեցած անվերապահ հարգանքի մասին:

Իր հուշերում Ռուբենը բավական երկար խոսում է նաև Իշխանի մասին: 1905-1906 թթ. նրանք միասին հսկայական կազմակերպական աշխատանքներ են իրականացնում Վասպուրականի Լեռնապարի շրջանում: Ընդ որում, Իշխանն ավելի շուտ էր անցել այնտեղ:

1906 թ. գարնանը մի թյուրիմացություն է ծագում Ռուբենի և Իշխանի միջև: Կեցանից Կարկառ գնալու ճանապարհին Ռուբենի խումբը պատահականորեն և միաժամանակ անխուսափելիորեն սպանում է մի քանի քրդերի: Իշխանը գտնում էր, որ նման քայլերը կառավարության ուշադրությունը գրավելու էին Կարկառի վրա: Կային և ուրիշ պատճառներ, որոնք հիմնականում հայդուկային շարժման երկու մեծությունների՝ մարտավարական և կազմակերպական հարցերի շուրջ ունեցած տարաձայնությունների հետևանք էին: Նրանց տարաձայնությունները գնալով ավելի էին խորանում: 1906 թ. Վանի շրջանային ժողովում Ռուբենն առաջարկում է, որ Իշխանը շարունակի գործել Լեռնապարում, իսկ ինքն անցնի Տարոն: Ժողովն այդ տրամաբանությամբ էլ կայացնում է իր որոշումը:

Չնայած այս հանգամանքին՝ Ռուբենը պատկառանքով է խոսում Իշխանի՝ արցախցի այդ մեծ հայդուկապետի մասին: Օրինակ՝ նա մի առիթով գովեստի խոսքեր է շռայլում մի շարք արցախցիների՝ Արամի, Իսաջանի (Իսաջան Առաքելյան, Կոլոտ), Թորգոմի (Թուման Թումյան), Մենակի (Եգոր Առուստամյան) ու նաև Իշխանի մասին՝ նշելով, որ նրանք «այնպիսի գութան մը քաշեցին Կարսի և Երկրի կեանքին մէջ, որ թէև կէս դար անցած է, բայց անոնց հետքերը չեն ոչնչացած, ու անոնց շաւիղով ցանք կ՚ընէ հայութիւնը՝ իր քաղաքական ապագան կերտելու համար»:

Ռուբենը Իշխանին համարում է Արամի ընկերաշակերտը՝ նշելով, որ նա հետևողականորեն գնում է իր ավագ ընկերոջ ուղիով:

Հուշերում Ռուբենը մանրամասն և տպավորիչ ներկայացնում է Իշխանի մուտքը Վասպուրական և նրա ներդրումը տեղի կուսակցական-կազմակերպական աշխատանքներում:

Պակաս տպավորիչ չեն Ռուբենի հուշերը Խանասորի Վարդանի (Վարդան Մեհրաբյանի) մասին: Ռուբենն անկեղծորեն փաստում է, որ Ատրպատականում տարբեր տեղերից հավաքված և Երկիր անցնելուն տրամադրված հայ երիտասարդների հույսը Նիկոլն ու Վարդանն էին: «Այս երկուսին վրայ կ՚ուղղուէին հայեացքները ոչ անոր համար, որ այդ երկուսն էին ամենագաղափարականները, ամենաքաջերը, ամենափորձառուները, ամենասիրուածները, կամ որ անոնք թայֆա ունէին: Ո՛չ: Այս երկու դարաբաղցիները առանցքը կը դառնային բոլորին, և ամէնքը իրենց կեանքը և միտքը այդ օտարական հայերուն կը վստահէին, որովհետև ամենաղժուար հարցերուն համար անոնք ոչ երկբայութիւն, ոչ «եթէ» ունէին, այլ պարզ ու յստակ կամ «այո՛» և կամ «ո՛չ»,- գրում է հուշագիրը:

Մեծ է եղել Վարդանի դերակատարումը Վանի նահանգի 1896 թ. ինքնապաշտպանական կռիվների ժամանակ: Ռուբենը հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում ինչպես գարնանը Շատախի ինքնապաշտպանության ժամանակ Վարդանի ունեցած կարևոր ներդրման, այնպես էլ սեպտեմբերին Վան քաղաքում տեղի ունեցած կռիվներին նրա մասնակցության մասին:

Ռուբենի հուշերում հետաքրքիր ակնարկներ և հիշատակումներ կան արևմտահայ ազատամարտին մասնակից բազմաթիվ այլ արցախցիների (Թորգոմ, Իսաջան, Մենակ և ուրիշներ) մասին ևս:

Այսպիսով, ելնելով Ռուբենի հուշագրության մեջ ներկայացված հարուստ նյութից, կարելի է ասել, որ դժվար է գերագնահատել արցախցիների մասնակցությունը արևմտահայ ազատագրական շարժմանը: Ավելին՝ անվարան կարելի է պնդել, որ այդ շարժումն առանց արցախցիների մեծապես թերի կլիներ:

Խանասորի Վարդանը

ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնը Ատրպատականում (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ)

Դերենիկ Մելիքյան
«Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր, պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի արևելեան *(ռուսական)* և արևմտեան *(օսմանական)* շրջաններում պայքար մղող հայ յեղափոխական խմբերի և միութիւնների համախմբումով ստեղծում է «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» *(սկզբում «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»)* կուսակցութիւնը 1890 թւականին Թիֆլիսում[1]: *«Դաշնակցութիւնը նպատակադրել էր,* - գրում է Ռէյիս օլ Սադաթին,- *հայ հասարակական տարբեր խաւերի դասակարգային ու տնտեսական, մարդկային, քաղաքական եւ ազգային շահերի պաշտպանութիւնը»*[2]:

Պարսիկ պատմաբան Իսմայիլ Ռայինը իր *«Իրանահայերը»* աշխատութեան մէջ մատնանշել է, որ *«Կուսակցութիւնն իր գործունէութեան մեծագոյն մասը նուիրել է Արեւմտահայաստանում ինքնիշխանութեան ձեռքբերմանը»*[3]: Հասարակական-քաղաքական ազդեցիկ նախադրեալների և այդ հէնքի վրայ կազմակերպչական քանակական թէ որակական կարելիութիւնների առկայութիւնը *(ինչպէս դրանք առկայ էին նրա ազատագրական պայքարի արևմտահայաստանեան ու արևելահայաստանեան ուղղութիւններում)* ՀՅԴ-ին համարժէք հնարաւորութիւն էր ընձեռել, որ սոյն պայքարում աւելի տևական ու հետևողական մասնակցութիւն ապահովի[4]: Դա պայմանաւորուած էր նրանով, որ *«Վանը (արմենականութիւն) և նրանով խորհրդանշող՝ ազգային և Ժնևը (հնչակեաններ) ու նրանով խորհրդանշող՝ համամարդկային իդեալները ազգային կուսակցութիւնների գաղափարա-քաղաքական հասունացման գործընթացի այն անհրաժեշտ և փոխլրացնող բաղադրատարրերն էին, առանց որոնց անհնար էր պատկերացնել ազգային յեղափոխութեան ու սոցիալական ազատագրութեան խնդիրների համադրութիւնը, ինչը իրականացուեց հետագայում՝ Թիֆլիսի (ՀՅ Դաշնակցութիւն) կողմից»*[5]:

Պարսկաստանը ահա այն երրորդ ուղղութիւնն էր, որում ամբողջ հասակով մխրճուելու աշխարհաքաղաքական ու յատկապէս գաղափարական-ծրագրային հիմքեր ունէր ՀՅԴ-ն: *«1890 թւականի ամռանը ձևաւորուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան առաջնահերթ խնդիրներից մէկը Արևմտեան Հայաստան մուտք գործելու նպատակով Պարսկաստանի հիւսիսարևմտեան հատուածում՝ Ատրպատականում, մարդուժ և զէնք կուտակելու առաջադրանքն էր: Պարսկաստանի, մանաւանդ Ատրպատականի, նշանակութիւնը գիտակցել ու արժևորել էին դեռևս 1870-1880-ական թւականների հայ ազատամարտի գործիչները, առաջին հերթին Արսէն Թորոսեանը, իսկ Րաֆֆին իր «Կայծեր»-ում արդէն պատկերել էր*

Ատրպատականից Արևմտեան Հայաստան անցնող առաջին հայդուկների նախատիպերին»[6]: Ուշագրաւ է նաև, որ Ատրպատականում ՀՅԴ-ի հաստատելու առաջին քայլերի նախաձեռնողն ու հիմնական կազմակերպիչը Ստեփան Զօրեանն էր *(Ռոստոմ)*: Նա կեղծ փաստաթղթերով մի քանի անգամ անցել է Պարսկաստան, ուսումնասիրել ապագայ գործունէութեան թատերաբեմը և համապատասխան առաջարկութիւններ ներկայացրել «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» նորաստեղծ կենտրոնին[7]:

«Պատմական Ատրպատականը, Վասպուրականի իր հարևանութեամբ, նորագոյն ժամանակներու հայ իրականութեան մէջ եղաւ այն շրջանը, որ վաղուց նեստուած էին Հայ Յեղափոխական սերմերը: Մարգարէաշունչ Րաֆֆին փողահարած էր առաջին «զարթի՛ք»-ը ի լոր հայրենասէր հայ երիտասարդութեան, և արդէն իսկ ծայր տուած էին յեղափոխական խմորումները, երբ ակտիւ գործունէութեան առաջադրութիւններով ծնաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը 1890 թւականին»[8]:

ՀՅԴ *«Հիմնադիր ժողովներից յետոյ անցած մի*

Ռոստոմ

քանի ամիսների ընթացքում տարերայնօրէն սկիզբ առած շարժման ալիքի վրայ ՀՅԴ-ն արագութեամբ տարածուեց Անդրկովկասում, Ռուսաստանի հայաշատ վայրերում, թափանցեց Պարսկաստան, Միջին Ասիա, Տրապիզոն, Կ. Պոլիս... Արդէն 1890-ին ՀՅԴ-ն մուտք գործեց Պարսկաստան՝ Տիգրան Ստեփանեանի, Գալուստ Ալոյանի (Թորոս), Ալեքսանդր Պետրոսեանի (Պետրո) և այլ գործիչների ջանքերով, իսկ այնտեղից էլ շուտով Ալեքսանդր Պետրոսեանը թափանցեց Վասպուրական»[9]:

«ՀՅԴ հիմնադրութիւնից յետոյ,- գրում է Մ. Վարանդեանը,- առաջին ուժեղ կազմակերպութիւնն ստեղծուել է Թիֆլիսում, ապա՝ Բաքուում, ուր կային ստուար թով մշակներ և նաւթական առատ միջոցներ: Բաքից է, որ առաջին գործիչները 1890 թուականին եկել են Թաւրիզ: Սալմաստ անցնող գործիչների մեծագոյն մասը նախ Կովկասից Թաւրիզ էր գալիս, ապա մեկնում իր գործունէութեան վայրը: 1890 թ.-ին զինական գործով Թաւրիզ է գալիս Տիգրան Ստեփանեանը, ապա Պարսկաստան են անցնում Գրիգոր Միրզաբէգեանը (Մածոն Խեչո, հետագայում մասնակից նաև Եփրեմի հետ պարսկական յեղափոխական կուսակցութեան), և Արամայիսը, որոնք անցնում են Վասպուրական՝ սահմանների մօտ»[10]:

Նոյն՝ 1890 թուականին Թաւրիզ են մեկնում նաև Տիգրան Բէգլարեանը և Ջալլադը *(Ծոռ Երուանդ)*, որոնք նոյնպէս անցնում են Սալմաստ: 1891 թուականին Բաքից Թաւրիզ են անցնում Նիկոլ Տ. Յովհաննիսեանը *(Դուման)*, Յովսան Դաւթեանը և Ռոստոմը: Վերջինս Ղալայի *«Արամեան»* դպրոցում ուսուցչի պաշտօն է ստանձնում, Յովսան Դաւթեանը Լիլաւայի *«Հայկազեան»* դպրոցի տեսուչ է նշանակուում, իսկ Դումանը նոյն դպրոցում ուսուցչի պաշտօն է ստանձնում: Օսմանեան կայսրութեան սահմանամերձ շրջաններում յեղափոխական *(խարիսխ)* հիմնելը, կարելի է ասել, մաս է կազմում ՀՅԴ գործունէութեան առաջին շրջանի: Ազատագրական պայքարը կազմակերպելու և ղեկավարելու համար ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմակերպական կառոյցներն է հիմնում նաև Օսմանեան կայսրութեան սահմանամերձ շրջաններում, մասնաւորապէս՝ Պարսկաստանի Ատրպատական նահանգի Սալմաստ գաւառում: Իր աշխարհագրական դիրքի ու հայ բնակչութեան շնորհիւ Սալմաստը Հայաստանի երկու՝ արևմտեան և արևելեան հատուածները միմեանց շաղկապող կամուրջն էր և Երկիր մեկնող յեղափոխական գործիչների, մարտական ու զինատար խմբերի յուսալի յենակէտը: Բնականաբար, եթէ չլինէր հայ բնակչութեան գործուն աջակցութիւնը, ապա յեղափոխական կազմակերպութիւնները չէին կարողանայ ամրապնդել գաւառում և կապեր հաստատել Երկրի հետ: *«....Թաւրիզը վերին հսկողն էր Սալմաստի և Խոյի շրջաններու վրայ,- գրում է Ռուբէն Տէր-Մինասեանը,- որոնք կեդրոն կը հանդիսանային Ատրպատականի կենդանի գործունէութեան: Այդտեղ կուսակցութիւնը միայն մշակութային ու բարոյական նշանակութիւն չունէր: Սալմաստ և Խոյ տեսակ մը*

Նիկոլ Դուման

պահեստ էին Երկրի թէ՛ մարտական ուժերու և թէ՛ ռազմամթերքի: Այդ շրջանները մեծ ծառայութիւններ են մատուցած, և առանց անոնց գուցէ Վասպուրականի գործունէութիւնը այն թափն ու գոյնը չունենար, ինչ որ ունեցաւ»[11]:

Եւ այսպէս՝ *«1890 թ.-ին Թաւրիզում հիմնւում է «Խարիսխ» զինագործարանը, Ռուսոմի մասնակցութեամբ, որի առաջին ղեկավար-արհեստաւորներն էին Արիստակէս Ջօրեանը (Կարօ), այնուհետև Արիստակէս Աբրահամեանը, Միհրանը, Սամսոնը, զինագործ Պետրոսը (Բագրատ Յովհաննիսեան), վարպետ Քաթանեանը, Լևոնը, Փարսադանը, Միալցիսացի Երուանդը, Հրաչ Սեղբոսեանը, Բոլղար Մարգարը, Արշակ Սիմեցին և ուրիշներ: Ռուսաստանի խորքերից (Տուլա) Կովկասի վրայով Թաւրիզ փոխադրուած զէնքերը հաւաքում, նորոգում ու լրացում էին «Խարիսխ» զինագործարանում, ապա գաղտնի կերպով փոխադրում էին Սալմաստ կամ Խոյ ու Թադէոս առաքելի վանք և այնտեղից Երկիր»[12]: «.... Ռուսական ափէն,- գրում է Մալիասը,- քէլէկներով (մակոյկ) Արաքսի վրայով ռազմամթերք կ'անցընէին պարսկական ափը՝ գիշերով, իսկ անկէ ալ կը փոխադրէին Սալմաստ կամ Խոյ»[13]:*

Իսկ *«ՀՅԴ Առաջին Ընդհանուր ժողովին յաջորդած տարիները՝ 1892-1897 թթ.-ը, դարձան ազատագրական պայքարի ծաւալման ու դրա հիման վրայ՝ ՀՅԴ կազմակերպական կառոյցի ընդլայնման և ամրապնդման շրջանը, որի հետևանքով կուսակցութիւնը իր գործունէութիւնը կենտրոնացրեց միաժամանակ մի քանի ուղղութիւնների վրայ: Բայց ի վերջոյ, այդ բոլոր աշխատանքները միտուած էին Արևմտեան Հայաստանի ազատագրմանը, թէև անմիջականօրէն հետապնդում էին զէնքի ու զինամթերքի տեղափոխման, դէպի Երկիր ուղիներ հարթելու, ժողովրդին զինելու, դաւաճաններին ու մատնիչներին ահաբեկելու ու նաև ցուցական*

բնոյթի գործողութիւններով նրոպական երկրների ուշադրութիւնը Հայկական հարցի վրայ հրաւիրելու անմիջական նպատակներ: Այդ խնդիրների իրականացմանը հետամուտ կուսակցութիւնը սկսեց միաժամանակ մի քանի ուղղութիւնների վրայ մարդուժ և զէնք կուտակել Արևմտեան Հայաստան տեղափոխելու համար: Դրանցից առաջինը Ատրպատականն էր, ուր ՀՅԴ գործիչները թափանցել էին դեռևս մինչև Առաջին Ընդհանուր ժողովը»[14]:

Միւս կողմից՝ ՀՅԴ-ն Երկրի հետ հաղորդակցելու համար ունէր նաև Կարսի և Բագրևանդի գծերը, բայց ռուսական հսկողութեան՝ սահմանների վրայ խիստ լինելու պատճառով նախապատուութիւնը տրւում էր ընդհանրապէս Ատրպատականին: 1900-ական թականներին Գիլանն ու Մազանդարանն էլ կապւեցին Ատրպատականի շրջանին՝ Բաքու–Էնզէլի–Ռաշտ գծով զէնքերի փոխադրութեան և ընդհանրապէս Կովկասի հետ կապ պահելու համար: Թաւրիզը, Սալմաստը, Մակուն, Խոյը, Ռաշտը և այլ վայրեր ամբողջ երկու տասնամեակ ապաստան դարձան ՀՅԴ ընտրեալ գործիչների և հայդուկների համար, որոնք իրենց առաւելագոյն ճիգերը գործադրեցին՝ միշտ վառ պահելու համար յեղափոխութեան կրակը Արևմտեան Հայաստանում: ՀՅԴ ստեղծման հենց առաջին տարում պարսկա-թուրքական սահմանագլխի Դուշմանայ ձորում գտնւող Դերիկի կիսաւեր վանքը ընտրւեց որպէս յեղափոխականների կենտրոն[15], որտեղ առաջին գործիչը եղաւ ղարաբաղցի Մովսէս Իշխանեանը (1890)[16]: Թաւրիզում Բիւրոյի նստավայրը[17] հաստատելու մասին Ընդհանուր ժողովի որոշումը ընդգծում էր այդ ուղղութեան կարևորութիւնը: Եւ պատահական չէր, որ Ընդհանուր ժողովից յետոյ ուժեղացւեց տեղի կազմակերպութիւնը՝ ներգրաւելով մարտական

Յովսան Դաւթեան

Թաւրիզի «Խարիսխ» զինագործարանը

ու մտաւորական գործիչների մի ամբողջ խումբ, որոնք աշխուժացրին Ռոստոմի նախաձեռնութեամբ և նրա եղբօր՝ Կարոյի *(Արիստակէս Ջօրեան)* ջանքերով ստեղծած *«Խարիսխ»* զինագործարանի[18] աշխատանքը, ինչպէս նաև համախմբւեցին պարսկա-թուրքական սահմանին յենակէտ դարձած Դերիկի վանքի շուրջ, որտեղ որպէս վանահայր հաստատւել էր հայ ազատամարտի և ՀՅԴ նւիրեալ հոգևորական Բագրատ վարդապետ Թաւաքալեանը: Դերիկ էին անցել Յովսէփ Արղութեանը *(Իշխան)*, Նիկոլ Դումանը *(Նիկողայոս Տէր-Յովհաննիսեան)*, Ֆարհատը *(Սարգիս Օհանջանեան)*, Սնքարեցի Սաքօն *(Սարգիս Ծովանեան)*, Սաթենիկ Մատինեանը *(օրիորդ Ծաղիկ)* և ուրիշներ: Դերիկի վանքի[19] համար մղած կռիւներում եւ Վասպուրական զէնք փոխադրելու նպատակով ձեռնարկւած բազմաթիւ վտանգաւոր ու արկածալից արշաւանքներում իր խիզախութեամբ առանձնապէս աչքի ընկաւ ՀՅԴ մարտական լաւագոյն ուժերից մէկը՝ Նիկոլ Դումանը[20]: Միւս կողմից. *«….Քուրդերը, հասկնալով, որ իրենց սրտի մէջ վտանգաւոր բոյն մը կը շինւի, տեսակ մը հայկական միջնաբերդ, որոշեցին - թուրք կառավարութիւնն ալ կը դրդէր արդէն - վերցնել մէջտեղէն այդ վանքը: Ուստի պարբերաբար արշաւանքներ կգործէին անոր դէմ: Կռիւը ընդհատ-ընդհատ տեւեց տարիներ: Վանքը կը պաշտպանէին հոն հաստատւած բուռ մը յեղափոխականները»*[21]:

Արշաւանքներից կարևորագոյնը 1897 թ. Խանասորի դաշտում քուրդ մազրիկցիների դէմ հայդուկային կռիւն էր, որն էլ ակունք էր առել Ատրպատականից, որտեղ 1895 թ. շրջանային *(ռայոնական)* ժողովի որոշմամբ հաստատւած էր Պարսկ. բիւրոն: *«1896-1897 թթ. տարեկան «Ընդհանուր» ժողովը որոշել էր Ատրպատականում ևս պատրաստի ուժեր ու զէնք կուտակել, անհրաժեշտութեան դէպքում սահմանն անցնելու և արշաւանք կազմակերպելու համար՝ միաժամանակ փորձելով զինել Վասպուրականի հայութեանը….»*[22]:

Նոյն ժողովի ամենակարևոր որոշումը, *«Անկասկած, Ատրպատականից դէպի Վասպուրական արշաւանքի կազմակերպման խնդիրն էր, որին սկզբնական*



Կարս (Արիստակէս Ջօրեան)

շրջանում դէմ էին արտայայտում Վասպուրականի գործիչները, ինչպէս նաև Ատրպատականում գտնուող ֆիդայիների մի մասը՝ Վարդանը, Իշխանը, Սև Քարեցի Սաքօն և ուրիշները: Ուստի Սալմաստում 1897 թ. յուլիսի 8-ին կայացած ժողովը թէև որոշում է բաւարարել Վանի դաշնակցականների պահանջը և այնտեղ ուղարկել 50 զինուած հայդուկներ, սակայն, միաժամանակ, Նիկոլ Դումանի պնդմամբ կարևորում է նաև «Ընդհանուր» (Ռայոնական) ժողովի որոշումը կատարելու անհրաժեշտութիւնը»[23]:

«Սալմաստում յեղափոխական գործը կը տարուէր ամենայն ոգևորութեամբ և անձնազոհութեամբ, երբ 1896-ին Վանէն Պարսկաստան անցնող 200 կուսակներ և 1000-ի չափ անզէն հայեր, Մ. Աւետիսեանի, Պետոյի և Մարտիկի առաջնորդութեամբ, յարձակում կրեցին Մազրիկ ցեղի քուրդերէն և Ս. Բարթողիմէոս վանքին մօտերը կոտորուեցան կարմ դիմադրութենէ ետք: Ահա այս դէպքին հակահարուածը եղաւ Խանասորայ պատմական արշաւանքը (1897), որ կազմակերպուեցաւ Սալմաստի մէջ»[24]: Կազմակերպուած արշաւանքը նախորդ բոլոր հայդուկային անցումների համեմատ ամենախոշորն էր, որի ժամանակ կիրառուեցին բանակային կարգապահութեան որոշ տարրեր. հրամանատար՝ Ս. Մեհրաբեան *(Վարդան)*, տեղակալ՝ Յ. Արղութեան *(Իշխան)*, առանձնացուեցին յիսնեակներ և այլն, քանզի մօտ 250 հայդուկներին այլ կերպ հնարաւոր չէր ղեկավարել: Մազրիկցիների ցեղին հասցուած հարուածը Խանասորի դաշտում 1897 թ. յուլիսի 25-ին շշմեցուցիչ էր և անկասկած նպաստեց քրդական տարրին սանձելուն ու զսպելուն[25]: Արշաւանքից յետոյ Ատրպատականի Կենտրոնական կոմիտէն օգոստոսի սկզբներին հետևեալ գրութիւնն է յղել *«Դրօշակ»*-ի խմբագրատանը. *«Դաշնակցութեան ստուար արշաւախումբը... յարձակում գործեց Խանասորի լեռնադաշտի վրայ և չորս կողմից պաշարեց Մազրիկ կոչուած արիւնարբու քուրդ ցեղը: Ֆեդայիների շեշտակի գնդակները գրեթէ բնաջինջ արին այդ թշնամի ցեղը, որի գործն են Աղբակի բոլոր կոտորածները... որը դեռ անցեալ տարի Ս. Բարթողիմէոս վանքի շրջակայքում կոտորեց Աւետիսեանի (արմենական - Դ. Մ.) առաջնորդութեամբ Վանից փախած հարիւրաւոր հայերի խումբը, կոիւը տևեց լեռնոտ դիրքերում մինչև ուշ գիշեր... զոհ տուինք միայն 19 քաջեր»[26]:*

Խանասորի արշաւանքի մէկ այլ առանձնայատկութեան մասին Մ. Վարանդեանը այսպիսի բնութագրական է տալիս. *«19 քաջեր ընկան հայրենի հողի վրայ այդ բռուն կոիւներու ընթացքին: 19 ՆԱՀԱՏԱԿՆԵՐ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԷՆ... թուրքահայ, ռուսահայ, պարսկահայ: Վանեցի, շատրաքցի, համադանցի, մշեցի, գողթնեցի, ղազախեցի, ղզլարցի, նորբայազէտցի, ալեքսանդրապոլցի, թիֆլիսցի, ղարաբաղցի, ախալցիսացի, ախալքալակցի և այլն...*

....Յուզիչ տողերով փառաբանուեցաւ Խանասորի արշաւանքը Բեռլինի «Die Zukunft» նշանաւոր հանդէսին մէջ: Ընդարձակ թղթակցութիւն-յօդուած մը, որ ղրկել էր Գերման ճամբորդ մը թուրք-պարսկական սահմանագլխէն և որ ամբողջապէս տպագրուած է «Դրօշակ»-ի մէջ, Լևոն Աթաբէկեանի թարգմանութեամբ («Հայերու մէկ յաղթութիւնը»)»[27]:

Հետագայում՝ Թաւաքալեան վարդապետի՝ Թաւրիզ մեկնելուց յետոյ, Դերիկը՝ որպէս ՀՅԴ կենտրոն, կորցրեց իր արժէքը, և ՀՅԴ նոր կենտրոն ընտրուեց Ղալասար գիւղը, որտեղից իր ցանցերը տարածեց ամբողջ շրջանում[28]: Դէպքերը հետագայում որոշ չափով արժեզրկեցին նաև Սալմաստը, այնպէս որ ՀՅԴ-ն, 1903 թուականից սկսեալ, իր աշխատանքների կենտրոնը դարձրեց Խոյն ու Մակուն և առանձնապէս Թադէոս առաքեալի վանքը *(Մենաւոր)*[29]:

Վերոնշեալ կենտրոններից բացի՝ Ուրմիան *(Կապուտան)* իր աշխարհագրական դիրքով շատ նպատակայարմար էր Երկրի հետ կապ պահելու, յարաբերուելու տեսանկիւնից: Թէև Սալմաստից Աղբակով կապ էր հաստատուած Երկրի հետ, այդուհանդերձ, այդ ուղին, ինչպէս երևում է ՀՅԴ մարմինների գործունէութիւնից, չէր բաւարարում գործի պահանջները, մանաւանդ որ Դերիկի կործանումից յետոյ Խոյն ու Թադէոս առաքեալի վանքը ստանձնել էին Երկրի հետ կապի ողջ բեռն ու պատասխանատուութիւնը:

Խանասորի արշաւախումբը

Անդրանիկ

Մուրադ

Կայծակ Առաքել

Սեպուհ

Քեռի

Այդ պատճառով հասկանալի պէտք է համարել ՀՅԴ Արևելեան բիւրոյի և Թաւրիզի Կենտրոնական կոմիտէի փորձերը՝ Ուրմիայից Մարգեաւար, Թարգեաւարի և քրդական Շամստինան շրջաններով Վասպուրականի հետ կապի նոր ճամբայ հաստատելու ինչը կարող էր իրականացել միմիայն քրդերի հետ համաձայնութեան գալով և համագործակցելով *(քրդերի հետ Մալխասի բանակցութիւնների օրինակով)* [30]:

Կ. Գէորգեանը, նոյն «Ամենուն տարեգիրքը» աշխատութեան մէջ անդրադառնալով Պարսկաստանում ՀՅԴ գործունէութեանը, ընդգծում է, որ անհատնում է շարքը այն դաշնակցական հայդուկների, խմբապետերի, գործիչների ու ղեկավարների, որոնք երկար կամ կարճ ժամանակով տարբեր ժամանակներում անցան Ատրպատականից կամ մնացին այնտեղ և գործեցին և կամ նահատակուեցին արիւնալի կռիւների ընթացքում: Մի շարք անուններ յիշատակուեցին արդէն: Ուշագրաւ է նաև Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի, Կայծակ Առաքելի, Սեպուհի, Քեռիի և Սմբատի դերակատարումը, որոնք իրենց ընկերների հետ 1904 թականի Սասունի կռիւներից յետոյ ապաստանեցին Մենաւոր վանքում:

Առանձնայատուկ է եղել Իշխան Յովսէփ Արղութեանի գործունէութիւնը, որն իր խոր հետքը թողեց ՀՅԴ պատմութեան մէջ՝ սկսելով կուսակցութեան հիմնադրման ու ապա Խանասորի արշաւանքի օրերից և հասնելով մինչև նրա նշանակումը Իրանի կառավարութիւնում որպէս Հայաստանի Հանրապետութեան դեսպան:

Չպէտք է մոռանալ նաև Կուկունեանի արշաւախմբի աքսորականներից և ապա Սիբիրից փախստական՝ Գանձակի շրջանից բարսումեցի Եփրեմ Դաւթեանի վիթխարի ներդրումը Իրանի սահմանադրական շարժման կռիւներում կամ Կոստի Համբարձումեանին, որը դարձաւ Սալմաստի 1918 թականի կռիւների ղեկավարներից մէկը:

Ուշագրաւ է ագուլեցի Սամսոն Թադէոսեանի՝ նոյն ինքն Սամսոն խանի կամ պարզապէս Սամսոնի *(Քրիստափորի քրոջ որդին)* ազդեցիկ գործունէութիւնը, ով, Կովկասից գալով 1898 թականին, մինչև իր մահը *(1 մարտի 1945 թ.)* նախ Սալմաստում *(20 տարի)* և ապա Թաւրիզում *(27 տարի)* ՀՅԴ ամենապատասխանատու գործիչներից մէկն էր՝ որպէս մարտական ձեռնարկների ղեկավար, հասարակական գործիչ, ուսուցիչ և գիւղատնտես, որպէս կապ պարսիկ իշխանութիւնների հետ, որպէս զինագործ ու կուռող ռազմիկ, վերջապէս որպէս մէկը, որի ամբողջ կեանքը նուիրում է եղել իր ժողովրդին յեղափոխական և այլ աշխատանքների բազմատեսակ մարզերում:

Մէկ այլ նուիրեալ՝ բնիկ ռոտոսթոցի *(Թէքիրդաղ)* դոկտ. Յարութիւն Ստեփանեանը, ով, 1902 թականին Ամերիկայից Իրան անցնելով, աւելի քան կէս դար ապրեց և գործեց նախ Թաւրիզում և ապա Թեհրանում որպէս ՀՅ Դաշնակցութեան ամենագործուն, անձնուէր և պատասխանատու դէմքերից մէկը:

Խիստ ուշագրաւ է Մալխասի դերակատարութիւնը հայ-քրդական փոխյարաբերութիւնների հոլովոյթում: Այս կապակցութեամբ Հր. Սիմոնեանը գրում է. *«.... Դաշնակցութեան Արևելեան բիւրօն, շատ կարևոր համարելով Վանի նահանգի արևելեան սահմանի վրայ գտնուող Հաքեարիի քրդերի հետ բարեկամական յարաբերութիւններ հաստատելը, ՀՅԴ Վրէժի (Թաւրիզ) կենտր. կոմիտէին յանձնարարում է Ատրպատականի կուսակցական գործիչներից մէկին ուղարկել Շամստինանի շրջան՝ այնտեղի ազդեցիկ տէր Մեհմեդ Սդրիի հետ հանդիպելու և կապեր հաստատելու համար: Կենտրոնական կոմիտէն 1903 թ. աշնանը Շամստինան է ուղարկում յայտնի կուսակցական գործիչ Մալխասին:*

Հասնելով Շամստինան՝ Մալխասը տեսակցում է շէյխի հետ և Դաշնակցութեան կենտրոնի անունից բանակցում է նրա հետ:

Բանակցութեան ընթացքում Մալխասը շէյխ Սդրիին պարզում է Դաշնակցութեան տեսակէտները քուրդ-հայկական յարաբերութիւնները կարգաւորելու և եթէ հնարաւոր է՝ համերաշխութիւն հաստատելու վերաբերեալ» [31]:

«....Խելօք մարդ էր, խորամանկ և բնածին

քաղաքագէտ մը,- գրում է Մալխասը,- որուն սրտին մօտիկ էին իր ժողովուրդի շահերը: Դժբախտաբար, չունենալով լայն քաղաքական հորիզոն մը, չկրցաւ համերաշխութեան լեզու մը գտնել մեզի հետ, թէև այդ բանին կ'աշխատէին մասնաւորաբար Արամն ու Վռամեանը: Ահա այս մարդուն մօտ է, որ գնացեր էի ես՝ որպէս ՀՅ Դաշնակցութեան ներկայացուցիչ՝ հնարաւոր համագործակցութեան մը գծերը պատրաստելու....

....Մանրամասն կերպով բացատրեցի իրեն մեր ծրագիրը, մեր պահանջները, միաժամանակ յայտնելով, որ մեր կազմակերպութիւնը սկսած օրէն իսկ բուռն ցանկութիւն է ունեցած մեր քիւրտ հայրենակիցներու հետ համագործակցութիւն մը ստեղծել: Օրինակ բերի անոր՝ Պետերխան պէյի կոչը, որ տպագրուած էր «Դրօշակ»-ի մէջ: Աշխատեցայ համոզել զինքը, որ մեր շարժումը պէտք է լինի ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ, և որ ան ոչ մէկ կերպով ուղղուած չէ քիւրտ ժողովուրդի դէմ: Ըսի, որ մենք կը համարենք քիւրտերը հողի հարազատ եղբայրներ, և որ մեր շարժումը չի ձգտիր միայն հայ ժողովուրդի դրութիւնը բարելաւելու, այլ բոլոր անոնց, որոնք կ'ապրին այդ հողամասի վրայ: Դժբախտաբար, համիտեան բռնակալութիւնը, շահագործելով քիւրտերու տգիտութիւնը, միջոց է դարձուցեր զանոնք կուեցնելու մեզի հետ: Բացատրեցի, որ մեր կռիւներուն մեծագոյն մասը հարկադրաբար տեղի կ'ունենայ քրտերուն հետ, որոնց դէմ մենք թշնամութիւն մը չունինք, որ մեր կռիւը ուղղուած է թուրք ռէժիմին դէմ, որու փոփոխման համար է, որ մենք ասպարէզ ենք իջած: Յայտնեցի, որ մենք կ'ուզենք ստեղծել իրաւակարգ մը, որ կարողանայ համահաւասար կերպով, բոլոր ազգութիւններու համար ալ ցանկալի լինել: Խօսեցայ նոյնպէս կամ, աւելի ճիշտ է ըսել, փորձեցի բացատրել անոր ֆէտէրացիայի կամ դաշնակցութեան գաղափարը....»[32]:

Հայ-քրդական յարաբերութիւնների քաղաքական առաւելութիւններին ու կարևորութեանը անդրադառնալով՝ Մալխասը շեշտադրել է նաև նոյն հարցի վերաբերեալ շեյխ Սադըղի մօտեցումները. *«....Ձեզ սիրելու մասնաւոր պատճառ մը չունինք, բայց գիտենք, որ այս հողին վրայ դուք այնչափ հին էք, որչափ մենք, և որ նորեկը թուրքն է, որուն հանդէպ երկուքս ալ սիրալիր տրամադրութիւն մը ունենալու պատճառը չունինք: Մեր հողամասը ընդարձակ է, լայն ու լայն կը բաւէ մեր երկուքին ալ: Սկսելով Պաշկալայէն ու Նորտուզէն մինչև Մուսուլ մերն է, վերն ալ՝ ձերը: Ահա այս բանի մասին է, որ պէտք է մտածենք մենք: Եթէ դուք մեզի աջակցիք, մենք ալ պատճառ մը չունինք ձեզ հակառակելու՝ ձեր ծրագիրներու իրագործման համար....»[33]:*

ՀՅԴ գործիչ Մալխասը առանձնայատուկ կարևորութեամբ քուրդ շեյխին ներկայացրել է իր պահանջները՝ ապահովել հայ յեղափոխականների, մասնաւորաբար սուրհանդակ խմբերի և ապրանքատար շալակաւորների անվտանգ անցուդարձը

Իշխան Յովսէփ Արղութեան

թուրք-պարսկական սահմանագծերում, ինչպէս և նրա օժանդակութիւնը՝ շրջանում քուրդ աշիրեթապետերի և հայերի միջև փոխըմբռնման հասնելու համար:

Ինչևէ, հայ-քրդական փոխյարաբերութիւնների կարգաւորման անհրաժեշտութիւնը մշտապէս արծարծուող հարց է եղել հայ ազատագրական պայքարի հոլովոյթում: Իսկ ՀՅԴ օրգան *«Դրօշակ»*-ի՝ տեսել խնդրին տուած գնահատականը աւելի ակներև է դարձնում այդ անհրաժեշտութիւնը. *«....Քուրդ-հայկական համերաշխութեան հարցը նոր երեւոյթ չէ մեր կեանքում: Ներսէս Վարժապետեանի, Մկրտիչ Խրիմեանի հայեացքները եւ նրանց որոշ գործնական քայլեր այդ սահմաններում յայտնի են շատերին: Ռաֆֆիի մշտական քարոզները, Սրուանձտեանցի կարծիքները եւ դրա հետ շատ ուրիշների երբեմն մոլեռանդ հաւատը, երբեմն բաւականաչափ հիմնաւորուած համոզումները վաղուց են շրջում մեր հասարակութեան մէջ: Վերջապէս անցեալ տասնամեակում քրդերի հետ դաշնակցելու նպատակով հայ յեղափոխականների տեղ-տեղ արած փորձերը նոյնպէս արդէն դուրս են գաղտնիքի շրջանից»[34]:* Սակայն փաստ է նաեւ այն իրողութիւնը, որ *«....Տասնամեակներ շարունակ արեւմտահայ ազգային մարմինները եւ մանաւանդ ՀՅ Դաշնակցութիւնը բազմատեսակ միջոցների դիմեցին հայ-քրդական համերաշխութիւն կայացնելու ցանկութեամբ, սակայն անկարելի եղաւ: ....Եւ միայն շատ ուշ քրդերը չարաչար կերպով զղջացին, որ դարերի ընթացքում հայերի հետ բարեկամ չեն եղել, այլ թշնամի»[35]:*

***

Ներազգային գետնի վրայ մէկը միւսին բացասելու, սակայն իրենց քաղաքական ու գաղափարական նպատակներով ու դրանց իրականացման մեթոդներով շարունակաբար միմեանց ընդօրինակելու և միմեանցից սովորելու հետևանքով Արմենական, Սոցիալ-դեմոկրատ հնչակեան և *«ՀՅ Դաշնակցութիւն»*

կուսակցութիւնները 1885-1895 թականներին դարձան հայ ազգային-ազատագրական պայքարի խորքում նշմարուող *«Մէկ շարժում – մէկ կազմակերպութիւն»* սկզբունքի կիրարկման եւ օբյէկտները, եւ սուբյէկտները: Պատճառն ակնհայտ է. վերելք ապրող և միաւորման ընդհանուր առանցք փնտրող հայ ազգային-ազատագրական շարժումն անխուսափելի էր դարձնում իրենց գործառոյթներով դեռևս սոսկ ազատագրական կազմակերպութիւններ հանդիսացող այս կուսակցութիւններից որևէ մէկի՝ հայութեան քաղաքական նպատակները ամբողջացնող ուժը և անկախ պետականութեան վերականգնման գործի առաջամարտիկը դառնալու հեռանկարը: Դա էր թելադրում նաև այլ ժողովուրդների ազատագրական պայքարի փորձը: Սակայն հայ իրականութեան մէջ այս անխուսափելի և օրինաչափ գործընթացը ստացաւ խիստ իւրայատուկ կերպաւորում: Կուսակցութիւնների մեխանիկական միաւորման փորձերը ձախողուեցին, բայց ազգային-ազատագրական պայքարի կոնկրետ պահանջները բաւարարելու ուղղութեամբ երեք ուժերի ձեռնարկած զուգահեռ քայլերը յանգեցրին գաղափարա-քաղաքական ժառանգորդականութեան իւրայատուկ շղթայի ստեղծմանը՝ Արմենական կուսակցութեան բնօրրան Վանի, Հնչակեանի ձևաւորման կենտրոն դարձած Ժնևի և ՀՅԴ օրրան Թիֆլիսի միջև[36]:

Ելակէտային չափորոշիչները թոյլ են տալիս եզրակացնել, որ քննութեան ենթարկուող դարաշրջանում՝ 1885-1918 թթ., առանցքային միտումը հայ ազգային-ազատագրական շարժման անշեղ ու հետևողական վերելքն էր, որն անխուսափելի էր դարձնում ոչ միայն ազգային կուսակցութիւնների հիմնումը, այլև դրանց ուժերի ու հնարաւորութիւնների կենտրոնացման շուրջ 10-ամեայ *(1885-1895 թթ.)* գործընթացի փոխակերպումը *«Մէկ ազգ – մէկ կազմակերպութիւն»* բանաձևի հայկական տարբերակի փնտրտուքի: Այսինքն՝ մի կողմից ազատագրական խմբակներին ու կազմակերպութիւններին փոխարինում էին ազգային կուսակցութիւնները, միւս կողմից առաջ էր գալիս դրանց միջոցով հայ ազատամարտի ուժերի ու հնարաւորութիւնների կենտրոնացման առաջադրանքը, որն արտաքուստ ընդունում էր *«Միութեան ու համերաշխ գործակցութեան»* խնդրի շուրջ ծաւալուող մրցակցութեան ու համագործակցութեան կերպարանք: Մինչդեռ այս գործընթացի խորքում իրականում տեղի էր ունենում հայ ազատամարտի վերելքով պայմանաւորուող՝ միասնական գաղափարա-քաղաքական ուղղա-հայեացի ձևաւորում՝ արմենականներ–հնչակեաններ–*«Երիտասարդ Հայաստան» – «Հայ Յեղափոխական-ների Դաշնակցութիւն» –«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»* փոխբացասման ու փոխադարձ ժառանգորդականութեան շղթայի տեսքով, որոնցից իւրաքանչիւրը, իւրացնելով իր նախորդի փորձը, որակական նոր մակարդակի էր բարձրացնում արեւմտահայերի ազատագրութեան համար սկիզբ առած պայքարը[37]: ■



Մալիաս (Արտաշէս Յովսէփեան)

Օգտագործված Աղբյուրներ

1- Ռէյիս օլ Սադաթի Սէյեդ Էհսան, Դար թաքափոյէ եք հեզբէ մախֆի վա մոասէր (Մի ազդեցիկ և գաղտնի կուսակցութեան փնտրտուքի մասին), www.irdc.ir/FA/content/ 12102/default.aspx.:

2- Նոյն տեղում:

3- Ռային Ի., Իռանիանէ առմանի (Իրանահայերը), էջ 141:

4- Ըստ «Պատմագրութիւն Հ.Յ.Դ.-ի» քառահատոր շարքի Ա հատորի 109-110-րդ էջերի մատնանշումների՝ «Շատ կարճ ժամանակամիջոցի մէջ ողջ Պարսկաստանի մէջ մենատիրութեան հասնող գերակայութիւն ձեռք բերեց Դաշնակցութիւնը շնորհիւ Ռոստոմի, որ, գողթնեցի լինելով, ծանօթ էր այդ երկրին, և շնորհիւ Յովնան Դաւթեանին, որ դարատաղցի (Պարսկաստան) էր, Շուշի ուսում ստացած: Այս տարօրինակ հիմնադիրները ուրուականների պէս կ'երևային Պարսկաստանի տարբեր վայրերու մէջ և յետոյ կը կորսուէին: Հրապարակ չէին ելլէր և ոչ կը քարոզէին, ոչ կը վիճէին և ոչ ալ կը գրէին: Միայն թէ ուր որ անոնք կ'այցելէին, իրենց ետևէն կեանքը կ'եռար, Դաշնակցութեան նորաստեղծ կազմակերպութիւն մը առաջ կուգար, և Արմենական ու Հնչակեան կուսակցութիւնները կը հալէին, կը չքանային գարնան ձիւներու նման: Պատճառը այդ արագ և շշմեցուցիչ յաջողութեան, այդ տարօրինակ վարպետներու գործին և մեր նպատակներուն մօտենալու ձևին մէջ էր»: «....Այդ անվերապահ վստահութիւնը հանդէպ ուխտեալներուն, այդ ապակեղրոն ձևը սպանիչ էին հեղինակութեանց հմայքի վրայ յենուած կեդրոնաձիգ կուսակցութեանց համար, ինչպիսին էին Արմենականութիւնը և Հնչակեանութիւնը: Դաշնակցութիւնը իր կազմի, անդամներուն բոլոր մասերով կը շնչէր ու կը մտածէր, և իբրև հետևանք ատոր՝ սոնկի պէս կը բուսնէին դաշնակցական կորիզները ինքնաբերաբար, իրենց բազմատեսակ ձեռնարկներով, դպրոցներով, զինական գործարաններով և այլն»: «Կեդրոնաձիգ Հնչակեան կուսակցութիւնը արագօրէն տեղի կուտար ապակեղրոն նորածին Դաշնակցութեան առջև: Արմենական կուսակցութիւնը, Դաշնակցութեան երևալուն պէս, հալեցաւ անոր մէջ....»:

5- Խուդինեան Գ., Հ. Յ. Դաշնակցութեան քննական պատմութիւն (ակունքներից մինչև 1895 թականի վերջերը), Եր., հրատ. ՀՅԴ-ի, 2006, էջ 124:

6- Նոյն տեղում, էջ 280:

7- Տես նոյն տեղում, էջ 280:

→բազմատեսակ ձեռնարկներով, դպրոցներով, զինական գործարաններով և այլն»: «Կեդրոնաձիգ Հնչակեան կուսակցութիւնը արագօրէն տեղի կուտար ապակեղրոն նորածին Դաշնակցութեան առջև: Արմենական կուսակցութիւնը, Դաշնակցութեան երևալուն պէս, հալեցաւ անոր մէջ....»:

Ըստ պատմագէտ Արսէն Կիտուրի «1885-1908 թթ. հայ ժողովրդի

ազգային-ազատագրական պայքարը» աշխատության, որում հեղինակը ներկայացնում է նաև հնչակեան գործիչների գործունէութիւնը Սալմաստում, դէպքերի նկարագրութիւնից պարզ է դառնում, որ այդ գործունէութիւնն այնքան էլ արդիւնաւէտ չէր: Դա, ի թիւս այլ պատճառների, կարելի է պայմանաւորել նրանով, որ Պարսկաստանում ուժեղ էին դաշնակցականները:

8- Գէորգեան Կ., Ամենուն տարեգիրքը, Պէյրութ, 1958, էջ 518:

9- Խուդինեան Գ., «Հայ Յեղ. Դաշնակցութիւն», ՀԳԱԱ պատմ. ինստ. հրատ.,նշ. աշխ., էջ 83:

10- Ամուրեան Ա., ՀՅ Դաշնակցութիւնը Պարսկաստանում. 1890-1918, Թեհրան, «Ալիք», էջ 41-42 (տես Վարանդեան Մ., ՀՅԴ Պատմութիւն, Ա հատոր, Փարիզ, 1932, էջ 123-124):

11- «Պատմագրութիւն ՀՅԴ-ի», Ա հատոր, էջ 180:

12- Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 41-42:

13- «Արամը», Բ. հրատ., Թեհրան, հրատ. ՀՅԴ-ի, 1969, էջ 424:

14- Խուդինեան Գ., նշ. աշխ., էջ 88:

15 Գ. Խուդինեանը իր «ՀՅ Դաշնակցութեան քննական պատմութիւն» աշխատութեան մէջ գրում է. «Հայ զինեալների՝ Դերիկում հաստատուելու հետևանքով Թուրքիայից Պարսկաստան անցնող քուրդ ասպատակները զրկուեցին իրենց խիստ անհրաժեշտ ճանապարհներից, որոնց հանգուցակէտը հէնց Զարևանդի Ս. Աստուածածինն էր: Այդ պատճառով նրանք դիմեցին յաճախակի յարձակումների, որոնցից մէկի ժամանակ՝ 1892-ի մայիսին, զոհուեց Մովսէս Իշխանեանը: Հարկաւոր էր ամրացնել վանքը և մեծացնել նրա պաշտպանների թիւը նոր յարձակումներին դիմակայելու համար....

....1894 թ. սեպտեմբերի վերջին Դերիկից Վասպուրական մեկնեց Ատրպատականում ձևաւորուած ՀՅ Դաշնակցութեան առաջին զինուոր խումբը՝ սկիզբ դնելով մէկը միւսից աւելի հերոսական, արկածներով լի անցումների, զէնքերի փոխադրութեան և նոյնքան վտանգաւոր յետդարձերի տարեգրութեանը: ....Հէնց այդ անցումներից մէկի ժամանակ՝ Բողազ-Քեսանի կոիւներում ցուցաբերած անօրինական խիզախութեան համար հայ ֆիդայու քաջութիւնից ցնցուած հակառակորդի կողմից անուանակոչուեց մեծ հայդուկապետ Նիկողայոս Տէր-Յովհաննիսեանը՝ ընդմիշտ ստանալով «Դուման» պատուանունը» (Խուդինեան Գ., նշ. աշխ., էջ 287-290):

16- Տես Գէորգեան Կ., նշ. աշխ., էջ 518-519:

17- Գ. Խուդինեանի «Հ. Յ. Դաշնակցութեան քննական պատմութիւն» աշխատութեան 282-րդ էջում կարդում ենք նաև հետևեալը. «....1891 թւականից՝ 1-2 տարուայ տարբերութեամբ, դաշնակցական գործիչների մի ամբողջ փաղանգի հաստատուելը Ատրպատականում առաջին հերթին Թաւրիզը դարձրեց ՀՅԴ ուժերի ու միջոցների կուտակման երկրորդ խոշոր կենտրոնը՝ Թիֆլիսից յետոյ: Ապրիլ, արդէն 1892-ի ամռանը կայացած ՀՅԴ առաջին Ընդհանուր ժողովը իր ընդունած ծրագիր-կանոնագրով Թաւրիզի կուսակցական մարմնին շնորհեց Բիւրոյի կարգավիճակ»:

18- Գ. Խուդինեանը մատնանշում է, որ որոշ հեղինակների կարծիքով՝ «Խարիսխ» զինագործարանը հիմնել է նախքան Ռոստոմի ժամանումը, որը Ատրպատական է անցել միայն 1892 թւականին (տես Սեեան Ռ., ՀՅԴաշնակցութեան առաջին քայլերը և գործիչները, «Հայրենիք», 1937, թիւ 6, էջ 76):

19- Ըստ Նազար Յ. Գոռոյեանցի «Պարսկաստանի հայերը» գրքի 180-րդ էջում տրուած բացատրութեան՝ Դերիկի պատմական վանքը և համանուն գիւղը գտնուում են Դուշմանայ ձորի բարձունքներում: Գիւղը նախքան 1828 թ. եղել է հայաբնակ: Այդ թւականին քաղաքական իրադարձութիւնների և ներգաղթի հետևանքով հայերի փոխարէն հաստատուել են քուրդ բնակիչներ: Դերիկի վանքը, որ Բաֆֆու հերոսների արձաբոյնն է, մեծ դեր է ունեցել հայ ազատագրական պայքարի նորագոյն շրջանի պատմութեան մէջ, մասնաւորապէս՝ 1890-ական թթ.-ին: Առաջին առաքելը եղել է ղարաբաղցի Մովսէս Իշխանեանը, որ Աւետեաց երկիրը տանող այդ ամրոցը վերակենդանացրել է 1880-ական թթ.-ի վերջերին: Այնուհետև Դերիկում գործել են Վարդան Մեհրաբեանը (հետագայում Խանասորի արշաւանքի հրամանատարը), Յովսէփ Արղութեանը, Սնքարեցի Սաքօն և այլ ուխտեալներ: Վանքի ներքևում են գտնուում Մովսէս Իշխանեանի և յեղափոխական այլ գործիչների գերեզմանները: Դերիկ գիւղը Մովսէս Իշխանեանի նախաձեռնութեամբ գնում է Հաֆթվանի հայ համայնքը՝ որպէս ազգային կալուածք, և այն այդպէս մնում է մինչև 1928 թւականը, երբ Ատրպատականի առաջնորդարանի կարգադրութեամբ վաճառուեց մի քուրդ ցեղապետի:

20- Տես Խուդինեան Գ., նշ. աշխ., էջ 88: Տես նաև «Պատմագրութիւն ՀՅԴ-ի», Ա հատոր, էջ 165-166. «Եթէ Ս. Զաւարեանը իրաւամբ համարում է մեր ազատագրութեան շարժման խիղճը,- գրում է Յ. Արղութեանը,- ապա նոյնքան իրաւամբ Դումանը պիտի համարի զինուորական ամենափայլուն ներկայացուցիչներից մէկը, մեր ազատագրութեան մարտիկը: Եւ խղճի ու քաջութեան ներդաշնակութիւնը դարձաւ յենարան Զաւարեանի ու Դումանի գաղափարական գործունէութեան: Նրանց գործունէութեան միջոցները տարբեր էին, բայց նպատակը՝ մէկ: Զաւարեանը, վտարանդիի ցուպը ձեռքին, քարոզում էր գաղափարը իր հոգու ամբողջ թափով, մտաւոր ու գիտական պաշարով, իսկ Դումանը բռնութեան կապանքները ջախջախում էր զէնքով ու կրակով և հարթում ճանապարհը խղճի ու ազատագրութեան յաւիտենական յաղթանակի»:

21- Վարանդեան Մ., նշ. աշխ., Ա հատոր, Բ հրատարակութիւն, 1981թ., Թեհրան, էջ 145:

22- Խուդինեան Գ., նշ. աշխ., էջ 92:

→Վարդան Մեհրաբեանը (ապագայի Խանասորի արշաւանքի հրամանատար), Իշխան Յովսէփ Արղութեանը, Սև Քարեցի Սաքօն և այլ ուխտեալներ:

1 Վանքի ներքևում են գտնուում Մովսէս Իշխանեանի և յեղափոխական այլ գործիչների գերեզմանները: Դերիկ գիւղը, Մովսէս Իշխանեանի նախաձեռնութեամբ, գնում է Հաֆթվանի հայ համայնքի կողմից, որպէս ազգային կալուածք, և իբրև այդպիսին մնաց մինչև 1928թ.-ը, երբ Ատրպատականի առաջնորդարանի կարգադրութեամբ վաճառուեց մի քուրդ ցեղապետի:

23- Նոյն տեղում, էջ 92:

24- Գէորգեան Կ., նշ. աշխ., էջ 520:

25- Տես Խուդինեան Գ., նշ. աշխ., էջ 92:

26- Վարանդեան Մ., նշ. աշխ., էջ 194:

27- Նոյն տեղում, էջ 205-206:

28- Յատկանշական է, որ նոյն ժամանակահատուածում Դերիկի վանքում Թաւաքպեան վարդապետին յաջորդում է Վեհունի վարդապետը, որը համարւում էր արմենական, սակայն, արմենականներից օժանդակութիւն չստանալով, Վեհունին հեռանում է, և Դերիկը դադարում է յեղափոխական գործունէութեան կենտրոն լինելուց: Նրա շրջակայ երեք հայկական գիւղերը ևս տեղահանւում են՝ իջնելով Սալմաստի դաշտ:

29- Ռուբէնը (Տէր-Մինասեան), իր «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գրքում (Ա հատոր, էջ 318-319) անդրադառնալով հայ ազատագրական շարժման մէջ Թադէի վանքի՝ յատկապէս զինուոր խմբերի կայան ու միջանցք լինելու կարևորագոյն դերին, գրում է. «Թադէի վանքը շուրջ 100 քիլոմեթր հեռու է Խոյէն, 25 քիլոմեթր՝ Մակուէն, 40 քիլոմեթր՝ Պայազիտէն և 25 քիլոմեթր ալ՝ Ալազանէն, տաճկաց սահմանէն: Ան գլխաւոր ճանապարհներէն դուրս ինկած ու մեկուսացած է և ատոր համար ալ Մենաւոր կը կոչուէր մեր կողմէ:

Այդ կէտէն, մէկ գիշերուան մէջ կարելի էր հասնիլ տաճկաց սահմանը, Ալատաղ կամ Ալագան լեռը: Առաջինով կարելի էր անցնիլ Բագրևանդ, իսկ երկրորդով՝ Վան, Աբաղայի վրայով: Մեր գործի համար այս կարևոր էր:

Պարսից և տաճկաց սահմանի երկայնքով, Մասիսէն սկսած մինչև Թադէի վանքի դիմաց, մինչև Կոթուրի մօտերքը Հայտարցի ցեղախումբն էր, իսկ հիւսիս՝ Ջելալցիք: Այս երկու ցեղախումբերը մեզ հետ ունենալ կը

նշանակէր վերացնել պարսից և թուրքաց միջև եղած սահմանները և ազատ երթևեկ հաստատել Երևանէն Պարսկաստան և Պարսկաստանէն Տաճկաստան: Այդ տեսակէտէն՝ Թադէի վանքը շատ կարևոր դիտարան էր, մանաւանդ որ ան միայն 15 քիլոմեթր հեռու էր Կարէնի քրտական կենտրոնէն, որ Հայտարցի ցեղապետ Մուստաֆա Բէյին կենտրոնն էր: Վանքը պէտք էր դարձնել հայ-քիւրտ բարեկամութեան կայանը....»:

30- Տես Ամուրեան Ա., նշ. աշխ., էջ 39:

31- Սիմոնեան Հր., \Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3-րդ, էջ 147-148:

32- Մալիսաս, Ապրումներ, Ա հատոր, Թեհրան, 1982, էջ 207-209:

33- Նոյն տեղում, էջ 210:

34- «Հայ-քրդական յարաբերութիւններ», «Դրօշակ», 1904, թիւ 4 (115), էջ 1:

35- «Ասլան Ստեփանեանի յուշերը», գրի առաւ Աճեմեան Հայկը, Թեհրան, 1966, էջ 244-245:

36- Տես Խուդինեան Գ., նշ. աշխ., էջ 115:

37- Տես նոյն տեղում, էջ 9-10:

Համաներում

Վրէժ-Արմէն

Երբ խմբագիր ընկերոջս խոստացայ գրել այս նիւթին նուիրուելիք յօդուածս, տարբեր էր հայաշխարհը:

Նպատակ ունէի կոչ ուղղելու բոլոր այն հին ու սիրելի ընկերներուս, որոնցմէ շատերուն հետ նոյն «խրամատներուն» մէջ ուս ուսի պայքարած էի, որոնց հետ նոյն սեղանին շուրջ աղ ու հաց կերած էի, երգած, ուրախացած ու տխրած, որոնց հետ որքա՜ն քաղցր յիշատակներ բաժնած էի տարիներու ընթացքին: Կոչ՝ վերադառնալու տուն: Առ այդ ալ մտադրեր էի այս զրոյցին վերնագիրը դնել «Արի՛ տուն, ընկեր»:

Այդ կոչս հիմնուած պիտի ըլլար այն համոզումիս վրայ, թէ ազգի ազատագրութեան դատին իր կեանքի գնով ծառայելու երդում տուած անձը այդ երդման չի դաւաճաներ, չի կրնար դաւաճանել, թէկուզ ըլլայ շարքերէն դուրս:

Շարքերէն դուրս՝ այս կամ այն պատճառաւ՝ իր հանդէպ ցոյց տրուած արդար կամ անարդար վերաբերմունքի մը, կայացուած տեղի կամ անտեղի կարգապահական տնօրինումի մը, ըսուած ճիշտ կամ սխալ խօսքի մը կամ որևէ այլ պատճառաւ:

Շարքերէն դուրս՝ չհանդուրժելով մեր հաւաքական որոշումները, մեր գործելակերպը, մեր կազմակերպական վիճակը և շատ այլ բաներ:

Շարքերէն դուրս՝ թէկուզ անձնական այլ նկատառումներով՝ արդարացի կամ ոչ արդարացի, թերևս բնաւորութեան պատճառաւ՝ գիտակցելով, որ չի կրնար ենթարկուիլ կանոնագրի խիստ պահանջներուն:

Շարքերէն դուրս, բայց միշտ հաւատարիմ այն տեսլականին, որուն համար ան առաջին հերթին եկած ու անդամագրուած էր այս կուսակցութեան՝ Դաշնակցութեա՛ն:

Եւ այժմ առիթ կը տրուի իրեն, որ, համաձայն այս նոյն կուսակցութեան վերին մարմինի կոչին, ան վերադառնայ շարքերը՝ առանց զղջումնագրի: Առանց այլևայլի... Եթէ ի հարկէ չէր հակադրուած այդ նոյն տեսլականին:

Այս թեմայով պիտի ըլլար յօդուածս, սակայն սեպտեմբեր 27-ին վերսկսած պատերազմն ու այն ահաւոր գինը, որ հայ ազգը վճարեց ու կը վճարէ պահպանելու համար իր արժանապատուութիւնն ու իր հայրենիքի սահմանները, զիս բերին այն համոզումին, որ համաներումէն առաջ իւրաքանչիւրին համար ներման պահ մը պէտք է ըլլայ: Ինքնաներման:

Այո՛, ինքնաներման:

Այսինքն՝ հեռացած կամ հեռացուած ընկերը պիտի նայի հայելիին մէջ, պիտի նայի իր աչքերուն մէջ և հարց տայ ինքն իրեն, թէ ազգի ճգնաժամի այս օրերուն, այս տարիներուն որքան կրնայ ներել ինքն իրեն այն իրավիճակին համար՝ հեռու մնալով, մասնակից չըլլալով, որուն մէջ գտնուած է կարճ կամ երկար ատենէ ի վեր, չըսելու համար այն մեղքին համար, այն մեղանչումին՝ ինքն իր հանդէպ ամէնէն առաջ:

Կասկած չկայ մտքիս մէջ: Հեռացուած կամ հեռացած այդ անձերը ես իմ ընկերները կը նկատեմ,

իմ հարազատները այնքան ատեն, քանի դեռ իրենց կուրծքին տակ ազգին ցաւերով մղկտացող սիրտ մը կայ, այնքան ատեն, քանի դեռ այս կամ այն ձևով տակաւին անոնք կ'ուզեն, կը ջանան ու կը յաջողին ծառայել ազգին: Ի վերջոյ կուսակցութիւնը չէ՞ միակ ճամբան այդ ծառայութեան:

Բայց...

Այս «բայց»-էն առաջ կ'ուզեմ հարց տալ նաև, թէ բոլոր անոնք, ինծի ծանօթ ու սիրելի, մտերիմ այլ անձեր, որոնք տարբեր վայրերու մէջ, տարբեր կազմակերպութիւններու ճամբով աշխատող կամ առանձին գործող՝ որպէս միայնակ պայքարող սըր Լանսըլոներ, նոյն այդ հեռացուած կամ հեռացած ընկերներուն վիճակին մէջ չե՞ն գտնուիր, անոնք, որոնք երբեք չեն միացած ՀՅԴ շարքերուն՝ ըլլալով հանդերձ յաճախ անոր համակիրները կամ նոյնիսկ գործակիցները, հեռու մնացած են, հաւանաբար վերը նշուած պատճառներով (երբեմն ալ՝ պատրուակներով): Անոնք ալ երիտասարդ չե՞ն եղած, ազգին ծառայելը սրբազան նպատակ չե՞ն դաւանած: Ինչո՞ւ չեն առած նաև միւս քայլը, չեն մտած շարքերը:

Եւ չեն երդուած նաև «կեանքիս գնով...»:

Ահա՛ հոս է, որ կը միջամտէ այդ «բայց»-ը:

Սեպտեմբեր 27-էն ի վեր մեր լեռներու մատոյցներուն մեր տղաքը՝ ազգի զաւակները, կուսակցական թէ ոչ կուսակցական այդ ֆետայիները, իրենց կեանքի գնով երկիր կը պահեն: Պատիւ կը պահեն: Ազգի պատիւը բարձր կը պահեն:

Համաներումէն առաջ դո՛ւք, սիրելի՛ ընկերներ, դո՛ւք ձեզի ներեցէք, եթէ կրնաք, և... վերադարձէ՛ք ճակատ:

Ճակատ եկէ՛ք նաև դո՛ւք, երիտասարդնե՛ր և ոչ երիտասարդնե՛ր, նոր ձեր երդումը տալու... ■

Նոյեմբեր 2020թ.

Արգիշտի Գևորգյան
ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միության անդամ, կամավորական

Պատերազմն այն քննությունն է, որը տալիս են բոլոր ազգերը: Դրանով որոշվում է՝ կամ դու շարունակում ես ազատ ապրել ու արարել, կամ դու իրավունք չունես ապրելու:

Պատերազմի գինը զոհերն են, ու, հա՛, մենք պիտի հասկանանք, որ մեր լավագույններն են զոհվելու, մեր հարազատները, եղբայրներն ու հայրերը, բայց դա է գինը: Այլ տարբերակ չկա. կամ պատրաստվում ենք մեռնելու հանուն մեր սիրելիների, կամ մեռնում ենք բոլորս: Գիծը գծված է, քննությունը՝ սկսված:

Ուրեմն բոլորս զինվորագրվում ենք, բոլորս՝ առանց բացառության, դեպի ճակատ կամ ճակատի համար: Փախչողներն ու անտարբերներն ընտրում են գոյությունը քարշ տալու, սողեսող ապրելու տարբերակը:

Ոչ մեկը թող չփորձի մարդ հետ պահել ճակատ մեկնելուց, ոչ մեկը թող չփորձի բարձրացված բռունցքը իջեցնել, ոչ մեկը թող չփորձի մեկնողին թաց աչքերով ճանապարհել ճակատ:

Երբ քննությունն ավարտվի, տղերքը հետ են գալու, ապրելու ու ապրեցնելու են, և մտածեք այնպես ապրել էս հատվածը, որ կարողանաք էդ տղերքի աչքերին նայել, այլապես իրենց առաջ էլ եք սողալու:

ՀԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ

Այլ տարբերակ չկա:

Արցախ
27.10.2020

ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՇՈՒՇԻԻ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ՎԻՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԴՐՕՇԱԿ